Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՄԻՔԱՅԵԼ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԷՋԵՐ ԱՐՑԱԽՈՒՄ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՄԻՔԱՅԵԼ ՎԱՉԱԳԱՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ուսուցիչ - մեթոդիստ, տարվա լավագույն ուսուցիչ,
տարվա լավագույն մարզիչ, 20-րդ
դարի լավագույն մանկավարժ,
հանրապետական կարգի մրցավար,
ՀՀ ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատող,
ԼՂՀ ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործիչ

ՄԻՔԱՅԵԼ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԷՋԵՐ ԱՐՑԱԽՈՒՄ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ստեփանակերտ
«Դիզակ պլյուս» հրատարակչություն
2009

90706386
ԼՂՀ Ք. Ստեփանակերտ
«Մեսրոպ Մաշտոց Համալսարան»
Սահմանափակ
պատասխանատվությամբ
ընկերություն
НКР г. Степанакерт
Общество с ограниченной
ответственностью
«Университет Месропа Маштоца»
NKR Stepanakert
Mesrop Mashtots University
№ 10794
07 11 2018թ.

Երաշխավորված է հրատարակության ԱրՊՀ գիտական խորհրդի որոշմամբ (10.06.09թ.)

ՀՏԴ 796 / 799 (091)
ԳՄԴ 75
Բ 242

Բաղդասարյան Միքայել
Բ 242 Էջեր Արցախում սպորտի զարգացման պատմությունից. – Ստեփանակերտ: Դիզակ պլյուս, 2009. 176 էջ:

Գիրքը համառոտակի շարադրանքն է այն նվաճումների, որոնք ձեռք են բերել Արցախի մարզիկները հանրապետական, Եվրոպայի, աշխարհի առաջնություններում ու չեմպիոնատներում, խոշոր մասշտաբի այլ մրցումներում: Այն միաժամանակ ընթերցողին ներկայացնում է Արցախում տարածված մարզաձեւերի պատմությունը, ծանոթացնում այն մարզիչ-մասնագետներին, ովքեր նկատելի ավանդ ունեն հայրենական սպորտի մասսայականացման ու զարգացման գործում:

Գիրքը նախատեսված է ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների, դասախոսների, դպրոցական միջին եւ բարձր տարիքի աշակերտների, ինչպես նաեւ ուսանողների համար:

ԳՄԴ 75

ISBN 978-9939-800-64-6 © Միքայել Բաղդասարյան, 2009 թ.

ԿԱՐԾԻՔՆԵՐ

Միքայել Բաղդասարյանի «Էջեր Արցախում սպորտի զարգացման պատմությունից» աշխատանքի վերաբերյալ

Աշխատանքը գրված է ամենայն բարեխղճությամբ, համառոտ ձեւով տրված է նախաբանը: Այնուհետեւ հակիրճ ներկայացված է աթլետիկայի, բասկետբոլի, վոլեյբոլի, հանդբոլի, սեղանի թենիսի, ֆուտբոլի, ձյուդոյի, ծանրամարտի, մարմնամարզության, հրաձգության, շախմատի, շաշկու, տուրիզմի, բռնցքամարտի, ըմբշամարտի ստեղծման առաջին հաջողությունների մասին:

Իհարկե, գիտենք, որ հին Հայաստանում (բնականաբար նաեւ Արցախում) կազմակերպել եւ անցկացրել են տոնախմբություններ, Նավասարդյան խաղեր, ոչ սպորտային ձեւերից անգամ մրցումներ:

Հեղինակը նախընտրել է գրառել 50-ական թվականներից մինչեւ մեր օրերը: Այնուամենայնիվ, սույն աշխատանքը համալրում է այն բացը, որ պիտի լրացնի սպորտի զարգացումը Հայաստանում: Հասկանալի է, որ անգամ ԽՍՀՄ ծաղկուն շրջանում Արցախի ֆինանսավորումը սահմանափակ էր, մրցակցական փորձը՝ պակաս:

Հուսանք, որ հետայսու թե՛ Համահայկական, թե՛ առանձին մարզաձեւերի առաջնություններում միշտ կտեսնենք արցախյան պատվիրակություններին:

Որպես առաջին ծիծեռնակ՝ գիրքն արժե տպագրել:

Միքայել Իսպիրյան
ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական կոմիտեի նախագահի տեղակալ, ՀՀ Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործիչ, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր:

* * *

Ուշագրավ աշխատանք է նախաձեռնել հեղինակը: Այս դեպքում է, որ ասում են՝ նախադեպը չունեցող... Քանի որ ավելի քան տասը մարզաձեւ է ընդգրկված՝ հիմնադիր մարզիչներով, առաջին թիմերով, մրցումների կազմակերպմամբ, արդյունքների ամփոփումով եւ այլն, բնական է, որ թերություններ, բացթողումներ կլինեն: Հեղինակի անհանգստությունը կիսում եմ, սակայն ինչքան էլ որ հաջողվել է կորստից փրկել՝ այս կամ այն մարզաձեւի հիմնադիրների, նրանց գործունեության վերլուծությունը, մեծ նվաճում է: Ով էլ որ գրեր սույն աշխատանքը, դժվար թե ամբողջական ստացվեր:

Ընդունենք Միքայել Բաղդասարյանի սույն ուսումնասիրությունը որպես առաջին տարբերակ:

Ուսանելի գործ է կատարված, արժանի է տպագրության:

Ֆրունզ Գաբրիելի Ղազարյան

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ուսումնական հարցերով պրոռեկտոր, Մգ դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս

* * *

Հեղինակին ճանաչում եմ դեռեւս ուսանողական տարիներից: Ավելի քան կես-դարյա ժամանակաընթացքում, հատկապես Արցախում, շատ ջրեր են հոսել: Միայն այն հանգամանքը, որ պատմական կարճ ժամանակահատվածում հայկական Շուշին առանց կրակոցների դարձրել էին 100%-անոց ադրբեջանական, իսկ այսօր էլ, փառք Աստծո, հայկական, շատ բանի մասին է խոսում:

Իսկ ընդունակ եւ խելամիտ գործընկերները Ստեփանակերտում եւ Արցախի շրջաններում շատ գործեր են կատարել: Բայց, ինչպես Հրանտ Շահինյանն էր տիպիկ բնորոշել, արցախցի մարզիկը մի

քանի գլուխ ավելի բարձր պետք է լիներ, որ ճանապարհ ունենար դեպի Մեծ սպորտ: Ես պատկերացնում եմ, որ եթե 18-20-ական թնականներից Արցախը անկախ լիներ կամ Հայաստանի կազմում, անպայման օլիմպիական չեմպիոն էլ կտար:

Ինչ վերաբերում է սպորտային գրականությանն ու գիտությանը, ապա գերազանց գնահատականներով ավարտած բուհական իմ շատ գործընկերներ վաղուց կարող էին գիտական աստիճաններ ունենալ:

Իմ սեղանին է Միքայել Բաղդասարյանի «Էջեր Արցախում սպորտի զարգացման պատմությունից» աշխատանքը: Շնորհակալ նախաձեռնություն է: Դեռ վաղուց պետք է գրվեր այս մասին, սակայն պատճառը բնավ հեղինակի կամ հեղինակների անտարբերությունը չէ այս հույժ կարեւոր աշխատանքի հանդեպ: Այստեղ խնդիրն այլ է: Չենք կամենում խորանալ ցավոտ հարցի մեջ, ցանկանում ենք նշել, որ այսօր էլ գործն արդիական է, ողջունելի: Հեղինակը վերջաբանում մասնավորապես նշում է. «Ներկայացվող համեստ աշխատանքը անցյալի եւ ներկայի համար գուցե առանձին արժեք չներկայացնի, սակայն հետաքրքրություն կառաջացնի արցախյան հասարակության շրջանում»:

Ոչ միայն հասարակության շրջանում, այլեւ հաջորդ սերունդները, հատկապես մասնագետները, ուսումնասիրելու են արցախյան սպորտի պատմությունը, նախքան, համոզված եմ, իրենց ձեռքով գրելիք ոսկե էջերը: Այն հանգամանքը, որ Արցախից դուրս եկած շախմատիստը հասնում է գրոսմայստերի աստիճանի, իսկ ըմբիշը՝ սպորտի վաստակավոր վարպետի, կամ մարզիչը մեծ ճանաչման է արժանանում Հայաստանում, Ռուսաստանում կամ այլուր, շատ բանի մասին է խոսում:

Մեր խորին համոզմամբ սույն աշխատանքը շատ կարեւոր է հենց նրա համար, որ իր տեսակի մեջ առաջինն է: Հետագայում լրացումներ, նոր մարզաձեւերի ավելացումներ կլինեն թե՛ հեղինակի եւ թե՛ այլ հետազոտողների կողմից: Կարեւորը հաջող սկիզբն է, որ հաջողվել է Միքայել Բաղդասարյանին:

Աշխատանքն արժանի է տպագրության:

Վալտեր Այդինյան

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ-մեթոդիստ, Հայաստանի լրագրողների միության անդամ

* * *

Յուրաքանչյուր աշխատանք, որը լուսաբանում է Արցախի մշակույթի եւ սպորտի պատմությունը, արժանի է լուրջ ուշադրության: Միքայել Բաղդասարյանի գրքույկը վերաբերում է Արցախի ոչ վաղ անցյալի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի հարցերին, որոնց հետ ծանոթանալիս ակամայից ուզում ես շատ բան իմանալ: Հեղինակը ի մի է բերել մեկուկես տասնյակից ավելի մարզաձեւերի պատմությունը, դրանց զարգացման ընթացքը՝ չմոռանալով նաեւ մեկ առ մեկ նշել այդ պատմությունը կերտողների անունները: Սա բավականին լուրջ, հայրենանվեր եւ շնորհակալ գործ է, որը պետք է ենթադրել՝ կունենա իր շարունակությունը:

Հետեւելով այս ուսումնասիրության ընթացքին՝ ընթերցողը կհամոզվի, որ Արցախն իր ժամանակին՝ որպես ինքնավար միավորում, մշակույթից բացի պահպանել է իր ազգային ինքնությունը նաեւ սպորտում: Ցանկալի է աշխատանքի սկզբում տեսնել ավելի ծավալուն նախաբան, որտեղ թեկուզ համառոտակի, կնշվի Արցախի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի նախկին՝ մինչեւ ազատագրումը եւ այսօրվա վիճակը: Վերջինս կարելի է կապել նաեւ մարզիկ-ազատամարտիկների եւ, հատկապես, զոհված ազատամարտիկների հետ: Ճիշտ կլինի նաեւ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի նվիրյալների ցանկը, ինչպես նաեւ որոշ վիճակագրական այլ տվյալներ զետեղել վերջում:

Նման աշխատանքը, որին ձեռնամուխ է եղել հեղինակը, արժանի է դրվատանքի եւ պետք է հրատարակվի բավարար տպաքանակով:

Բաբայան Կ.Գ.
ՀՀ վաստակավոր մարզիչ, Երեւանի պետական համալսարանի ֆիզիկական դաստիարակության եւ սպորտի ամբիոնի պրոֆեսոր

ՆԱԽԱԲԱՆ

Հնագույն ժամանակներից ֆիզիկական վարժությունները, մարզական բնույթի մենամարտը եւ խաղերը լայն տարածում են ունեցել Հայաստանում, ինչպես նաեւ պատմական Հայաստանի Արցախ նահանգում:

Ազգային վարժություններից մասսայականություն են վայելել ձիավարժությունը, գնդակախաղերը, բռնցքամարտը, ըմբշամարտը, նետաձգությունը, նիզակի նետումները:

Ֆիզիկական վարժությունների եւ մարզումների շնորհիվ երիտասարդներն աչքի են ընկել տարբեր ազգային խաղերում, ոմանք էլ մասնակցել են Հին Հունաստանի օլիմպիական խաղերին: Պատմական աղբյուրներից հայտնի է, որ Վարազդատ Արշակունի հայոց թագավորը հաղթել է 393-ի օլիմպիական խաղերում:

Պատմական փաստերը վկայում են, որ մարզամշակութային տոնախմբությունները, մարզական խաղերը իրենց բովանդակությամբ ու կազմակերպման տեսանկյունից առաջնակարգ տեղ ունեին նաեւ Լեռնային Ղարաբաղում:

Մինչեւ XX դարը, սակայն, երիտասարդության ֆիզդաստիարակության գործը կազմակերպված բնույթ է կրել միայն առանձին ուսումնական հաստատություններում՝ Մոսկվայի Լազարյան ճեմարան, Երեւանի թեմական դպրոց, Սանասարյան վարժարան:

Ֆիզկուլտուրայի եւ սպորտի իսկական վերելք ԼՂ-ում սկսվել է խորհրդային կարգերի հաստատումից հետո:

Ֆիզիկական կուլտուրան եւ սպորտը, իր ինքնատիպ բովանդակությամբ դարեր շարունակ արմատավորվելով ժողովրդի կյանքում ու կենցաղում, սերտորեն կապվել ու զուգորդվել է հասունացող սերնդի ֆիզիկական, աշխատանքային եւ մարտական դաստիարակության խնդիրների հետ:

Հատկապես մեծ է եղել նրա դերը Արցախում հոգեֆիզիկական ակտիվության բարձրացման գործում:

Մեր նպատակն է՝ ներկայացնել Արցախում սպորտի զարգացման համառոտ պատմությունը ըստ մարզաձեւերի, կոնկրետ փաստերով ցույց տալ նրանց ընդհանուր պատկերը: Դա կարող է օժանդակ դեր խաղալ աճող սերնդի ինչպես ֆիզիկական, այնպես էլ

ռազմահայրենասիրական դաստիարակության գործում, որոշակի չափով հարստացնել երկրամասի համընդհանուր ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պատմության էջերը՝ որպես մեծ սպորտի բաղկացուցիչ մաս՝ ընդգծելով նրա անչափ բարերար ազդեցությունը, առաջին հերթին՝ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վրա:

Դեռեւս 1933թ. Ստեփանակերտում ստեղծվել է ֆիզկուլտուրայի առաջին խմբակը /մարմնամարզությունից/:

Ֆիզիկական կուլտուրայի տարածմանը մեծապես նպաստել են Շուշիում եւ Ստեփանակերտում, ապա նաեւ այլ բնակավայրերում ստեղծված պատանի մարզական կազմակերպությունները:

1933թ. օգոստոսին անց է կացվել մարզական անդրանիկ առաջնությունը:

Ղարաբաղում ֆիզկուլտուրայի եւ սպորտի հետագա զարգացումը կապված է կամավոր մարզական ընկերությունների / «Սպարտակ», «Դինամո», «Բուրեվեստնիկ»/ ստեղծման հետ: 1934թ. մայիսին տեղի է ունեցել առաջին սպարտակիադան:

Ֆիզկուլտուրայի մասսայականությունը նպաստել է ղարաբաղցի մարզիկների վարպետության աճին: Հետագա տարիների ընթացքում նրանք հանրապետական եւ միջազգային տարբեր մրցումներում գրավել են մրցանակային տեղեր եւ սահմանել ռեկորդներ:

ԼՂԻՄ-ում ֆիզիկական դաստիարակության հետագա զարգացման հիմքը դարձավ 1931-ին հաստատված «Պատրաստ աշխատանքի եւ պաշտպանության»/ՊԱՊ/ համամիութենական ֆիզկուլտուրային համալիրը:

Ֆիզկուլտուրայի եւ սպորտի առաջընթացին նպաստել է նաեւ 1937-ին ընդունված համամիութենական միասնական, մարզական դասակարգումը, 1972-ին հաստատված ՊԱՊ-ի նոր համալիրը:

1930-ական թթ. ԼՂԻՄ-ում սկսել են գործել կամավոր մարզական ընկերություններ:

Մարզի արտադրական ձեռնարկություններում, հիմնարկություններում, դպրոցներում գործել են ֆիզկուլտուրային կոլեկտիվներ, առավել խոշորներում՝ նաեւ մարզական ակումբներ:

Մարզական սեկցիաներ, խմբեր ու ակումբներ են ստեղծվել

ԴՕՍԱԱՖ-ի սկզբնական կազմակերպություններին կից: 2006թ. դրությամբ ԼՂՀ-ում գործում են մանկապատանեկան 10 մարզադպրոց՝ 20 մարզաձեւերից /210 խմբեր՝ 3000-ից ավելի մարզիկների ընդգրկմամբ/, որտեղ աշխատում են 135 մարզիչ-մանկավարժներ:

Ֆիզկուլտուրայի դասավանդման նպատակով կադրեր է պատրաստում ԱրՊՀ-ն: Ֆիզկուլտուրայի եւ սպորտի բնագավառներում գիտահետազոտական աշխատանքներ են տարվում համալսարանի ՆՁ եւ ՖՊ ամբիոնում:

Ֆիզկուլտուրայով եւ սպորտով զբաղվողների նկատմամբ բժշկական հսկողությունն իրականացնում են բժշկաֆիզկուլտուրային հանրապետական դիսպանսերը, քաղաքներում եւ շրջաններում՝ մարզական բժիշկները:

Այսօրվա դրությամբ ԼՂՀ-ում կա 1 ստադիոն, 9 ֆուտբոլի դաշտ, բասկետբոլի 150, վոլեյբոլի 250, հանդբոլի 10 հրապարակներ, 8 հրաձգարան, 50 մարզադահլիճ:

Հանրապետությունում անցկացվող մարզական խոշոր միջոցառումներն են՝ ՀՀ տարբեր մարզաձեւերի բարձրագույն խմբի առաջնություններ, դպրոցականների սպարտակիադաներ, զոհված մարզիկների հիշատակին նվիրված տարբեր մարզաձեւերից հուշամրցաշարեր, ուսուցիչների գարնանային մարզական խաղեր, միջազգային մրցումներ, մանկական մասսայական «Հուսո մեկնարկներ», «Կաշվե գնդակ» /ֆուտբոլի/, «Սպիտակ նավակ» /շախմատ/, «Փայլակ» եւ «Արծվիկ» ռազմամարզական խաղերը:

Հեռուստատեսությունը եւ ռադիոն, ինչպես նաեւ զանգվածային լրատվության այլ միջոցներ նպաստում են ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պրոպագանդմանը, հանրապետական եւ այլ մասշտաբի մրցումների լուսաբանմանը:

ՀՀ եւ միջազգային մրցասպարեզներում ԼՂՀ-ի մարզական պատիվը հաջողությամբ են պաշտպանել եւ պաշտպանում են աթլետները, ըմբիշները /սամբիստները/, սեղանի թենիսիստները, շախմատիստները, ֆուտբոլիստները, բասկետբոլիստուհիները:

Հանրապետության մի շարք մարզիկներ ՀՀ հավաքականի կազմում մասնակցել ու մասնակցում են միջազգային մրցումների եւ գրավում մրցանակային տեղեր՝ պարգեւատրվելով մեդալներով ու այլ թանկարժեք նվերներով:

Ֆիզկուլտուրայի եւ սպորտի ասպարեզում ունեցած ծառայությունների համար հանրապետության աշխատողներց 4-ը արժանացել են ՀՀ վաստակավոր մարզիչի, 25-ը՝սպորտի, 10-ը՝ ՀՀ ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատողի, 3-ը վաստակավոր գործչի կոչման:

Մշակվել է ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի զարգացման 2005-2010թթ. հեռանկարային ծրագիր:

2003թ. ընդունվել է ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը:

ԼՂՀ ԿԱ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐ

ՋԱԼԱԼ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Ջալալ Գալստյանը ծնվել է 1909թ. նոյեմբերի 15-ին Ստեփանակերտի շրջանի Կրկժան գյուղում: Մարդու կենսագրությունը հարուստ է ոչ թե տարիների պարզ գումարով: Աշխատանքն անցած տարածության ամփոփումն ու իմաստավորումն է:

Ջալալ Գալստյանը իր ամբողջ կյանքը նվիրել է Արցախում ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի տարածմանը եւ զարգացմանը:

1929թ. Ջ.Գալստյանը նշանակվում է Դիզակի կոմերիտշրջկոմի կազմիրահանգչական բաժնի վարիչ, այնուհետեւ սովորում է երեկոյան դպրոցում, ուսումը շարունակում կուսդպրոցում:

1938-ին Ջ. Գալստյանը նշանակվել է ֆիզկուլտուրայի եւ սպորտի ԼՂ մարզային կոմիտեի նախագահ:

- Սպորտը եռանդի գործ է,- ասում էր նա,- պիտի եռանդ ունենաս, որպեսզի ոգեւորես մարդկանց:

Շաբաթօրյակների միջոցով ստեղծել է մի շարք խաղահրապարակներ, հետեւել մրցավարներին, որ լինեն անաչառ: Նա 14 տարի

(մինչեւ 1951թ. ներառյալ) աշխատել է մարզի սպորտկոմիտեի նախագահի պաշտոնում:

Այդ տարիներին մարզը տվել է մի շարք հիանալի մարզիկներ, ճանաչված մասնագետներ՝ ազատ ըմբշամարտի գծով Ադրբեջանի առաջին չեմպիոն Արսեն Աթանեսյան, ըմբիշներ՝ Վազգեն Բալասանյան, Գուրգեն Բալայան, մարմնամարզուհի Նորա Աղամյան, ֆուտբոլիստներ՝ Աշոտ Բալասանյան, Երվանդ Գրիգորյան, հետագայում վաստակավոր մանկավարժներ՝ Նոբել Ավագյան, Ալբերտ Գրիգորյան եւ այլք:

1951թ. նա նշանակվեց «Մահսուլ» կամավոր սպորտընկերության նախագահ: Չնայած տարիներն իրենց կնիքն էին դրել նրա դեմքին՝ սակայն մնացել է նույն եռանդում մարդը՝ երիտասարդների անկաշառ բարեկամը:

Ջ.Խ. Գալստյանը նվիրված աշխատանքի համար պարգեւատրվել է մեդալներով ու կրծքանշաններով, 30-ից ավելի պատվոգրերով: Նա կյանքին հրաժեշտ տվեց 1988թ.հունվարի 4-ին:

ՇՄԱՎՈՆ ԱՎԱՆԵՍԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

Նախապատերազմյան ժամանակաշրջանի Լեռնային Ղարաբաղի ֆուտբոլի հավաքականի անդամ, 1950-1951թթ. մարզֆիզկուլտկոմիտեի նախագահ Շ.Ա.Մուսայելյանը ծնվել է Ասկերանի շրջանի Շոշ գյուղում: 1937թ. ավարտելով Շոշի յոթամյա դպրոցը՝ տեղափոխվում է Բաքու, ուսումը շարունակում № 8 միջն. դպրոցում:

Բաքվում սովորելու ժամանակ ակտիվորեն մասնակցում էր դպրոցի ֆիզիկական կուլտուրայի կազմակերպչական աշխատանքներին, մարզական միջոցառումներին, հատկապես զբաղվել է իր սիրած մարզաձեւով՝ ֆուտբոլով: 1935-1940թթ. Բաքու քաղաքի ֆուտբոլի առաջնություններին թույլ էին տալիս մասնակցելու մարզական կամավոր այն ընկերություններին (ՄԿԸ), որոնք ներկայացնում էին չորս

ֆուտբոլային թիմեր, առաջինը եւ 2-րդը՝ մեծահասակների, իսկ 3-րդը եւ 4-րդը՝ պատանի դպրոցականների: Նման նորույթը ստիպեց ՄԿԸ շեֆության կարգով վերցնել քաղաքի միջն. դպրոցներից համապատասխան տարիքի պատանի դպրոցականների՝ 3-4-րդ թիմերը հավաքագրելու նպատակով:

№ 8 դպրոցի շեֆությունը վերցրեց Ադրբեջանի երթուղային «Լոկոմոտիվ» ՄԿԸ: Այսպիսով, Շ. Մուսայելյանը ընդգրկվում է 3-րդ խմբի կազմում: 1938-1940թթ. մեծ առաջընթաց ունեցավ, քանզի շաբաթական երեք անգամ մարզվում էր քաղաքի «Լոկոմոտիվ» մարզադաշտում՝ նախօրոք պլանավորված թեմատիկ պլանով: Ամեն տարի նա ամառային արձակուրդներին Ղարաբաղ՝ հայրենի Շոշ գյուղ էր գալիս հանգստանալու: Որպեսզի մարզավիճակը պահպանի, գնում էր Ստեփանակերտի քաղաքային մարզադաշտ՝ տեղի ֆուտբոլիստների հետ մարզվելու: 1940թ. դպրոցն ավարտելուց հետո վերադառնում է գյուղ, եւ մի օր Ստեփանակերտի մարզադաշտում պարապելու ժամանակ Ստեփանակերտի հավաքականի մարզիչն առաջարկում է խաղալ հավաքականում: Չանցած մեկ շաբաթ՝ ֆուտբոլ, վոլեյբոլ մարզաձեւերով ընկերական խաղերի են մեկնում Գորիս: Այդ տարիներին լավ համբավ ուներ եւ բարձր մարզավիճակում էր գտնվում Ստեփանակերտի ֆուտբոլի հավաքականը, որի կազմում հանդես էին գալիս ճանաչված ֆուտբոլիստ եղբայրներ՝ Սարգիս, Հակոբ Պետրոսյանները, Արմո Ավանեսյանը, Սերգեյ Հարությունյանը, Սաշա Ալեքսանյանը, Սուրեն Խաչատրյանը եւ շատ ուրիշներ:

1940թ. ամռանը ֆուտբոլի, վոլեյբոլի տղամարդկանց թիմերը մեկնեցին Գորիս՝ ընկերական խաղերի: Որպես ներկայացուցիչ եւ ղեկավար նրանց միացան Արշակ Խոջաեւը՝ Ղարմետաքսկոմբինատի տնօրեն, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր եւ Սյոմա Բարխուդարյանը՝ սպորտբաժնի պետը, իսկ Գորիս մեկնողներին գործուղեց մարզֆիզկուլտկոմիտեի նախագահ Զալալ Խաչատուրի Գալստյանը, ում հետագայում փոխարինեց Շ. Մուսայելյանը: (Ստեփանակերտի վոլեյբոլի թիմը պարտվեց, իսկ ֆուտբոլի թիմը հաղթեց):

ՄԻՔԱՅԵԼ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿԱՐԱԲԵԿՈՎ

Ծնվել է 1915թ. Ուզբեկստանի Կոկանդ քաղաքում:1933թ. ավարտելով Կիրովաբադի /Գանձակ/ երկաթուղային ուսումնարանը՝ սովորել է Ադրբեջանի պետական ֆիզկուլտուրայի ինստիտուտում: Աշխատանքային գործունեությունն սկսել է Կիրովաբադում՝ որպես բանվոր, ապա, տեղափոխվելով Ստեփանակերտ, մի քանի տարի աշխատել է մարզի ֆիզկուլտուրայի եւ սպորտի կազմակերպություններում:

Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

1954թ. Մոսկվայում ավարտել է ղեկավարչական աշխատողների մեկ տարվա դասընթացներ: 1951-56թթ. աշխատել է մարզգործկոմին առընթեր ֆիզկուլտուրայի եւ սպորտի կոմիտեի նախագահի պաշտոնում: Մարզական աշխատանքները կազմակերպում ու ղեկավարում էր բնական մեծ օժտվածությամբ: Նրա ջանքերով էր, որ այդ տարիներին կազմակերպվեց եւ հետագայում ամրապնդվեց ու զարգացավ Ղարաբաղ-Զանգեզուր /Գորիս/ եղբայրական անմոռաց բարեկամությունը:

Նա աշխատանքում աչքի է ընկել իր ձեռներեցությամբ, սկզբունքայնությամբ, գործընկերների նկատմամբ մեծ հոգատարությամբ: Նրա ծառայությունները նշվել են կուսակցական մի շարք պարգեւներով:

Ուշագրավ է, որ Կարաբեկովների ընտանիքից հինգ եղբայրներ (Պյոտրը, Պավելը, Միքայելը, Նիկոլայը եւ Գրիգորին), մասնակցել են Մեծ Հայրենականին, իսկ Պավելը, Նիկոլայը եւ Գրիգորին զոհվել են պատերազմում: Նրանց ընտանիքում շախմատը շատ հարգի էր: Պատահական չէ, որ 1935-36թթ. շախմատի Անդրկովկասի ընտանեկան առաջնությունում նրանք գրավել են առաջին տեղը, իսկ նույն մարզաձեւի համամիութենական առաջնությունում՝ երկրորդ պատվավոր տեղը:

ԱՊԻԿՈՆ ԹԵՎԱՆԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ

1956-1965թթ. ԼՂԻՄ սպորտկոմիտեի աշխատանքները ղեկավարել է Ապիկոն Թեւանի Ներսիսյանը եւ միաժամանակ հեռակա կարգով ավարտել Բաքվի ՖԿՊԻ-ն: Այդ տարիների ընթացքում ավելացավ մարզաձեւերի եւ պարապողների թիվը՝ վոլեյբոլ, բասկետբոլ (աղջիկներ), աթլետիկա եւ ծանր աթլետիկա: Մարզի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի կոմիտեի նախագահի պաշտոնը վարել է նաեւ 1972-1986թթ.: Միասին վերցրած Ա.Թ. Ներսիսյանը մարզի սպորտկոմիտեի աշխատանքները ղեկավարել է քառորդ դար, որը վկայում է նրա կազմակերպչական ունակությունների մասին:

ՎԱՉԱԳԱՆ ՍԵԴՐԱԿԻ ՕՍԻՊՅԱՆ

1965-1967թթ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի կոմիտեի աշխատանքները ղեկավարել է մարզի՝ ժամանակի լավագույն ֆուտբոլիստ Վաչագան Սեդրակի Օսիպյանը: Հեռակա կարգով ստացել է բարձրագույն մասնագիտական կրթություն: Այդ տարիներին ավելացել է լավագույն մասնագետների քանակը, աշխուժացել են սպորտային աշխատանքները ԿՄԸ եւ ՄՊՄԴ-ներում:



ԱԼԲԵՐՏ ԱՐՏԱՇԵՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ծնվել է 1928թ. մայիսի 16-ին Խնուշինակ գյուղում:

1949թ. ավարտելով Ստեփանակերտի №2 միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Երեւանի ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը, որն ավարտել է 1953թ.:

1950-53թթ., ինստիտուտում սովորելուն զուգընթաց, աշխատել է Երեւանի ծխախոտի ֆաբրիկայի սպորտի մարզիչի եւ «Լոկոմոտիվ» ԿՄԸ ֆուտբոլի մարզիչի պաշտոնում:

Ինստիտուտն ավարտելուց հետո վերադառնում է Ստեփանակերտ եւ աշխատանքի անցնում № 2 միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ:

1965-67թթ. աշխատել է ԼՂ կրթության մարզային բաժնի դպրոցական տեսչի պաշտոնում:

1967թ. նշանակվել է ԼՂ աշխատողների պատգամավորների մարզային խորհրդի գործկոմին առընթեր ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի կոմիտեի նախագահ: Այդ պաշտոնում աշխատել է մինչեւ 1971թ.:

Այնուհետեւ մինչեւ 2000թ. աշխատել է № 1 միջն. դպրոցում՝ որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ, ապա՝ ժողկրթության մարզային բաժնի ուսուցիչների որակավորման ինստիտուտի մեթոդկաբինետի վարիչի, ՀՀ կրթության նախարարության ձյուդոյի հանրապետական մանկապատանեկան մարզադպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի ուսումնական մասի բաժնի վարիչի, ԼՂՀ սպորտվարչությանը կից մանկապատանեկան մարզադպրոցի մեթոդիստի պաշտոններում:

2001թ. աշխատել է շախմատի մանկապատանեկան դպրոցի մեթոդիստի պաշտոնում:

Երկարամյա եւ բեղնավոր աշխատանքի համար Ա.Ա.Գրիգորյանին 2002թ. շնորհվել է ՀՀ եւ ԼՂՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատողի կոչում:

ՀՐԱՆՏ ՄԻՔԱՅԵԼԻ ՀԱՅՐԻՅԱՆ

Համեստ, ազնիվ, բարեխիղճ, համբերատար, անընկճելի բնավորության տեր մարդ: Մարդ, ով իր կյանքն ի սպաս է դրել հանուն մարդ արարածի երջանկության: Մարդ, ով ցանկացած աշխատանք կատարում էր վառվելով, ով չէր կարող անտարբեր լինել նույնիսկ անծանոթի վիշտ ու ցավին:

Ծնվել է ԼՂՀ գողտրիկ անկյուններից մեկում՝ Ասկերանի շրջանի Սղնախ գյուղում 1940թ. սեպտեմբերի 5-ին: Հրանտը ճաշակել է որբության դառնությունները: Հայրենական մեծ պատերազմից չվերադարձավ հայրը, իսկ մայրը կյանքից հեռացավ, երբ որդին երեք տարեկան էլ չկար: Այնուհանդերձ, նա իր աշխատասիրությամբ ու աչքաբացությամբ կարողացավ հաղթահարել բազում դժվարություններ, ավարտել հարազատ գյուղի յոթամյա դպրոցը, ապա ընդունվել Շուշիի մանկավարժական ուսումնարանը ու, ավարտելով այն, անցնել կյանքի արգասավոր ուղի:

1960-1963թթ. Հայրիյանը ծառայել է խորհրդային բանակում: Բարձրագույն կրթությունն ստացել է Երեւանում՝ հեռակա կարգով ավարտելով ֆիզկուլտուրայի պետական ինստիտուտը:

Աշխատանքային կենսագրությունն սկսել է Ասկերանի շրջանի Բաղարայի, այնուհետեւ Նորագյուղի միջնակարգ դպրոցներում՝ որպես ուսուցիչ:

Զորացրվելուց հետո նա անմնացորդ նվիրումով անընդհատ աշխատանքի մեջ էր մարզի տարբեր շրջաններում: 1964-1977թթ. աշխատել է կոմերիտմարզկոմի հրահանգչի, ագիտացիայի ու պրոպագանդայի բաժնի վարիչի, կոմերիտմիության Ստեփանակերտի քաղկոմի կազմակերպչական բաժնի վարիչի, ԼՂԻՄ ֆիզկուլտուրայի եւ սպորտի կոմիտեի նախագահի պաշտոններում: 1971-1972թթ.՝ ԼՂԻՄ ֆիզկուլտուրայի եւ սպորտի կոմիտեի նախագահի պաշտոնում եղած տարիներին, կտրուկ կերպով ակտիվացել է շրջանային սպորտկոմիտեների, կամավոր մարզական ընկերությունների, մանկապատանեական մարզադպրոցների, մարզական ֆեդերացիաների գործունեությունը, որակապես բարձրացել է մարզային առաջնությունների կազմակերպման եւ անցկացման մակարդակը:

1977-1979թթ. սովորել եւ գերազանց գնահատականներով ավարտել է Բաքվի բարձրագույն կուսակցական դպրոցը: 1980-1983թթ. աշխատել է կուսակցության Ասկերանի շրջկոմի քարտուղարի, երկրորդ քարտուղարի պաշտոններում: 1984-1991թթ. աշխատանքի է նշանակվել ԼՂՀ ներքին գործերի մարզային վարչության քաղբաժնի պետի տեղակալի պաշտոնում: Ուներ միլիցիայի գնդապետի աստիճան:

Արցախյան գոյամարտի դժվարին օրերին նա ազնվորեն ծառայեց իր ժողովրդին՝ իր լուման բերելով նրա ազատության ու անկախության գործին:

Կյանքի վերջին տարիներին (կյանքից հեռացել է 2002թ. օգոստոսի 12-ին) Հրանտ Հայրիյանը եղել է ԼՂՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության գլխավոր մասնագետ:

Կյանքի մեծ մասն ապրելով Ստեփանակերտում՝ Հ. Հայրիյանը երբեք չմոռացավ հայրենի Սղնախը: Հազար թելերով կապված էր հարազատ գյուղին, կիսում էր նրա մարդկանց վիշտն ու ուրախությունը, իր ուժերի չափով նպաստում նրա բարգավաճմանը: Որպես քաղաքացի եւ կուսակցական ու հասարակական ազնիվ աշխատող, արցախցի եւ արցախյան բնավորության տեր անհատ՝ Հ. Հայրիյանը մարդկանց կողմից միշտ էլ արժանացել է մեծ հարգանքի: Պարգեւատրվել է «Պատվո նշան» շքանշանով եւ մի շարք մեդալներով:

№ 63347

30403863
«Մեսրոպ Մաշտոց Համալսարան»
Սահմանափակ
պատասխանատվությամբ
ընկերություն
Н К Р г. Степанакерт
Общество с ограниченной
ответственностью
«Университет Месрop Маштоц»
NKR Stepanakert
„Mesrop Mashtots University“
Co.LTD
№ 10994
«04» 11 2018թ.

ԳԵՈՐԳԻ ՎԱՀԱՆԻ ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Ծնվել է 1934 թվականին Ստեփանակերտ քաղաքում: Դպրոցական տարիներից մեծ սեր ուներ դեպի բասկետբոլ մարզաձեւը: Նրա մարզիչն է եղել մարզի բասկետբոլի հիմնադիր Յուրի Նիկոլայի Դմիտրիեւը: Գ. Շահրամանյանը բազմիցս մասնակցել է հանրապետական առաջնությունների եւ գրավել առաջնային տեղեր: Նա բազմակողմանի զարգացած մարզիկ էր: Եղել է «Դինամո» մարզական ընկերության հանրապետության չեմպիոն թեթեւ ատլետիկայից (բարձրացատկ ձեւում):

1954թ. ավարտել է Ստեփանակերտի №3 միջնակարգ դպրոցը: 1955թ. ընդունվել է Երեւանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը:

1956թ. տեղափոխվել է հեռակա բաժին եւ իր ավարտած դպրոցում աշխատանքի անցել՝ որպես ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ: Տարիներ շարունակ՝ անընդմեջ, դպրոցը համաքաղաքային դպրոցական սպարտակիադայում գրավել է առաջին տեղը: Տարբեր մարզաձեւերից քաղաքի հավաքական թիմերի հիմնական կորիզը կազմված էր դպրոցի աշակերտներից: Նրա՝ որպես հավաքականի մարզիչի պատրաստած սաները այսօր էլ աշխատում են ֆիզկուլտուրայի եւ սպորտի տարբեր կոլեկտիվներում, ղեկավար պաշտոններում: 1968-75թթ. աշխատել է քաղաքի ՄՊՄԴ-ում՝ որպես տնօրեն: 1975-85թթ. աշխատել է մարզային ժողովրդական կրթության բաժնում՝ որպես դպրոցական տեսուչ:1986-1992թթ. աշխատել է ֆիզկուլտուրայի եւ սպորտի մարզային կոմիտեի նախագահ, այնուհետեւ ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ

Ալեքսանդր Միրզոյանը ծնվել է 1941 թվականին Լեռնային Ղարաբաղում: Մանկությունից զբաղվել է սպորտով՝ հատկապես բասկետբոլով եւ վոլեյբոլով: 1960 թվականից սկսել է աշխատել որպես ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մարզային կոմիտեի ավագ հրահանգիչ, ապա՝ նախագահի տեղակալ: 1993-1996թթ. ԼՂՀ կրթության եւ մշակույթի նախարարության ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վարչության պետն է եղել: Նրա ղեկավարությամբ 1994թ. հոկտեմբերի 5-14-ը Ղարաբաղի պատանի ֆուտբոլիստները մեկնել են ԱՄՆ, երեք հանդիպում ունեցել իրենց հասակակիցների հետ: Բոլոր հանդիպումների ժամանակ ԱՄՆ-ի դրոշի կողքին ծածանվում էր նաեւ ԼՂՀ պետական դրոշը:

ՍԵՐԳԵՅ ՍԵՐԳԵՅԻ ԴԱՎԹՅԱՆ

Ծնվել է 1936թ. Ասկերանի շրջանի Ներքին Սզնեք գյուղում:

1952թ. ավարտելով Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցը՝ նույն թվականին ընդունվում եւ 1954թ. ավարտում է Ադրբեջանի մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի եւ գրականության ֆակուլտետը:

1964թ. Բաքվում հեռակա ավարտել է լեզուների պետական մանկավարժական ինստիտուտը, իսկ 1974թ.՝ ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր բարձրագույն կուսակցական դպրոցը:

1960-68թթ. ԼԿԵՄ Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար է աշխատել: 1971թ. ընտրվել է աշխատավորների

պատգամավորների Մարտունու շրջանային խորհրդի գործկոմի նախագահ, իսկ 1973թ.՝ մարզային խորհրդի գործկոմի նախագահի տեղակալ:

1974-96թթ. Ս. Դավթյանը աշխատել է որպես արհմիությունների ԼՂ մարզային, այնուհետեւ հանրապետական ֆեդերացիայի նախագահ:

1996թ. նա նշանակվել է ԼՂՀ սպորտի վարչության պետի պաշտոնում:

1997թ. Աշոտ Զավենի Մելիք-Շահնազարյանի նախաձեռնությամբ առաջին անգամ ՀՀ-ում կազմակերպվել են Համահայկական խաղեր: Այդ խաղերի անցկացումը մեծ լիցք է հաղորդում Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը: Մշակութային, կրթական, մասնագիտական բազում այլ նախաձեռնությունների հետ մեկտեղ այս խաղերի նախաձեռնումն արտացոլում է Սփյուռքի նկատմամբ ՀՀ վարած քաղաքականությունը, որի հիմնաքարը հայապահպանությունն է:

Կարեւոր է նաեւ խաղերի մարզական նշանակությունը: Մարզական մրցակցության ոգով կազմակերպված խաղերը երիտասարդությանը տալիս են անկաշկանդ շփման հնարավորություն, խորացնում են առողջ ապրելակերպի ավանդույթները, նպաստում սպորտի մասսայականացմանը: Հայ մարզաշխարհի այս նշանավոր իրադարձությանը մասնակցել է նաեւ ԼՂՀ պատվիրակությունը՝ սպորտվարչության պետ Ս.Դավթյանի գլխավորությամբ: 1999թ. Ս. Դավթյանը կազմակերպել է Արցախ-Սյունիք մարզական բարեկամական հանդիպումներ՝ հետագայում դրանք շարունակական դարձնելու միտումով:

1998թ. փետրվարից մինչեւ 1999թ. մայիսը նա աշխատել է որպես ԼՂՀ վիճակագրության պետռեգիստրի եւ վերլուծության պետական վարչության պետի մարդահամարի գծով տեղակալ: 1999թ. մայիսին ընտրվել է ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ:

Պարգեւատրված է ԽՍՀՄ չորս շքանշաններով եւ մի շարք մեդալներով ու պատվոգրերով:



ԳԱՐԻ ԱՀԱՐՈՆԻ ԲԱԼԱՅԱՆ

Գարի Ահարոնի Բալայանը ծնվել է 1947թ. հուլիսի 24-ին Ստեփանակերտ քաղաքում: 1965թ. ավարտել է Ստեփանակերտի № 8 միջն. դպրոցը եւ ընդունվել Երեւանի ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ: 1968թ. տեղափոխվել է հեռակա բաժին, ավարտել 1970թ.: 1969թ. աշխատել է Ստեփանակերտի № 1 դպրոցում՝ որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ, 1969թ.՝ «Սպարտակ» կամավոր մարզական ընկերության սեղանի թենիսի մարզիչ, 1970-76թթ. աշխատել է Ստեփանակերտի մարզադպրոցի հրահանգիչ-մեթոդիստի եւ ուսումնական մասի վարիչի պաշտոններում: 1976-1987թթ. աշխատել է Ստեփանակերտի Ս.Շահումյանի անվան մարզադաշտի տնօրենի եւ «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմի պետի պաշտոններում: 1987թ. ընտրվել է արհմիությունների համամիութենական ֆիզկուլտ մարզական ընկերության մարզային խորհրդի նախագահի պաշտոնում, աշխատել մինչեւ 1998թ.: 1998 թվականից առ այսօր աշխատում է ԼՂՀ ԿՄՍ նախարարությունում, սկզբում՝ որպես սպորտվարչության պետ, 2000թ. մարտի 24-ից՝ փոխնախարար: Մեծ ներդրում ունի Արցախի բնակչության, հատկապես, երիտասարդության շրջանում ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասսայականացման եւ զարգացման, «Ղարաբաղ» վետերանների ֆուտբոլային թիմի կայացման գործում, որը 1968-76թթ. հանդես է եկել ԽՍՀՄ առաջնության «Բ» խմբում, հետագայում՝ 2-րդ լիգայի «Ա» խմբում:

Գարի Բալայանի՝ որպես ղեկավարի կազմակերպչական ընդունակությունները ցայտուն կերպով դրսեւորվեցին հատկապես ԼՂՀ ԿՄՍ նախարարության սպորտվարչության պետի եւ փոխնախարարի պաշտոններում: Նրա գործունեության ժամանակ ակտիվացել է համակարգի շրջանային բաժինների, մարզադպրոցների աշխատանքները, մարզական ֆեդերացիաների գործունեությունը, հստակեցվել եւ որակապես բարձրացել է տարբեր մարզաձեւերից

հանրապետական առաջնությունների անցկացման մակարդակը:

Նշանակալից է Գ. Բալայանի ավանդը ՀՀ եւ Սփյուռքի հետ մարզական կապերի ամրապնդման, Արցախի առաջատար մարզիկների վարպետության բարձրացման համար նպաստավոր պայմանների ստեղծման եւ նրանց միջազգային մրցասպարեզ դուրս բերելու գործում: ԼՂՀ մարզիկները մրցանակային տեղեր են զբաղեցնում ՀՀ առաջնություններում եւ չեմպիոնատներում՝ սամբո, աթլետիկա մարզաձեւերից, շախմատի պատանեկան առաջնություններում եւ մրցաշարերում:

Երեք տարի անընդմեջ Արցախի մարզիկները հաջողությամբ են հանդես եկել Իրանի Իսլամական Հանրապետությունում անցկացված Համահայկական խաղերում:

ԼՂՀ-ում սպորտի զարգացմանը, մարզչական եւ մրցավարական կադրերի որակավորմանը մեծ չափով նպաստում են Գ. Բալայանի նախաձեռնությամբ ՀՀ առաջնությունների անցկացումը Ստեփանակերտում, ՀՀ քաղաքների ու շրջանների մասնակցությունը Արցախի անկախության համար զոհված ազատամարտիկների հիշատակին անցկացվող մրցաշարերին, հանրաճանաչ մարզիկ-վետերանների հետ հանդիսավոր հանդիպումների կազմակերպումը: Միայն 1999-2000թթ. կազմակերպվել է աշխարհահռչակ մարմնամարզիկ, «Օղակների արքա» Ալբերտ Ազարյանի մեծարման երեկո, հանդիպումներ Եվրոպայի չեմպիոն, բռնցքամարտիկ Դավիթ Թորոսյանի, Նշան Մունչյանի հետ, ճանաչված ֆուտբոլիստ Ռազմիկ Պետրոսյանի մեծարման երեկոն եւ այլն:

Գարի Բալայանը թենիսի ԼՂԻՄ-ի բազմակի չեմպիոն է, իսկ 1963թ. նվաճել է Ադրբեջանի «Ուրոժայ» ԿՄԸ չեմպիոնի կոչումը:

Երկարամյա բեղմնավոր աշխատանքի համար նրան շնորհվել է Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատողի կոչում: Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի անդամ է: 2007թ. շնորհվել է ԼՂՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործչի կոչում:



ՌԱԶՄԻԿ ԳԵՐԱՍԻՄԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ծնվել է 1951թ. ապրիլի 4-ին Ստեփանակերտ քաղաքում:

1968թ. ավարտել է քաղաքի № 2 միջնակարգ դպրոցը, այնուհետեւ 1970թ. ընդունվել Երեւանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտ: Ավարտելուց հետո՝ 1974թ., գործուղվել է Սիսիան, որտեղ աշխատել է որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ եւ մարզիչ (մինչեւ 1978թ.): Նույն տարվա հուլիս ամսում տեղափոխվել է Ստեփանակերտ եւ նշանակվել սպորտի քաղաքային կոմիտեի նախագահ:

1999թ. տեղափոխվել է ԼՂՀ սպորտվարչություն՝ որպես բաժնի վարիչ, իսկ 2000թ. մարտ ամսից աշխատել է որպես սպորտվարչության պետ: Ներկայումս ԼՂՀ ԿԱ սպորտի պետական կոմիտեի նախագահն է:

ԼՂՀ ֆիզկուլտուրայի եւ սպորտի զարգացման ու մասսայականացման բնագավառում անգնահատելի ծառայության համար Ռ.Գ. Հովսեփյանին շնորհվել են ԼՂՀ եւ ՀՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատողի կոչումներ:

ՆԻԿՈԼԱՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1922թ. հունվարի 4-ին Շուշիի շրջանի Եղծահող գյուղում: 1930թ. ընտանիքով տեղափոխվել է Ստեփանակերտ: Նույն թվականին ընդունվել է №1 դպրոց եւ 7-րդ դասարանն ավարտելուց հետո ուսումը շարունակել №1 գիշերօթիկ դպրոցում: Այնուհետեւ աշխատանքի է անցել Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնում՝ որպես սկս-

նակ դերասան: 1940թ. զորակոչվել է խորհրդային բանակի շարքերը: 1941թ. Հայրենական մեծ պատերազմի առաջին օրվանից մասնակցել է Նովոռոսիյսկի, Բելոռուսիայի, Բրեստի, Քյոնիգսբերգի (Կալինինգրադ) եւ Վարշավայի ազատագրմանը, որի համար արժանացել է բազմաթիվ մեդալների ու պարգեւների: Պատերազմի ավարտից հետո՝ 1946թ., վերադարձել է Ստեփանակերտ, եւս մեկ տարի աշխատել թատրոնում որպես դերասան:

1951թ. անցել է նոր աշխատանքի՝ Ստեփանակերտի շրջանային ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի կոմիտեի նախագահ, որտեղ աշխատել է մինչեւ 1982թ.: Այդ տարիներին շրջանի հավաքական թիմը բազմիցս մասնակցել է մարզի առաջնություններին, գրավել մրցանակային տեղեր:

Իր բարեխիղճ եւ լավ աշխատանքով մեծ ավանդ է ներդրել մարզում ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի զարգացման եւ տարածման ասպարեզում, որի համար արժանացել է բարձրագույն պարգեւների եւ մեդալների:

ԱԹԼԵՏԻԿԱ

Աթլետիկան շատ հին մարզաձեւ է, որի զարգացումն Արցախում ամփոփվում է 1950-ական թթ-ից ցայսօր ընկած ժամանակաշրջանում: Այս տարիներին ավանդույթի ուժ էին ստացել ժամանակի անվանի մարդկանց պատվին անցկացվող կրոսավազքի մրցումները, որտեղ էլ աչքի ընկան մարզի առաջին աթլետներ Վարդան Գաբրիելյանը, Արկադի Մանուչարովը, Կառլեն Աղաջանյանը, Կառլեն Ադամյանը, Կելսեն Բալայանը, Ռուդիկ Հակոբջանյանը, Գեորգի Շահրամանյանը, Միքայել Բաղդասարյանը եւ ուրիշներ:

ՎԱՐԴԱՆ ՉՐԱՂԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ծնվել է 1922թ. հուլիսի 1-ին Ասկերանի շրջանի Խնածախ գյուղում: Ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ 1941թ. Հայրենական մեծ պատերազմի հենց սկզբից կամավոր մեկնել է հայրենիքը պաշպանելու, մասնակցել գերմանական եւ ճապոնական ռազմաճակատներին, պարգեւատրվել մի շարք շքանշաններով եւ մեդալներով:

1947թ. հունվարին վերադառնալով բանակից՝ անմիջապես աշխատանքի է անցել գյուղի կոլտնտեսությունում եւ մասնակցել մարզային եւ հանրապետական աթլետիկական բոլոր առաջնություններին՝ գրավելով մրցանակային տեղեր: 1949թ. հուլիսին Մոսկվայում կայացած միջազգային մարաթոնյան վազքում 150 մասնակիցների մեջ գրավել է 27-րդ տեղը:

1953թ. մայիսի 27-ին գյուղական սպորտընկերության հերթական կոնֆերանսում ընտրվել է մարզական ընկերության շրջանային խորհրդի նախագահ, որտեղ աշխատել է մինչեւ 1987թ. մայիսի 27-ը (34 տարի):



ՆՈԲԵԼ ԱՂԱԲԵԿԻ ԱՎԱԳՅԱՆ

Մարզում աթլետիկան որպես մարզաձեւ բուռն զարգացում ապրեց 1951թ-ից, երբ Նոբել Աղաբեկի Ավագյանը /ծնված 1927թ. Վերին Ղլիժբաղում/, նույն թվականին ավարտելով Բաքվի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը, աշխատանքի անցավ Ստեփանակերտում, նախ՝ № 4, ապա՝ № 8 դպրոցում, միաժամանակ աշխատել է նաեւ ՄՊՄԴ-ում՝ որպես մարզիչ: Նրա սաները մարզում եւ հանրապետությունում փայլել են մարզական ցուցանիշներով:

Նրա սաներից են Վյաչեսլավ Գասպարյանը, Իգոր Ավանեսյանը, Վլադիսլավ Տիխոնովը, Էդուարդ Հայրապետյանը, Գարիկ Ղազարյանը եւ այլք:

Վյաչեսլավ Տիխոնով- Ադրբեջանի հերթական չեմպիոնատում բարձրացատկում ցույց տալով 2 մ 15 սմ արդյունք՝ լրացրել է ԽՍՀՄ սպորտի վարպետի նորման, միեւնույն ժամանակ սահմանել հանրապետության ռեկորդ:

Էդուարդ Հայրապետյանը- Մոսկվայում «Դինամո» կենտրոնական մարզական ընկերության համամիութենական առաջնությունում 4x100 փոխանցումավազքում գրավելով 1-ին տեղը՝ արժանացավ ԽՍՀՄ սպորտի վարպետի կոչման:



ԱՎԵՏ ԼԵՎՈՆԻ ՔՈՉԱՐՅԱՆ

Ավետ Լեւոնի Քոչարյանը ծնվել է 1934թ. ապրիլի 20-ին: Սկզբնական կրթությունն ստացել է №3 միջն. դպրոցում: 1952-1955թթ. ավարտել է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Ուսումնառության տարիներին զբաղվել է մեծ սպորտով՝ բարձրացատկի գծով ՀՀ բազմակի չեմպիոն, ԽՍՀՄ ուսանողական խաղերի բազմակի մրցանակակիր:

1960-1968թթ. Օդեսայում աշխատել է դեֆեկտոլոգ: 1968թ. տեղափոխվել է Մոսկվա: Երկար ժամանակ աշխատել է ՌԴ «Ուրոժայ» գյուղական մարզական ընկերությունում՝ որպես թեթեւ աթլետիկայի ավագ մարզիչ: 1973-86թթ. աշխատել է ինստիտուտում՝ որպես ֆիզիկական դաստիարակության ամբիոնի վարիչ: 1980թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ 1990թ.՝ դարձել գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Պատրաստել է ԽՍՀՄ 50-ից ավելի սպորտի վարպետներ եւ մրցանակակիրներ, միջազգային կարգի սպորտի վարպետներ, ԽՍՀՄ վաստակավոր մարզիչներ:

Այսօր նա Մոսկվայի դեֆեկտոլոգիայի Ն. Կ. Կրուպսկայայի ան-

վան մանկավարժական մարզական ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող գիտխորհրդի անդամ է եւ պատվավոր պրոֆեսոր: Արժանացել է ՌԴ վաստակավոր մարզչի կոչման:

Միաժամանակ ԼՂՀ անկախացման ծանր տարիներին Ավիկ Քոչարյանը ցույց է տվել ինչպես բարոյահոգեբանական, այնպես էլ նյութատեխնիկական օգնություն:

ՄԻՔԱՅԵԼ ՎԱՉԱԳԱՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Դեռեւս ուսանողական տարիներին ՀՀ առաջնություններում 100մ վազքահեռավորությունում բազմիցս գրավել է մրցանակային տեղեր /11,0 արդյունքով/:

Մեծ է նրա ներդրումը հատկապես մարզչական աշխատանքում: Երկար տարիներ եղել է ԼՂԻՄ աթլետիկայի հավաքականի գլխավոր մարզիչ: Հանրապետական կարգի մրցավար է, դատել է համամիութենական մի շարք մրցումներ /Ալմա-Աթա, Աշխաբադ, Նիկոլաեւ/:

Հենրիկ Ջամալյան

Մարզել է Ադրբեջանի եւ Հայաստանի բազմակի ռեկորդակիր Վերա Պողոսյանին, հանրապետության չեմպիոններ Հենրիկ Ջամալյանին (Ադրբեջանի դպրոցականների սպարտակիադայի չեմպիոն), Գրիգոր Պողոսյանին, Կամո Պետրոսյանին, մրցանակակիրներ Էդուարդ Հարությունյանին, Գարիկ Դավթյանին, Պայծառ Դանիելյանին, Էլզա Խաչատրյանին, Արեգա Բաբուրյանին, Անժելա Աղաջանյանին, Էլեոնորա Պողոսյանին եւ այլոց:

ՊԱՅԾԱՌ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԼՂԻՄ-ի բազմակի չեմպիոն, Ադրբեջանի հանրապետության բազմակի մրցանակակիր (հեռացատկ-5 մ 30սմ արդյունքով):

ՎԵՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ

Ադրբեջանի եւ Հայաստանի ռեկորդակիր է: 1975թ., «Պրավդա» թերթի մրցանակի կրոսավազքում արժանանալով Ադրբեջանի չեմպիոնի կոչման, իրավունք ստացավ մասնակցելու վերոհիշյալ թերթի համամիութենական կրոսավազքի առաջնությանը:

Իսկ 1979թ. սեպտեմբերին Տուապսե քաղաքում կայացած ԽՍՀՄ առաջնությունում սահմանել է Հայկական ՍՍՀ ռեկորդ՝ 1000մ վազքահեռավորությունում՝ /2.45,2 վրկ/: 1979թ. հուլիսին Կրասնոդարում սահմանեց ռեկորդ 800մ վազքահեռավորությունում՝ /2.09,8 վրկ./, իսկ մինչ այդ՝ նույն տարվա հունիսին, Նիկոպոլ քաղաքում սահմանել էր ռեկորդ 1500մ վազքահեռավորությունում /4.30,2 վրկ/:

ԿԱՐԵՆ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Սպրինտեր /կարճ տարածության վազորդ/: 1987թ. Ադրբեջանի չեմպիոնատում 100մ վազքահեռավորությունում ցույց է տվեց 10,7 վրկ. արդյունք՝ լրացնելով առաջին կարգի նորմա:

1900թ. Երեւանում ԽՍՀՄ գավաթի փնջային մրցումներում 60մ վազքահեռավորությունում ցույց տալով 6,7 վրկ. արդյունք՝ լրացրել է ԽՍՀՄ սպորտի վարպետի թեկնածուի նորման:

ԿԱՄՈ ՊԵՏՐՈՍՅԱՆ

1984թ.ԽՍՀՄ գավաթի փնջային մրցումներում /բարձրացատկում/ ցույց տալով 1 մ 95 սմ արդյունք՝ գրավել է 1-ին տեղը:

ՕՆԻԿ ԻՇԽԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ծնվել է 1943թ. Մարտակերտում: Դեռ տեղի միջնակարգ դպրոցում սովորելիս սեր ուներ սպորտի հանդեպ, մասնակցում էր մարզային առաջնություններին եւ գրավում մրցանակային տեղեր:

1960-67թթ., մասնակցելով հանրապետական եւ համամիութենական մի շարք առաջնությունների, գրավել է մրցանակային տեղեր: 1960-61թթ. Ադրբեջանի դպրոցականների սպարտակիադայում 400մ եւ 800մ վազքահեռավորություններում գրավել է 1-ին տեղը:

1962թ. նվաճել է ՀԽՍՀ չեմպիոնի կոչում եւ մինչեւ 1996թ. ընդգրկված է եղել հանրապետության աթլետիկայի հավաքականի կազմում:

1963-67թթ. Հայաստանի սպարտակիադաների չեմպիոն է, միաժամանակ մասնակցել է ԽՍՀՄ ժողովուրդների III եւ IV սպարտակիդաներին: Այդ տարիներին 3 անգամ նվաճել է Անդրկովկասյան զինվորական օկրուգի չեմպիոնի կոչումը: 2001թ. ճանաչվել է ԼՂՀ 20-րդ դարի լավագույն մարզիկ: 1968թ., ավարտելով ԵՖԿՊ ինստիտուտը, վերադառնում է Մարտակերտ եւ աշխատանքի անցնում տեղի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ: Պատրաստել է մի շարք մարզիկների, որոնք մարզային առաջնություններում դարձել են չեմպիոններ՝ Գարի Օհանջանյան, Սիրանուշ Սաղաթելյան, Արսեն Եղիազարյան, Գագիկ Բաղունց, Աշոտ Մարտիրոսյան, Մելինե Մամունց եւ այլք:

2002թ. արժանացել է ՀՀ ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատողի կոչման:

ԷԴՈՒԱՐԴ ԱՐՏԱՇԵՍԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ծնվել է 1951թ. Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղում:

1965թ. հանրապետության դպրոցականների սպարտակիադայի չեմպիոն էր՝ գնդի հրում ձեւից:

Ընդգրկվել էր Ադրբեջանի հավաքականում, մասնակցել Պյատիգորսկում կայացած ուսումնական հավաքի, սակայն ազգային խտրականության պատճառով չի մասնակցել ԽՍՀՄ-ի դպրոցականների սպարտակիդային:

ԿԱՄՈ ԽՈՐԵՆԻ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Իր ավանդն ունի մարզի աթլետիկական կրոսի զարգացման բնագավառում:

1969-74թթ. Հայաստանի հավաքականի կազմում կրոսավազքից մասնակցել է ԽՍՀՄ մի շարք մրցումների: 1970թ. 4000 մ վազքահեռավորությունում, իսկ 1973թ. անհատական թիմային առաջնությունում 3000 մ խոչընդոտավազքում գրավել է 1-ին տեղը: 1974թ. ԳԴՀ-ում տեղակայված միացյալ բանակների 30-րդ սպարտակիադայի չեմպիոն է:

Նրա սաներից Էլմիրա Ավանեսյանը, Վահե Գրիգորյանը եւ Կարեն Աղաջանյանը Ադրբեջանի հավաքականի կազմում մասնակցել են ԽՍՀՄ կրոսավազքի առաջնությանը:

1979թ. «Պրավդա» թերթի մրցանակի համար համամիութենական կրոսավազքում մարզի հավաքական թիմը, նրա ղեկավարությամբ, ինքնավար հանրապետությունների եւ ինքնավար մարզերի 3-րդ խմբում գրավել է 1-ին տեղը:

2004թ. նա արժանացել է ՀՀ ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատողի կոչման:

ԱՐՏՈ ՌՈՒԲԵՆԻ ԱՌՍՏԱՄՅԱՆ

ԱրՊՀ-ի դասախոս, ՀՀ վաստակավոր մարզիչ:

1986թ. Երեւանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտն ավարտելուց հետո իրեն նվիրել է մարզչական աշխատանքի: 1986թ-ից առ այսօր նա պատրաստել է գերազանց աթլետների մի խումբ, որի մեջ աչքի են ընկնում Սեյրան Հարությունյանը, Սեյրան Իլյազյանը, Մարատ Մկրտչյանը, Սերգեյ Պողոսյանը, Մարինե Մուսայելյանը:

Նրա սաներից հանրապետության չեմպիոնի կոչման են արժանացել նաեւ Էրիկ Մոխրանյանը, Արմեն Դոլուխանյանը, Նինել Մնացականյանը, Նուբար Համբարձումյանը եւ ուրիշներ:

ՍԵՅՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1987թ. ՊԱՊ համալիրի բազմամարտի Ադրբեջանի չեմպիոն, 1988թ. ՀՀ դպրոցականների սպարտակիադայի չեմպիոն, 1989թ. երիտասարդների չեմպիոն:



ՍԵՅՐԱՆ ԻԼՅԱԶՅԱՆ

Պատանիների, երիտասարդների եւ մեծահասակների ՀՀ բազմակի չեմպիոն /1988-99թթ./: Միջազգային մի շարք մրցումների, Եվրոպայի գավաթի մասնակից:

ՍԵՐԳԵՅ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ չեմպիոն, համահայկական խաղերի մրցանակակիր:

ՄԱՐԱՏ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ պատանիների, երիտասարդների եւ մեծահասակների չեմպիոն /1994-97թթ/: 1995թ. ճանաչվել է ՀՀ լավագույն աթլետ /երիտասարդների միջեւ/:

ՄԱՐԻՆԵ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

Միջազգային առաջնությունների մրցանակակիր, 2001-05թթ. ՀՀ կրոսավազքի չեմպիոն: 2004թ. Իրանի Իսլամական Հանրապետությունում կայացած Համահայկական խաղերի չեմպիոն:

Աթլետիկայի բնագավառում բեղմնավոր մարզչական գործունեություն է ծավալել նաեւ Սերգեյ Միքայելի Եդիգարյանը եւ Լեւոն Գեորգիի Գասպարյանը:

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ բազմակի չեմպիոն, Իրանի Իսլամական Հանրապետությունում Համահայկական խաղերի բազմակի չեմպիոն, Հայաստանի Համահայկական խաղերի կրկնակի արծաթե մեդալակիր, միջազգային մրցումների (Ֆրանսիայի բաց առաջնություն, Փարիզ 2009) հաղթող:

ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ չեմպիոն, Ֆրանսիայի բաց առաջնության (Փարիզ 2009թ.) 3-րդ մրցանակակիր:

ԼԵՎՈՆ ԳԵՈՐԳԻԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ծնվել է 1964թ. հունվարի 4-ին Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում: 1982թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1984թ. խորհրդային բանակում ծառայությունն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի ֆիզիկական կուլտուրայի տեխնիկումը, որն ավարտելուց հետո, 1988թ. ընդունվել է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հեռակա բաժինը եւ այն ավարտել 1993թ.՝ աթլետիկայի մարզիչ եւ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ մասնագիտությամբ:

Ուսումնառության տարիներին բազմիցս մասնակցել է շրջանային եւ մարզային առաջնություններին, գրավել մրցանակային տեղեր:

1989 թվականից ակտիվ մասնակցություն է ունեցել Արցախյան ազգային-ազատագրական պայքարին: 1992թ. ծանր վիրավորվել է: Ապաքինվելուց հետո վերադառնալով Արցախ՝ իր մասնագիտությամբ աշխատել է հանրապետության տարբեր դպրոցներում:

1996թ. տեղափոխվել է ԼՂՀ կադրերի վերապատրաստման եւ ատեստավորման հանրապետական ինստիտուտ, աշխատանքի անցել ֆիզկուլտուրայի եւ ռազմագիտության ամբիոնում՝ որպես ավագ դասախոս:

1997-2004թթ. աշխատել է սպորտվարչության հանրապետական մանկապատանեկան մարզադպրոցի տնօրենի պաշտոնում: 2004թ. առ այսօր ԿՄՍ նախարարության սպորտվարչության սպորտի բաժնի վարիչն է: Բավականին ներդրում ունի հանրապետությունում ֆիզկուլտուրայի եւ սպորտի մասսայականացման ու զարգացման գործում: 2004 եւ 2007թթ. ԼՂՀ եւ Հայաստանի Հանրապետության կողմից պարգեւատրվել է «Շուշիի ազատագրման» եւ «Մարտական ծառայություն» մեդալներով:

ՀԵՆՐԻԿ ԻՍԱՀԱԿԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ծնվել է 1929թ. հունիսի 29-ին Ստեփանակերտում:

Միջնակարգ կրթությունն ստացել է ծննդավայրում, բարձրագույնը՝ Երեւանի ֆիզկուլտուրայի ինստիտուտում: Ուսանողական տարիներին էլ նա դարձավ հանրապետության չեմպիոն՝ ՊԱՊ բազմամարտի գծով: Ինստիտուտն ավարտել էր արդեն, երբ Հայաստան մուտք գործեց մի նոր մարզաձեւ՝ ժամանակակից հնգամարտը: 4 մարզաձեւում՝ ձիասպորտ, սուսերամարտ, հրաձգություն, վազք, նա գերազանց էր: Շատ արագ հաղթահարելով լողի հետ կապված դժվարությունները՝ Հենրիկ Ղուկասյանը դարձավ ժամանակակից հնգամարտի գծով ԽՍՀՄ սպորտի վարպետ: Մարզական փառահեղ կենսագրություն ունի Հենրիկը: Նա ՀՀ վաստակավոր մարզիչ է, համամիութենական եւ միջազգային կարգի մրցավար, Հայաստանի ՊԱՊ բազմամարտի կրկնակի չեմպիոն, ժամանակակից հնգամարտի Հայաստանի թիմային եռակի չեմպիոն, նետաձգության Հայաստանի անդրանիկ չեմպիոն: 8 տարի անընդմեջ Հայաստանի հավաքականի կազմում հանդես է եկել Միության առաջնություններում, միջազգային խոշոր մրցաշարերում: 3 անգամ հաղթող է ճանաչվել հնգամարտի նժույգավարության մրցումներում: Համամիութենական եւ միջազգային կարգի մրցավար Հ.Ղուկասյանը 1980-ին

Մոսկվայում կայացած օլիմպիական խաղերի մրցավար է եղել, որի համար արժանացել է պատվոգրի:

Հայաստանի նախարարների խորհրդի գավաթի միջազգային մրցումներում 5 անգամ եղել է գլխավոր մրցավար, 24 անգամ գլխավոր մրցավարի տեղակալ: Մասնակցել է ԽՍՀՄ առաջին եւ երկրորդ սպարտակիադաներին՝ առաջին թիմային հաշվարկով գրավելով առաջին տեղը /1956 եւ 1959թթ/:

Անգնահատելի է նրա ավանդը որպես մարզիչ: 37տարի աշխատել է Երեւանի Իգոր Նովիկովի գլխավորած պատանի հնգամարտիկների դպրոցի ուսմասվարի պաշտոնում: Նա եղել է Հայաստանի ժամանակակից հնգամարտի՝ պատանիների եւ մեծահասակների հավաքականների մարզիչ, մասնակցել է ժամանակակից հնգամարտի գծով 58 սպորտի վարպետների պատրաստմանը:

Ժամանակակից հնգամարտի՝ Երեւան քաղաքի ֆեդերացիայի նախագահի եւ Հայաստանի ֆեդերացիայի պատասխանատու քարտուղարի պաշտոններում նրա աշխատանքը հետամուտ էր մի նպատակի՝ հայկական սպորտի զարգացման եւ բարգավաճման:

ԲԱԲԱՅԱՆ ԿՈԼՅԱ ԱԲՐԱՀԱՄԻ

Ծնվել է 1948թ. մարտի 18-ին Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանի Խանապատ գյուղում: 1971թ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը եւ անմիջապես աշխատանքի անցել աթլետիկայի ամբիոնում որպես դասախոս, ապա՝ դոցենտ /1995/:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատող է /2002թ/: 2000-ից՝ ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հեռակա բաժնի դեկան: Հանրապետության աթլետիկայի հավաքական թիմի գլխավոր մարզիչն է:

Կ.Բաբայանը մեծաթիվ գիտական հոդվածների եւ մեթոդական ձեռնարկների հեղինակ է: Պարգեւատրվել է ՀՀ նախագահի շնորհակալագրով /2005/:

ՄՊՄԴ-ի աթլետիկայի խմբի պարապմունքներ
քաղաքային զբոսայգում:
Մարզիչ՝ Միքայել Բաղդասարյան

ԲԱՍԿԵՏԲՈԼ

Լեռնային Ղարաբաղում բասկետբոլի հիմնադիրը իրավամբ համարվում է Յուրի Նիկոլայի Դմիտրիեւը, ով 1948-52թթ. աշխատել է Ստեփանակերտի № 3 միջն. դպրոցում՝ որպես ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ:

Հետագայում այդ մարզաձեւի զարգացմամբ զբաղվել է Երեւանի ՖԿՊԻ շրջանավարտ Ալբերտ Արտաշեսի Գրիգորյանը:

1956թ.-ից մինչեւ 1980-ականները մարզի բասկետբոլի հավաքականի ավագ մարզիչն էր Ռադիկ Օսիպովը: Նրա սաներից շատերը հետագայում դարձել են լավ մարզիչներ:

Դմիտրիև Յուրի

50-ական թթ. մարզի հավաքականի կազմում էին Գեորգի Շահրամանյանը, Յուրի Գրիգորյանը, Գենադի Խաչատրյանը, Ալեքսանդր Սարգսյանը եւ ուրիշներ:

1955թ. մարզի հավաքականը Ադրբեջանի առաջնությունում գրավել է 3-րդ տեղը, իսկ 1955-59թթ.՝ 3-րդ, 4-րդ տեղերը /մեծահասակներ/:

60-ական թթ. մարզի տղամարդկանց հավաքականը /որի կազմում էին Ռ. Համբարձումյանը, Վ. Խոջաեւը, Վ. Դրոկինը, Ալեքսանդր եւ Նաիրի Պետրոսյանները, Վ. Փալանջանյանը, Ռ. Խասապետյանը, Շ. Ղուկասյանը, Ա. Միրզոյանը/ հանրապետական մրցումներում դարձել է մրցանակակիր:

Իսկ 1961թ. «Սպարտակ» ԿԽ առաջնությունում մարզի բասկետբոլիստները 12 թիմերի միջեւ հաղթող են ճանաչվել:

Մարզչական գործունեության ընթացքում Ռ. Օսիպովը միաժամանակ մարզել է կանանց հավաքականը: Կանանց հավաքականի կազմում, որը դարձավ հանրապետական առաջնությունների մրցանակակիր, խաղում էին Ժ. Փալանջանյանը, Ա. Բաբայանը, Դ. Բեգյանը, Ա. Նուրիջանյանը, Մ. Թավադյանը, Է. Հարությունյանը, Լ. Փիրումյանը, Ա. Օհանյանը, եւ ուրիշներ:

1970-ական թթ. պատանի բասկետբոլիստների պատրաստման գործում մեծ ավանդ ունեցավ փորձառու մանկավարժ Ռոբերտ Սուրենի Համբարձումյանը, ով երկարամյա մարզչական աշխատանքի ընթացքում դաստիարակել է տեխնիկապես որակյալ ոչ քիչ մարզիկների: Նրանցից հարկ է նշել Սամվել Գաբրելյանին (ավանդույթ է դարձել նրա հիշատակին յուրաքանչյուր տարի անցկացվող հանրապետության առաջնությունը), Վլադիկ Միքայելյանին, Սամվել Վարդանյանին:

Ռ. Համբարձումյանը մարզվել է նախ՝ Գեորգի Շահրամանյանի, ապա՝ Զորի Մուրադյանի մոտ:

1955-60-ական թթ. նա մարզի հավաքականի կազմում մասնակցել է Ադրբեջանի տարբեր առաջնությունների:

1972թ. բասկետբոլի պատանիների թիմը Ադրբեջանի առաջնությունում գրավել է 1-ին տեղը:

1986թ. մեծահասակների կանանց թիմը Ադրբեջանի առաջնությունում գրավել է 3-րդ պատվավոր տեղը:

Բասկետբոլի զարգացմանը նպաստեց «Յուպիտեր» մարզակումբի ստեղծումը: Այդ ակումբում էին աշխատում մարզիչներ Ռոբերտ Համբարձումյանը, Էդիկ Առուշանյանը, Էմիլ Հովհաննիսյանը: Այնտեղ մարզվում էին 300-ից ավելի պատանիներ եւ աղջիկներ:

Առ այսօր այդ մարզակումբի սաներն ընդգրկված են հանրապետության հավաքական թիմերում:

1994-96թթ. պատանիների եւ մեծահասակների թիմերը Հայաստանի առաջնությունում գրավել են 2-3-րդ տեղերը:

1998-99թթ. պատանիների թիմը Հայաստանի առաջնությունում գրավել է 2-րդ տեղը:

Մարզի հավաքականը հանրապետական առաջնության 1955թ. մրցանակակիր

Աջից ձախ՝ մարզիչ Յուրի Դմիտրիեւ, բասկետբոլիստներ՝ Ավիկ Քոչարյան, Գեորգի Շահրամանյան, Գ. Տետերյուկով, Յուրի Գրիգորյան, Կոստանդին Մկրտչյան, Էդուարդ Կուզմենկո, Հենրիխ Գրիգորյան



Ստեփանակերտի մարզական պատանեական դպրոցի բասկետբոլի թիմը (մարզիչ՝ Ռ. Համբարձումյան), որը հանրապետության պատանեական առաջնությունում գրավել է առաջին տեղը

Հանրապետական առաջնության 1982թ. մրցանակակիր (3-րդ տեղ)
մարզիչ՝ Ռոբերտ Համբարձումյան

Մարզի հավաքականը (կենտրոնում՝
մարզիչ Զորի Մուրադյան)

ԲԻԼԻԱՐԴ



Պրոֆեսիոնալ բիլիարդ սպորտաձեւի ընկերությունը /ասոցիացիա/ ԼՂՀ-ում հիմնադրվել է 2003թ.: Հիմնադիրներն են՝ ԼՂՀ նախագահ Բակո Սահակի Սահակյան, ԼՂՀ պաշտպանության նախկին նախարար, ներկայումս ՀՀ պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ Սեյրան Մուշեղի Օհանյան, ԼՂՀ ոստիկանության վարչության նախկին պետ՝ գեներալ-լեյտենանտ Արմեն Արամայիսի Իսագուլով (այժմ նախագահի խորհրդական) եւ Արթուր Մուրադի Ապրեսյան /ԼՂՀ կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեի փոխնախագահ, բիլիարդի ասոցիացիայի նախագահ/: Նախաձեռնող խմբում ընդգրկված են մոտ 20 հոգի: Ընկերությունն իր առջեւ խնդիր է դրել նպաստել երիտասարդության դաստիարակության գործին՝ ներգրավելով աճող սերնդին այդ սպորտաձեւում եւ խթանել բիլիարդ սպորտաձեւի զարգացումն ու մասսայականացումը հանրապետությունում:

ԼՂՀ նախագահ
Բ.Ս. Սահակյան

ՀՀ ՊՆ Ս.Մ.Օհանյան

Ընկերությունն ունի 2 մասնաճյուղ՝ Մարտակերտում եւ Հադրութում: Առաջիկայում նախատեսվում է հանրապետության մյուս շրջաններում եւս զարգացնել այս սպորտաձեւը: Կենտրոնական պաշտպանական շրջանների Սպայի տներում ստեղծված են բիլիարդի անկյուններ /հիմնականում ստվար զինվորական ստորաբաժանումներում/:

Ամեն տարի տեղերում անցկացվում են

Ա.Ա. Իսագուլով

Արթուր Ապրեսյան
ԼՂՀ բիլիարդի
ֆեդերացիայի
նախագահ

մրցություններ /ԼՂՀ պաշտպանության բանակի առաջնություն ք. Ստեփանակերտում եւ շրջկենտրոններում/, որից հետո անց է կացվում հանրապետական առաջնություն:

Սկսած 2003 թվականից՝ բիլիարդ սպորտաձեւի ընկերությունը ԼՂՀ առաջնություններին զուգընթաց անցկացնում է նաեւ առաջնություններ պատանիների միջեւ, ինչպես նաեւ ԼՂՀ նախագահի գավաթի խաղարկություն:

Առայսօր անց են կացվել 4 առաջնություններ, որտեղ հաղթողներ են ճանաչվել Լեոնիդ Հարությունյանը /2003թ./, Վիտալի Բալայանը /2004թ./, Կարեն Գասպարյանը /2006թ./: 2005թ. Վ. Բալայանը դարձել է նաեւ ՀՀ չեմպիոն եւ Հայաստանի հավաքականի կազմում մասնակցել է Ֆինլանդիայում կայացած աշխարհի առաջնության մրցումներին՝ գրավելով 32-րդ տեղը 64 մասնակիցների միջեւ:

2007թվականից գործում է «Ռոսիա» բիլիարդի ակումբը իր մասնախմբերով:

Հատկանշական է, որ այս ամենը կատարվում է շնորհիվ հովանավորների բարերարության:





ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը խաղի պահին

Կենտրոնում ԼՂՀ նախագահ Բակո Սահակյան,
ձախից՝ Արթուր Ապրեսյան(ֆեդերացիայի նախագահ),
աջից՝ Արմեն Իսագուլով (ԼՂՀ ՆԳ նախկին նախարար)

Վիտալի Բալայան
ԼՂՀ եռակի չեմպիոն, ԼՂՀ եռակի
գավաթակիր, ՀՀ 2006թ. չեմպիոն, աշխարհի
չեմպիոնատի մասնակից
(Ֆինլանդիա, 2006թ.)

Սամվել Հովսեփյան
2007թ. ԼՂՀ չեմպիոն, պարգեւատրում է ԼՂՀ
նախարար Սուրեն Գրիգորյանը

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ



Այս սպորտաձեւի պատմությունը Արցախում սկսվել է 1939թ., եւ առաջիններից մեկը եղել է Վանյա Ավանեսյանը: 1950-ական թթ. աչքի ընկան մարզիկներ Սերգեյ Օհանյանը /Ադրբեջանի մրցանակակիր/, Կիմ Ալոյանը /Ադրբեջանի պատանիների չեմպիոն/, Էդուարդ Կնյազչյանը, Յուրի Հարությունյանը, Մայոր Հարությունյանը, Գեորգի Հարությունյանը /1956թ. ԼՂԻՄ-ի սպարտակիադայի չեմպիոն, 1956թ. Ադրբեջանի սպարտակիադայի 2-րդ մրցանակակիր/:

Սերգեյ Օհանյանը իր որդու՝
Կարենի հետ

Սոցալիստական երկրների
բարեկամության
համերաշխության գավաթակիր
Եգոր Օհանյանը

ՀԵՆՐԻԿ /ԳԵՆԱ/ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հետագայում ասպարեզ եկան մրցանակակիրներ Վիկտոր Կոլատենկոն եւ Ալբերտ Սարգսյանը, իսկ սպորտի վարպետ Հենրիկ /Գենա/ Ավանեսյանը Նելսոն Ստեփանյանի հիշատակին պարբերաբար անցկացված եւ այլ մրցաշարերի բազմակի չեմպիոն է /5 տարի անընդմեջ Ադրբեջանի չեմպիոն եւ մրցանակակիր է եղել/: ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադայի մասնակից է:

Արցախյան բռնցքամարտի տարեգրության մեջ իրենց ուրույն տեղն ունեն սպորտի վարպետ Եգոր Օհանյանը, Ադրբեջանի պատանիների չեմպիոն Վլադիմիր Օհանյանը, հանրապետական եզրափակիչի մասնակից Սամվել Մուսայելյանը, ինչպես նաեւ Վարդան Դանիելյանը, Կարեն Ներսիսյանը եւ ուրիշներ:



ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳԵՈՐԳԻԻ ԱՌՍՏԱՄՅԱՆ

Մարզածեւի առաջնեկներից մեկն է համարվում Ալեքսանդր Գեորգիի Առստամյանը:

1979թ. 75կգ քաշային կարգում 1961-62թթ. ծնված պատանիների միջեւ դարձել է Ադրբեջանի չեմպիոն:

1980թ. քաղաք Վորոշիլովգրադում կայացած գյուղական բռնցքամարտիկների տուրնիրում գրավել է 1-ին տեղը:

1981թ. Բաքու քաղաքում 1962-63թթ. ծնված պատանիների շրջանում անցկացված ԽՍՀՄ առաջնությունում գրավել է 3-րդ պատվավոր տեղը:

1984թ. Ադրբեջանի չեմպիոնատում գրավել է 1-ին տեղը, 1985թ. Չելյաբինսկ քաղաքում կայացած համամիութենական մրցաշարում

գրավել է 1-ին տեղը:

Լավագույն բռնցքամարտիկներից են նաեւ ծննդով Այգեստանից Տիգրան Պետրոսյանը եւ Մխիթար Վանեսյանը:

Բռնցքամարտիկների շարքում իր ուրույն տեղն ունի Յուրի Գարեգինի Թավադյանը:

ՅՈՒՐԻ ԳԱՐԵԳԻՆԻ ԹԱՎԱԴՅԱՆ

Ծնվել է 1935թ., ԼՂԻՄ Մարտունու շրջանի Հացի գյուղում: 1949թ. ընտանիքով տեղափոխվել է Ստեփանակերտ, իսկ 1951թ. Բաքու, որտեղ ուսումը շարունակել է №132 միջնակարգ դպրոցում:

Բռնցքամարտով սկսել է զբաղվել 1952 թվականից «Նեյթչի» մարզական ընկերությունում: Վեց ամիս հետո շարունակել է նշանավոր մարզիչ Օդինցովի մոտ: 1954թ. Ադրբեջանի պատանիների առաջնության կիսաեզրափակիչի մասնակից էր:

1955թ. զորակոչվել է խորհրդային բանակի շարքերը Տալինում անցկացված Մերձբալթյան զինվորական օկրուգի առաջնության կիսաեզրափակիչի մասնակից է: Ծառայությունն ավարտելուց հետո վերադարձել է Ստեփանակերտ եւ մարզումները շարունակել սպորտի վարպետ Սերգեյ Օհանյանի մոտ:

1958թ. Կիրովաբադում կայացած հանրապետության առաջնության մրցանակակիր է:

1959թ. հանրապետական սպարտակիադայի կիսաեզրափակիչում լրացրել է սպորտի վարպետի թեկնածուի նորմա:

1974-86թթ. «Դինամո» սպորտընկերությունում աշխատել է որպես մարզիչ: Նրա պատրաստած սաները հանրապետության տարբեր առաջնությունների մրցանակակիրներ են՝ /Օհանյան Վլադիմիր, Դանիելյան Վարդան՝ եզրափակիչի մասնակիցներ, Կարեն Ներսիսյան՝ Նելսոն Ստեփանյանի անվան մրցաշարի 3-րդ մրցանակակիր/:

ՆՈՐԱՅՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՂԱԶԱՐՅԱՆ

1970թ. «Դինամո» մարզական ակումբի ղեկավարության կողմից հրավեր ստացավ աշխատելու որպես բռնցքամարտի մարզիչ: Հրավերն ընդունվեց, եւ իսկույն սկսեցին թիմի կազմավորումն ու մարզումները: Կարճ ժամանակ անց սկսեցին հանդես գալ հանրապետական մրցումներում: Հաջողություններն ակնհայտ էին: Թիմի հիմնական կազմից նշենք Վլադիմիր Հովհանիսյանին՝ 1973 թվականի հանրապետության չեմպիոն եւ տարվա լավագույն բռնցքամարտիկ, Ռաֆայել Գրիգորյանին՝ ԽՍՀՄ կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի հիշատակին նվիրված համամիութենական ավանդական հուշամրցաշարի չեմպիոն:

ՌԱՖԱՅԵԼ ՌՈՒԲԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

1992թ. Արցախի ազգային ազատագրական պայքարում հերոսաբար զոհվեց:

Հիշենք նաեւ Վալերի Բաղրյանին, Դավիթ Սաֆարյանին, Բորիս Բարսեղյանին, Վյաչեսլավ Հյուսնունցին /գեներալ-մայոր/, Նելսոն Մինասյանին, որոնք բոլորն էլ եղել են տարբեր մրցումների չեմպիոններ եւ մրցանակակիրներ:

1973թ. ԼՂԻՄ-ի բռնցքամարտիկների հավաքական թիմը. ձախից աջ՝ Բորիս Բարսեղյան, Վլադիմիր Ավանեսյան, Դավիթ Սաֆարյան, մարզիչ Նորայր Ղազարյան, Վյաչեսլավ Հյուսնունց (գեներալ-մայոր), Նելսոն Մինասյան, Վալերիկ Բաղրյան



Յուրի Թավադյանը մարզման ժամանակ (Բաքու)

Մարզական պահ



Մրցակցական պահ

ԸՄԲՇԱՄԱՐՏ

Ազատ ոճ



Ըմբշամարտը Լեռնային Ղարաբաղում սկսել է զարգանալ 1953 թվականից. մի ժամանակաշրջան, երբ այդ մարզաձեւի մարզչական աշխատանքը իրենց վրա են վերցրել խորհրդային բանակից նոր զորացրված մարզիկ Ալիխան Մուրադյանը եւ Յուրի Բաբայանը:

Ճիշտ է, մինչ այդ էլ այդ մարզաձեւը գոյություն ուներ մեր երկրամասում. մարզի թիմերը պարբերաբար մասնակցում էին Ադրբեջանի առաջնություններին: Ըստ ականատեսների՝ 30-50-ական թթ. բալլուջեցի Վազգեն Բալասանյանը եւ ստեփանակերտցի Ադրբեջանի առաջին չեմպիոն Արսեն Աթանեսյանը որպես ըմբիշներ հանդես էին գալիս Բաքվի կրկեսում:

ՀՀ-ի պատվիրակությունը (ազատ ոճի հավաքական) ԱՄՆ-ում-1997թ.: Կենտրոնում հավաքականի գլխավոր մարզիչ՝ Շահեն Ջանյան

ՅՈՒՐԻ ԱՐՄԵՆԱԿԻ ԲԱԲԱՅԱՆ

Մարզի ըմբշամարտի զարգացման եւ մասսայականացման գործում իր ուրույն տեղն ունի ԽՍՀՄ սպորտի վարպետ, ՀՀ վաստակավոր մարզիչ, ՀՀ ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործիչ, ժողովրդական կրթության գերազանցիկ, աշխատանքի վետերան եւ մարզչական երկարամյա բեղմնավոր աշխատանքի համար մի շարք գովասանագրերի եւ պարգեւների արժանացած Յուրի Արմենակի Բաբայանը: Նրա սաներից շատերը դարձել են աշխարհի բազմակի գավաթակիրներ, չեմպիոններ, օլիմպիական խաղերի մրցանակակիրներ:

1953-54թթ. Լեռնային Ղարաբաղի պատանի ըմբիշները հաջողությամբ հանդես եկան Ադրբեջանի առաջնությունում եւ գրավեցին մրցանակային 1-ին տեղը:

Արժե նշել հատկապես ազատ ոճի ըմբիշներ Յուրի Բաբայանի եւ Սերյոժա Գրիգորյանի հաջող ելույթները: Նրանց հետ միասին մրցանակակիր են դարձել Բորիս Բարսեղյանը, Չերվոն Վարդանյանը, Մռավ Հարությունյանը, Սերգեյ Սաղյանը:

Դա Արցախի մարզիկների խոշոր նվաճումն էր եւ առանձնահատուկ նշանակություն ունեցավ մարզաձեւի հետագա զարգացման ու մասսայականացման գործում:

1955թ.-ից սկսած Լեռնային Ղարաբաղի ըմբիշները բազմիցս դարձան ինչպես հանրապետական, այնպես էլ համամիութենական «Սպարտակ», «Դինամո», «Մեհսուլ» սպորտընկերությունների մրցամարտի չեմպիոններ:

Հատկապես հիշարժան են Ալիխան Մուրադյանի, Բորիս Բարսեղյանի, Սերյոժա Գրիգորյանի, Բորիս Սաղյանի, Կառլեն Շահբարյանի, Ալբերտ Հակոբջանյանի, Սերժիկ Ղուկասյանի եւ այլոց մարզական անուրանալի հաջողությունները:

1955-ին Ղարաբաղից մարզիկներ Բ.Բարսեղյանը եւ Բ.Սաղյանը դարձան ԽՍՀՄ գյուղական սպորտընկերության մրցաշարի /ք. Վորոշիլովգրադ/ չեմպիոններ:

Ձեռք բերած հաջողությունները նշանակալից դեր խաղացին ըմբշամարտի հետագա զարգացման գործում: Այդ ժամանակաընթացքում ԽՍՀՄ սպորտի վարպետի նորմաներ լրացրին Յուրի Բաբայանը, Ս.Գրիգորյանը, Բ.Սաղյանը, Կ. Շահբարյանը, Ա. Հակոբջանյանը, Ալբերտ եւ Վահրամ Մուրադյանները, Ռ. Միքայելյանը եւ ուրիշներ:

Տարեցտարի ըմբշամարտն ավելի մասսայական բնույթ էր կրում: Այդ գծով խմբակներ էին գործում ոչ միայն Ստեփանակերտում, այլեւ մարզի բոլոր շրջաններում ու խոշոր գյուղերում՝ Ճարտարում, Հաթերքում, Չայլվում: Որպես կանոն՝ մարզային մրցությունները տոնական բնույթ էին կրում: Այդ մրցաշարերում մարզի չեմպիոններ էին դառնում ոչ միայն ստեփանակերտցիները, այլեւ Մարտակերտի, Մարտունու, Շուշիի ներկայացուցիչները:

Ստեփանակերտ քաղաքում գործում էին ըմբշամարտի մի շարք խմբակներ՝ գյուղտեխնիկումում, պրոֆտեխուսումնարանում եւ այլուր:

1958թ. Ստեփանակերտում անցկացվեց ազատ ոճի ըմբշամարտի ընկերական հանդիպում Երեւանի բուհերի եւ մարզի ըմբիշների հավաքականների միջեւ:

Պատասխան հանդիպում կայացավ Երեւանում, որտեղ փայլուն հաղթանակներ տարան Գուրգեն Ալեքսանյանը եւ Սերյոժա Գրիգորյանը:

Հարկ է նշել, որ մեծ եռանդով էին աշխատում մարզիչներ Ալիխան Մուրադյանը, Յուրի Բաբայանը, Բորիս Բարսեղյանը, Սերյոժա Գրիգորյանը, Սլավիկ Բաղդասարյանը եւ ուրիշներ:

Մարզաձեւի այս առաջընթացը շարունակվում է մինչեւ Արցախյան գոյամարտը: Մեր նշանավոր ըմբիշներից շատերը դարձել են հայրենիքի զինվորներ:

Կամքի այն ուժը, որ դրսեւորեցին արցախյան գոյամարտի տարիներին, նրանք ձեռք էին բերել սպորտային մարզումների ժամանակ:

Մեր շատ ըմբիշներ իրենց կյանքի գնով են պաշտպանել հողհայրենին: Հայրենիքի անկախության համար մղված մարտերում զոհվեցին վաստակաշատ մարզիչ Ալիխան Մուրադյանի երկու որդիները՝ սպորտի վարպետներ Ալբերտ եւ Վահրամ Մուրադյանները:

ԼՂՀ սպորտի վարչությունը ամեն տարի կազմակերպում է եղբայրներ Ալբերտ եւ Վահրամ Մուրադյանների հիշատակին նվիրված հուշամրցումներ:

Ավանդական դարձած այդ մրցաշարերին մասնակցում են նաեւ Հայաստանի մարզիկները:

Հարկ է նշել, որ ղարաբաղցի մի շարք մարզիկներ համահայկական ճանաչման են արժանացել՝ մեծապես նպաստելով ֆիզիկական կուլտուրայի զարգացմանը:

Առանձնապես այդ ուղղությամբ ճանաչում են գտել Յուրի Արմենակի Բաբայանը, ԽՍՀՄ սպորտի վարպետ, ՀՀ վաստակավոր մարզիչ, ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատող, ՀՀ ՖԿ վաստակավոր գործիչ, «Ժողովրդական կրթության գերազանցիկ», «Աշխատանքային վետերան» Բորիս Սաղյանը /դոկտոր-պրոֆեսոր/, պրոֆեսոր հանգուցյալ Շահեն Ջանյանը:

2009թ. հունիսի 9-ին Յուրի Բաբայանի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի անունից նրան շնորհավորել եւ «Երախտագիտություն» մեդալով պարգեւատրել է ԼՂՀ ԿԱ սպորտի պետական կոմիտեի նախագահ Ռազմիկ Հովսեփյանը:

ՍԱՂՅԱՆ ԲՈՐԻՍ ՋԻՆԱՎՈՐԻ

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ծնվել է ԼՂՀ Մարտակերտի շրջանի Չափար գյուղում: 1958թ. ավարտել է Ստեփանակերտի գյուղատնտեսական ուսումնարանը, 1958-1961թթ. ծառայել խորհրդային բանակում: 1961-1965թթ. ավարտել է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: 1965-1968թթ. աշխատել է Երեւանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտում: 1968-1971թթ., ավարտելով Մոսկվայի Լենինի շքանշանակիր ֆիզիկական կուլտուրայի կենտրոնական ինստիտուտի ասպիրանտուրան, պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, նույն թվականից ամբիոնի պրոֆեսոր է:

Բորիս Սաղյանը ՀՀ վաստակավոր մարզիչ է եւ ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր աշխատող: 1995 թվականից հայկական մանկավարժական համալսարանի գիտական աստիճաններ շնորհող խորհրդի անդամ է:

Սկսած 1972 թվականից՝ եղել է ինստիտուտի եւ «Բուրեվեստնիկ» ԿՄԸ հավաքական թիմի ավագ մարզիչ: Այդ ընթացքում նա պատրաստել է 36-ից ավելի սպորտի վարպետներ: 1976-1982թթ. Սաղյանը նշանակվել է ՀՀ ձյուդո ըմբշամարտի հավաքական թիմի մարզիչ: Այդ տարիներին ձյուդոյի հավաքական թիմը նկատելի հաջողություններ է ունեցել ԽՍՀՄ-ի առաջնություններում, գավաթի մրցումներում եւ սպարտակիադաներում:

Այսօր նա ղեկավարում է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ըմբշամարտի ամբիոնը: Պատրաստել է 12 գիտությունների թեկնածու, հեղինակ է մի շարք գիտական հոդվածների, ձեռնարկների, մենագրությունների եւ մեթոդական մշակումների:

ՇԱՀԵՆ ՆԻԿՈԼԱՅԻ ՋԱՆՅԱՆ

Շահեն Նիկոլայի Ջանյանը բավականին ներդրում ունի Ղարաբաղում ազատ ոճի ըմբշամարտի զարգացման եւ մասսայականացման գործում:

1954թ. ավարտել է Շուշիի ֆիզիկական կուլտուրայի ուսումնարանը, աշխատանքի անցել Մարտունու շրջանում՝ որպես ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի կոմիտեի նախագահ: 1955թ. ընդունվել ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ եւ այն ավարտել 1959 թվականին: Նույն ինստիտուտի ըմբշամարտի ամբիոնում երկար տարիներ բեղմնավոր մարզամանկավարժական գործունեություն է ծավալել: Շ. Ջանյանը մանկավարժական գիտությունների թեկնածու է, դոցենտ, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր մարզիչ, տվել է միջազգային օլիմպիական խաղերի մեկ մրցանակակիր (III տեղ):

ԱԼԻԽԱՆ ՆԵՐՍԵՍԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ծնվել է 1929թ. Ստեփանակերտ քաղաքում: Ըմբշամարտով սկսել է զբաղվել ԽՍՀՄ զինված ուժերում ծառայության ընթացքում: Ըմբշամարտի հանրահայտ մասնագետ է: 1961-65թթ. սովորել եւ գերազանցությամբ ավարտել է ՖԿՀՊ ինստիտուտի հեռակա բաժինը:

Լեռնային Ղարաբաղի բազմակի չեմպիոն, ԽՍՀՄ զինված ուժերի առաջնության հաղթող, գյուղական մարզական ընկերության բազմակի չեմպիոն է:

Ա. Մուրադյանը պատրաստել է լավագույն մարզիկներ՝ Բ. Բարսեղյան, Մ. Հարությունյան, Ս. Գրիգորյան, Յու. Բաղդասարյան: Նրա սաներից դարձել են մարզիչներ, քաղաքական գործիչներ, գիտության թեկնածուներ եւ դոկտորներ՝ /Ռ. Բեգլարյան, Բ. Սաղյան, Խ. Հարությունյան եւ ուրիշներ/:

2009թ. փետրվարին ԼՂՀ նախագահի հրամանագրով Ա. Մուրադյանին շնորհվեց ԼՂՀ ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործչի կոչում:

ՍԵՐՅՈԺԱ ՍԱՄՍՈՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ավարտել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը եւ ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը:

ԼՂՀ, Ադրբեջանի, Հայաստանի, Անդրկովկասի զինված ուժերի բազմակի չեմպիոն է, ԽՍՀՄ մրցանակակիր, ՀՀ անկախության օրվան նվիրված առաջին համաբանակային սպարտակիադայի հաղթող (60 տարեկանում):

Սամբո ըմբշամարտի գծով ԽՍՀՄ սպորտի վարպետ է /1963թ./, ԽՍՀՄ սպորտի վարպետ՝ ազատ ոճի ըմբշամարտի գծով /1964թ./:

ԲՈՐԻՍ ՎԵՐԴԻԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ծնվել է 1936թ.: Ավարտել Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը եւ ՖԿՀՊ ինստիտուտը:

1964-1998թթ. աշխատել է որպես ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ մայրաքաղաքի № 21 պրոֆտեխուսումնարանում: 1998-2001թթ. աշխատել է Ստեփանակերտի №10 միջն. դպրոցում, 2001-2005թթ.՝ Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանում:

Բորիս Բարսեղյանը (ձախից) եւ Շահեն Ջանյանը հուշանվերների փոխանակման ժամանակ

ՎՅԱՉԵՍԼԱՎ ՍԵՐԳԵՅԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Դասական (հունահռոմեական) ըմբշամարտի հիմնադիրը Լեռնային Ղարաբաղում: Սպորտի վարպետի թեկնածու, Ադրբեջանի բազմակի չեմպիոն, «Դինամո» համամիութենական մարզական ընկերության բազմաթիվ մրցումների մրցանակակիր:

Ծնվել է 1953թ. Ստեփանակերտում: Ըմբշամարտով զբաղվել է 6-րդ դասարանից: Նրա առաջին մարզիչը ՀՀ վաստակավոր մարզիչ Յուրի Բաբայանն էր: Հենց վաղ տարիքից մասնակցել է ԼՂՀ-ի, Ադրբեջանի, Անդրկովկասի տարբեր մրցաշարերի եւ բազմաթիվ անգամ հաղթող ճանաչվել դասական ըմբշամարտի գծով:

Երկար տարիներ որպես մարզիչ աշխատել է «Դինամո» մարզական ընկերությունում: Նրա սաներն ունեցել են փայլուն հաղթանակներ ինչպես հանրապետական, այնպես էլ համամիութենական առաջնություններում, որոնցից են սպորտի վարպետ Սամվել Բարսեղյանը, սպորտի վարպետի թեկնածուներ Արարատ Խաչատրյանը, Գրիգորի Հայրապետյանը, Վաչագան Իշխանյանը, Արթուր Իսրայելյանը, Վանիկ Մեհրաբյանը, Միշա Գասպարյանը: Վյաչեսլավ Բաղդասարյանը արցախյան շարժման ակտիվիստ էր, «Կռունկ» հասարակական-քաղաքական կազմակերպության գործունեությանը նպաստող պաշտպանական ուժային կառույցների գծով մարտիկ: Մեծ ակտիվությամբ նպաստել է պաշտպանական ջոկատների ձեւավորմանը: Մեծ դերակատարություն է ունեցել շարժման առաջին էտապի ազգամիջյան բախումների չեզոքացման գործում (1988-1990թթ.): Վ. Բաղդասարյանի հայրենասիրությունը շատ վարակիչ էր, եւ սաները դաստիարակվում էին ոչ միայն որպես մարզիկ, այլեւ երկրի նվիրյալ պաշտպաններ: Դրա վկայությունն է նրա բազում լավագույն սաների՝ պաշտպանության բանակի հրամանատարներ լինելը: Նրանք այսօր էլ երախտագիտությամբ հիշում են իրենց մարզիչի պատգամները եւ հավատարիմ են նրա սուրբ հիշատակին: Նրա անելիքները շատ էին ոչ միայն դասական ըմբշամարտի ասպարեզում, այլ նաեւ հայրենիքի պաշտպանության գործում: Հայրենիքի վտանգված պահին, սակայն, նրա կյանքի թելը դաժանորեն ընդատվեց ծանր հիվանդության պատճառով:

ՀԱՆԴԲՈԼ

ԼՂԻՄ-ում հանդբոլ խաղի հիմնադիր է համարվում ԼՂՀ վաստակավոր ուսուցիչ, ՀՀ ֆ/ս վաստակավոր աշխատող Սերգեյ Խորենի Խաչատրյանը: Խաղի ձեւավորման, ստեղծման սկիզբը ԼՂԻՄ-ում համարվում է 1962թ., երբ մարզժողկոմբաժնի վարիչ Հ.Մ.Օհանաջանյանը հանձնարարեց տեսուչ Ս.Խաչատրյանին դպրոցական տղաների ու աղջիկների թիմեր պատրաստել ու մասնակցել հունիսին կայանալիք Ադրբեջանի դպրոցականների սպարտակիադայի ծրագրով նախատեսված մրցումներին:

ԼՂՀ վաստակավոր ուսուցիչ Սերգեյ Խաչատրյան

Դժվար էր երեք ամսվա ընթացքում պատրաստել 2 հավաքական թիմ /տղաների ու աղջիկների/ եւ մասնակցել հանրապետական առաջնությանը, քանի որ մարզիչը եւ մարզիկները տարրական տեղեկություն չունեին ոչ սպորտաձեւի, ոչ մրցման կանոնների մասին:

Կարճ ժամկետում Ս.Խաչատրյանը ձեռք է բերում անհրաժեշտ գրականություն եւ գնդակ, դպրոցի փայտամշակման արհեստանոցում պատրաստել տալիս դարպասներ եւ դպրոցամերձ հրապարակում սկսում մարզումները:

Նորաստեղծ թիմերը համալրում էր տարբեր սպորտաձեւերով /վոլեյբոլ, բասկետբոլ, ֆուտբոլ/ պարապած աշակերտներով:

Համառ ու սիստեմատիկ պարապմունքներից հետո, մասնակցելով դպրոցականների հանրապետական սպարտակիադային, 12 թիմերի մեջ գրավեցին 3-րդ մրցանակային տեղը՝ առաջ թողնելով Բաքու եւ Սումգայիթ քաղաքների հավաքական թիմերին:

Առաջին հավաքական թիմի կազմում ընդգրկված էին Սոկրատ Մովսիսյանը, Սերժ Ազատյանը, Սլավա Հարությունյանը, Վալերի

Ասատրյանը, Ռաֆիկ Խաչատրյանը, Սլավա Կարաբեկովը, Լեոնիդ Բաղդասարյանը:

Հետագայում այդ սպորտաձեւը մեծ մասսայականություն վայելեց ոչ միայն Ստեփանակերտ քաղաքում, այլեւ մարզի շրջանների դպրոցականների մեջ:

Տարբեր ժամանակներում հանդբոլի մարզիչ են աշխատել Սերգեյ Խաչատրյանը, Ռոբերտ Համբարձումյանը, Սերժ Ազատյանը, Լեւոն Կարապետյանը, Խորեն Զաքարյանը, Սլավա Հարութունյանը, Վալերի Քոչարյանը, Բելլա Աղաջանյանը, Անահիտ Խաչատրյանը:

ԽՈՐԵՆ ԽԱՉԻԿԻ ԶԱՔԱՐՅԱՆ

Ծնվել է 1948թ. Մարտունու շրջանի Սմսնա գյուղում:

1966թ. ավարտել է Ստեփանակերտի №3 միջնակարգ դպրոցը:

1964-1967թթ. հաճախել է Ստեփանակերտի սպորտդպրոց՝ ընդգրկվելով հանդբոլի խմբակում /մարզիչ՝ Սերգեյ Խաչատրյան/: Մասնակցել է հանդբոլի քաղաքային, մարզային (1-ին տեղ) եւ հանրապետական մրցումների, գրավել մրցանակային տեղեր եւ լրացրել առաջին կարգի նորմա:

1967-1969թթ. ծառայել է խորհրդային բանակում (սպորտվաշտում), եղել է Տաջիկստանի ԽՍՀ չեմպիոն եւ մասնակցել ԽՍՀՄ առաջնությանը: Մասնակցել է նաեւ «Восток» Թուրքմենստանի ռազմական օկրուգի առաջնություններին եւ գրավել առաջին մրցանակային տեղը:

ԽՍՀՄ հակաօդային պաշտպանության առաջնություններում եւս գրավել է մրցանակային տեղեր:

1969թ. լրացրել է ԽՍՀՄ սպորտի վարպետի թեկնածուի նորմաները:

1969թ. ընդունվել է Ուզբեկստանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտի մանկավարժական ֆակուլտետի հեռակա բաժինը եւ ավարտել 1974թ.:

1970թ. Ադրբեջանի հավաքականի կազմում մասնակցել է ԽՍՀՄ առաջնությանը:

1970-1979թթ. Ստեփանակերտի սպորտդպրոցում աշխատել է որպես հանդբոլի ավագ մարզիչ: Պատրաստած թիմը միշտ եղել է ԼՂԻՄ-ի չեմպիոն, հանրապետական դպրոցական եւ պատանեկան առաջնություններում ու սպարտակիադաներում գրավել է մրցանակային տեղեր: Նրա սան Էդիկ Հակոբյանը ընդգրկվել է Ադրբեջանի պատանիների հանդբոլի հավաքականի կազմում եւ մասնակցել ԽՍՀՄ առաջնությանը: Նրա մարզիկներից զույգ եղբայրներ Գագիկ եւ Մխիթար Ավշարյանները ակտիվ մասնակցություն են ունեցել Արցախի ազգային-ազատագրական պայքարին: Գագիկը Շուշիի ազատագրման ժամանակ եղել է տանկի հրամանատար, որի «Հուշարձան-տանկը» գտնվում է Շուշիի մոտ՝ ժայռագագաթին: Գնդապետ է, Իջեւանի գնդի հրամանատար, ԼՂՀ եւ ՀՀ «Մարտական խաչ» II աստիճանի շքանշանակիր:

Գագիկ Ավշարյան

Մխիթարը եղել է տանկային գնդի հրամանատար, գնդապետ է: Ավարտելով ռազմական ակադեմիան՝ աշխատում է Մարտակերտի շրջանի դիվիզիայի հրամանատարի տեղակալի պաշտոնում: ԼՂՀ «Մարտական խաչ» երկրորդ, ապա առաջին աստիճանի շքանշանակիր:

Մխիթար Ավշարյան

Խորեն Զաքարյանը արցախյան շարժման ակտիվ մասնակից է, զգալի ներդրում ունի երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Արժանացել է մի շարք պատվոգրերի: Նրա ավանդը մեծ է Արցախում սպորտի, մանավանդ հանդբոլի զարգացման եւ տարածման մեջ:

Խորեն Զաքարյանի սան Էդիկ Հակոբյանը ընդգրկվել է Ադրբեջանի պատանիների հավաքականի կազմում եւ մասնակցել ԽՍՀՄ առաջնությանը:

ՍՏԱՆԻՍԼԱՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է 1951 թվականի փետրվարի 24-ին, Շուշի քաղաքում: 1967 թվականին ավարտել է Ստեփանակերտի №2 միջնակարգ դպրոցը, 1972թ.՝ ՖԿՀՊ ինստիտուտի մանկավարժական ֆակուլտետը: 1972 թվականից աշխատանքի է անցել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում, նախ՝ որպես ասիստենտ-դասախոս, իսկ 1977 թվականից՝ ավագ դասախոս:

1990 թվականին ընտրվել է ինստիտուտի ֆիզիկական դաստիարակության եւ ռազմագիտության ամբիոնի վարիչ՝ ղեկավարելով այն մինչեւ 2001 թվականը: 1988-ից դոցենտ է, հրատարակել է մեկ տասնյակից ավելի գիտամեթոդական հոդվածներ եւ մասնագիտական ձեռնարկներ: 2006թ. փետրվարի 1-ից նշանակվել է նույն ամբիոնի վարիչ: Նա հանդբոլով սկսել է պարապել 1964 թվականից՝ արցախյան հանդբոլի հիմնադիր-մարզիչ Ս.Խ. Խաչատրյանի ղեկավարությամբ: Ս.Ա. Հարությունյանը Արցախի հանդբոլի հավաքականի կազմում մասնակցել է մի շարք հանրապետական մրցումների՝ ճանաչվելով հաղթող եւ գրավելով մրցանակային տեղեր: Զգալի ներդրում ունի ուսանողության շրջանում հանդբոլի տարածման, ուսուցման եւ կատարելագործման ուղղությամբ:

1975-85թթ. համատեղության կարգով աշխատել է ԼՂԻՄ հանդբոլի հավաքականի թիմի ավագ մարզիչ, որի հիմնական կորիզն ուսանողներն էին:

Արդյունավետ աշխատանքի համար հանրապետական եւ մարզային սպորտկոմիտեի կողմից արժանացել է մի շարք պատվոգրերի:



ՎԱԼԵՐԻ ԵՓՐԵՄԻ ՔՈՉԱՐՅԱՆ

Հանդբոլով սկսել է զբաղվել 1965 թվականից /մարզիչ՝ Ս. Խաչատրյան/: Առաջին կարգային է 1970 թվականից: Մասնակցել է ԼՂՀ մարզային եւ հանրապետական տասնյակ մրցումների: 1968-78թթ. հանդես է եկել Ադր. ԽՍՀ հավաքականի կազմում: 1976թ. անցել է մարզչական աշխատանքի՝ որպես ավագ մարզիչ: Աշխատել է Ստեփանակերտի ՄՊՄԴ-ում եւ Կիեւ քաղաքի №15 սպորտդպրոցում /1980-81թթ./:

1983թ. Վ. Քոչարյանի ղեկավարած կանանց թիմը դարձել է մարզի չեմպիոն: Նույն թվականին թիմը Լենինգրադում կայացած համամիութենական մրցաշարում նվաճել է 3-րդ մրցանակային տեղը:

1984թ. Ադր. ԽՍՀ առաջնությունում Վ. Քոչարյանի գլխավորած ԼՂԻՄ կանանց հավաքականը գրավել է 3-րդ տեղը:

ԼՂՀ հանդբոլի մասսայականացման ու զարգացման գործում Վ. Քոչարյանի ունեցած ծառայությունները մեծ են:

ԱՐԹՈՒՐ ԲԱԲԿԵՆԻ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Ծնվել է 1962 թվականի դեկտեմբերի 2-ին, Ստեփանակերտ քաղաքում: Միջնակարգ կրթությունն ստացել է ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ճարտար գյուղում: 1981 թվականին ընդունվել եւ 1986 թվականին ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու է, դոցենտ, ԱրՊՀ ճարտարագիտական ֆակուլտետի դեկան:

ԼՂՀ ԱԺ պատգամավոր է, խորհրդարանական «Հայրենիք» խմ-

բակցության նախագահը, «Ազատ հայրենիք» կուսակցության համանախագահը:

1996 թվականի մարտի 12-ից մինչեւ 1997 սեպտեմբերի 4-ը եղել է ԼՂՀ ԱԺ նախագահ:

Հանդբոլով սկսել է զբաղվել Ճարտարի միջնակարգ դպրոցում: Մասնակցել է շրջանային եւ մարզային մի շարք մրցումների: Ինստիտուտում ուսանելու տարիներին մարզվել է Ս. Հարությունյանի ղեկավարությամբ, կատարելագործել խաղի տեխնիկան եւ տակտիկան:

1981-86թթ. ընդգրկվել է Արցախի հավաքականում: Առաջին կարգային է, արժանացել է մի շարք պատվոգրերի՝ քաղաքային, մարզային եւ հանրապետական սպարտակիադաներում հաղթող ճանաչվելու եւ մրցանակային տեղեր գրավելու համար:

ԲԵԼԼԱ ՀՐԱՉԻԿԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ

1967-1973թթ. եղել է Ադրբեջանի պատանիների հանդբոլի հավաքականի անդամ: Թիմի կազմում մասնակցել է բազմաթիվ համամիութենական մրցումների, միջազգային ընկերական հանդիպումների, 1972 թվականին Կիեւում՝ դպրոցականների համամիութենական սպարտակիադային:

1971-75թթ. աշխատել է Ստեփանակերտի մանկապատանեկան մարզադպրոցում՝ որպես հաստիքային մարզիչ:

80-ական թթ. ԼՂԻՄ հավաքականը, որի մարզիչն էր Բելլա Աղաջանյանը, մասնակցելով հանրապետական տարբեր մրցումների՝ պարգեւատրվել է արծաթե եւ բրոնզե մեդալներով:

ԱՆԱՀԻՏ ԳՐԻԳՈՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1965թ. Բաքու քաղաքում: 13 տարեկանից սկսել է մասնակցել համամիութենական տարբեր մրցումների: Ադրբեջանի բազմակի չեմպիոն է: 1980 թվականին Սվերդլով քաղաքում անցկացված հանդբոլի գծով համամիութենական մրցումներում աղջիկների միջեւ (1965-67թթ.) գրավել է առաջին տեղը: 1982 թվականին, Բաքվի «Ավտոմոբիլիստ» թիմի կազմում մասնակցելով ԽՍՀՄ առաջնությանը, 19-20 տարեկան աղջիկների միջեւ արժանացել է բրոնզե մեդալի:

Բաքվի Կիրովի անվան ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի ինստիտուտն ավարտելուց հետո աշխատանքի է նշանակվել Ստեփանակերտում, որտեղ էլ աշխատում է ցայսօր քաղաքային մանկապատանեկան մարզադպրոցում:

Աղջիկների եւ տղաների հավաքական թիմերը-մարզիչներ՝ աջից՝ Սերգեյ Խաչատրյան, ձախից՝ Լեւոն Կարապետյան

1968թ. Ադրբեջանի (մեծահասակների) առաջնությունում աղջիկների թիմը գրավել է 2-րդ պատվավոր տեղը

Մարզի հավաքական թիմը. կենտրոնում՝ մարզիչ Վալերի Քոչարյան

ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ՝ ԳՆԴԱԿԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՆԴԱՅԻՆ



ԼՂԻՄ-ում գնդակային եւ ստենդային հրաձգության հիմնադիրներն են Ապիկոն Թեւանի Ներսիսյանը եւ Արմավիր Աբելի Ավագյանը:

Տարիներ շարունակ մարզում հանդես են եկել մի շարք լավագույն հրաձիգներ:



ՌԱԴԻԿ ՁԻՆԱՎՈՐԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Ծնվել է 1935թ. Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղում, միջնակարգ դպրոցն ավարտել է Ստեփանակերտում: Հրաձգությամբ զբաղվել է 15 տարեկանից, սիրել է որսորդություն:

1954-58թթ. ծառայել է ԽՍՀՄ-ի զինված ուժերում /Բաքու քաղաքում/ եւ սկսել է զբաղվել ստենդային սպորտով:

Նա մասնակցել է Ադրբեջանի առաջնություններին, լրացրել սպորտի վարպետության թեկնածուի նորման: Այժմ բնակվում է Մարտակերտ քաղաքում:

ՎԱԼԵՐԻ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ծնվել է 1942թ. Ստեփանակերտ քաղաքում, միջնակարգ կրթությունն ստացել է №3 դպրոցում: Հրաձգությամբ սկսել է պարապել 1959 թվականից՝ ԴՕՍԱԱՖ-ին կից հրաձգարանում /մարզիչ՝ Ա.Ներսիսյան/: 1960թ. մինչեւ 1962թ. մասնակցել է քաղաքային, մարզային եւ հանրապետական մի

շարք մրցումների եւ գրավել առաջնակարգ տեղեր:

1965թ. Մերձբալթյան օկրուգի առաջությունում նա լրացնում է սպորտի վարպետի թեկնածուի նորման: Մասնակցել է հանրապետական մրցումներին՝ գրավելով առաջնակարգ տեղեր, ունի 1-ին կարգի մրցավարի վկայական: Արցախյան շարժման ակտիվ մասնակից է:

ՎԱԼԵՐԻ ԵՐՎԱՆԴԻ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Ծնվել է 1943թ. Ստեփանակերտ քաղաքում, միջնակարգ կրթություն է ստացել №3 դպրոցում: Գնդակային հրաձգությամբ սկսել է զբաղվել 1959թ.:

1960թ. դարձավ Լեռնային Ղարաբաղի չեմպիոն ՄՎ-4 վարժությունից: Նա եղել է մարզի եռակի չեմպիոն: 1963թ. մասնակցել է հանրապետական 3-րդ սպարտակիադային՝ գրավելով 1-ին մրցանակային տեղը եւ լրացրել սպորտի վարպետի թեկնածուի նորման:

Վալերի Մարությանը հայրենիքին անձնվեր ծառայության համար արժանացել է գնդապետի կոչման եւ պարգեւատրվել «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով եւ այլ մեդալներով:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԲԵՆԻԿ ՇՄԱՎՈՆԻ

Ծնվել է 1944թ. Ստեփանակերտում: Ավարտել է քաղաքի № 2 միջն. դպրոցը: Դպրոցական տարիքից պարապել է հրաձգությամբ՝ մարզիչ Ա.Ներսիսյանի խմբում:

Մասնակցել է քաղաքային, մարզային եւ հանրապետական առաջնություններին: Զինվորական ծառայության տարիներին շարունակել է կատարելագործել իր ունակություն-

ները հրաձգությունից «Վազող վարազ» եւ «Վազող եղնիկ» վարժաձեւերում:

1965 թվականից ԽՍՀՄ սպորտի վարպետ է, տարբեր առաջնությունների մրցանակակիր:



ԴԱՆԻԵԼՅԱՆ ՅՈՒՐԻ ԵՐՎԱՆԴԻ

Ծնվել է 1944թ. Ստեփանակերտ քաղաքում: Միջնակարգ կրթությունն ստացել է №3 դպրոցում: Դպրոցական տարիներին հաճախել է հրաձգության խմբակ: Եղել է Ստեփանակերտի եւ մարզի լավագույն հրաձիգներից մեկը: 1961-62թթ. մարզի չեմպիոն էր:

1963թ., մասնակցելով Ադրբեջանի հերթական սպարտակիադային, գրավել է մրցանակային տեղ:

Խորհրդային բանակում ծառայության տարիներին, մասնակցելով զինված ուժերի առաջնություններին, զբաղեցրել է 1-ին, 2-րդ, 3-րդ մրցանակային տեղեր:

1966 թվականից սպորտի վարպետի թեկնածու է:

ՄԻՔԱՅԵԼ ԳԱԲՐԻԵԼԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ծնվել է 1945թ. Ստեփանակերտ քաղաքում: Միջնակարգ կրթությունն ստացել է №2 դպրոցում: Դպրոցական տարիներից զբաղվել է հրաձգությամբ: 1960թ. մասնակցել է մարզային առաջնություններին, գրավել 1-ին եւ 2-րդ տեղերը: 1962-63թթ. մարզի չեմպիոն էր: 1963թ. մասնակցել է դպրոցականների 3-րդ սպարտակադիային՝ գրավելով 3-րդ պատվավոր տեղը եւ

լրացրել 1-ին կարգի նորման:

1964թ. զորակոչվել է ԽՍՀՄ-ի զինված ուժեր:

1965թ. մասնակցել է ԽՍՀՄ-ի ՋՈՒ առաջնությանը Կիեւ քաղաքում եւ ՄՎ-9 վարժությունից գրավել 3-րդ պատվավոր տեղը:

1966թ. Բեռլին քաղաքում անցկացված ընկերական հանդիպման հաղթող է:

1967թ. զորամիավորումների առաջնությունում «Ազատ հրացան-3» դրությունից գրավել է 2-րդ պատվավոր տեղը, դարձել սպորտի վարպետ:

Տասնյակ տարիներ աշխատել է դպրոցներում՝ որպես զինղեկ եւ «Դինամո» ընկերությունում՝ մարզիչ: Պատրաստել է սպորտի վարպետներ, տասնյակ առաջին, 2-րդ կարգի հրաձիգներ: Ակտիվորեն մասնակցել է Արցախի ազատագրմանը, հատուկ ծառայությունների համար շնորհվել է փոխգնդապետի կոչում եւ «Արիության համար» մեդալ:

Այժմ ղեկավարում է Մարտակերտի շրջանային մարզադպրոցը:



ԴԱՆԻԵԼՅԱՆ ՅԱՇԱ ԵՐՎԱՆԴԻ

Ծնվել է 1946թ. ք. Ստեփանակերտում: Միջնակարգ կրթությունն ստացել է №3 դպրոցում: Հրաձգությամբ սկսել է զբաղվել դպրոցական տարիներից ԴՕՍԱԱՖ-ի հրաձգարանում /մարզիչ՝ Արմավիր Ավագյան/: Նա Ստեփանակերտի դպրոցականների՝ 1966թ. չեմպիոնն էր: Մասնակցել է մի շարք հանրապետական մրցումների եւ ցուցաբերել գերազանց արդյունքներ: Ունի հրաձիգի առաջին կարգ:

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1960թ. Մարտունու շրջանի Հացի գյուղում: Տարրական կրթությունն ավարտելուց հետո տեղափոխվում է Ստեփանակերտ, ուսումը շարունակում 9-րդ դպրոցում: Ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Մարգարիտը դեռեւս դպրոցում սովորելիս հետաքրքրվում էր հրաձգությամբ, մասնակցում «Դինամո» ընկերության հրաձգասպորտային ակումբի պարապմունքներին /մարզիչ՝ Մ. Գաբրիելյան/:

Ստեփանակերտի եւ մարզի չեմպիոն էր: Մասնակցել է Ադրբեջանի հանրապետության առաջնություններին՝ գրավելով մրցանակային տեղեր, լրացրել 1-ին կարգի նորման:

Շուշիի ազատագրումից հետո ստեղծվում է Կանանց ջոկատ: Նա առաջիններից էր, որ անդամագրվեց ջոկատին, եւ դարձավ Արցախի առաջին կին դիպուկահարը:

Որպես հրաձիգ՝ նրան վստահեցին Դրագունով միակ հրացանը:

Խիզախ նշանառուն, մասնակցելով մարտական գործողություններին, աչքի է ընկել քաջությամբ ու խիզախությամբ: Հետմահու պարգեւատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով եւ այլ մարտական մեդալներով:

ԱՌՍՏԱՄՅԱՆ ԿԱՌԼԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ

Ծնվել է 1960թ. Ստեփանակերտ քաղաքում, սովորել №3 դպրոցում: Նա եղել է մարզի ուժեղագույն հնգամարտիկը:

1976թ. ԼՂԻՄ-ի հավաքականի կազմում ԽՍՀՄ-ի դպրոցականների առաջնությունում գրավել է 1-ին պատվավոր տեղը՝ լրացնելով առաջին կարգ:

Արցախի ազատագրման ակտիվ մասնա-

կից է, որի համար արժանացել է «Արիության համար», «Մայրական երախտագիտություն», «Շուշիի ազատագրման համար» եւ այլ մեդալների:

ՆԳՆ ավտոտեսչության պետ է, փոխգնդապետ:



ԲԱԼԱՅԱՆ /ՖԻՐՅԱՆ/ ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՎՐՈՒՇԻ

Ծնվել է 1962թ. Բաքու քաղաքում: 1976 թվականից զբաղվում է ստենդային հրաձգությամբ: 1979թ. Կաունասում «Դինամո» ընկերության կենտրոնական խորհրդի առաջնությունում գրավել է 1-ին տեղը, հաջորդ տարի Վիլնյուսում՝ 2-րդ տեղը:

1980թ. Սվերդլովսկում ԽՍՀՄ առաջնությունում գրավել է 4-րդ տեղը, դարձել ԽՍՀՄ սպորտի վարպետ:

1982թ. Վորոշիլովգրադում ԽՍՀՄ առաջնության «Մինչեւ վրիպում» վարժաձեւում գրավել է 1-ին տեղը եւ 2-րդ տեղը՝ ԽՍՀՄ անհատական առաջնությունում:

Մասնակցելով համամիութենական բազմաթիվ սպորտային ընկերությունների առաջնությունների՝ գրավել է առաջնակարգ տեղեր:

1983թ. Ալմա-Աթայում ԽՍՀՄ ուժեղագույն հրաձիգների համամիութենական մրցումներում գրավել է 3-րդ տեղը:

1987թ. Օդեսայում ԽՍՀՄ գավաթի մրցումներում գրավել է 2-րդ տեղը: Նույն թվականին Մոսկվայում, ԽՍՀՄ հավաքականի կազմում մասնակցելով աշխարհի գավաթի խաղարկությանը, գրավել է 6-9-րդ տեղը:

1978-88թթ. Ադրբեջանի չեմպիոնատների բազմակի չեմպիոն է եւ մրցանակակիր:

1994 թվականից աշխատում է Ստեփանակերտի ՄՊՄԴ-ում, 1999-ից՝ որպես տնօրեն:

ԿԱՄՈ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԼՂՀ պաշտպանության բանակի սպա: Մասնակցելով ԱՊՀ պետությունների զինված ուժերի սպարտակիադայի ընտրական մրցումներին՝ հրաձգությունից՝ ԿԱ-74-ից, գրավել է 1-ին տեղը: 2001թ. ՀՀ ԶՈՒ համաբանակային 7-րդ սպարտակիադայում հրաձգություն «ԱԿ» մարզաձեւում գրավել է 1-ին տեղը:

2003-2005թթ. ՀՀ ԶՈՒ համաբանակային սպարտակիադաների եզրափակիչ փուլում հրաձգությունից ԱԿ-74 վարժաձեւից գրավել է 1-ին տեղը:

ԽՍՀՄ գավաթի առաջնություն (1986թ.)
Սվետլանա Ֆիրյան

Ուսումնամարզական հավաք
Զագուլբա 1986թ. դեկտեմբեր, Սվետլանա Ֆիրյան ձախից

Մրցման պահ

ԾԱՆՐԱՄԱՐՏ



Արցախում ծանրամարտի զարգացման պատմության բնագավառում մեծ տեղ ունեն մի քանի էնտուզիաստներ.

ՋՈՐԻ ՀԱՅԿԻ ԲԱԼԱՅԱՆ

Ծնվել է 1935թ. փետրվարի 10-ին Ստեփանակերտում:

1963թ. ավարտել է Ռյազանի /Ռուսաստան/ Ի. Պ. Պավլովի անվան պետական բժշկական ինստիտուտը, մասնագիտացել թերապիայի եւ սպորտային բժշկության ոլորտում: Հայ անվանի գրող եւ հրապարակախոս, ականավոր ազգային գործիչ, մարզական, հասարակական խոշոր գործիչ եւ ճանապարհորդ: 1953-57թթ. ծառայել է Բալթյան ռազմածովային նավատորմում:

1963-73թթ. աշխատել է Ռուսաստանի Դաշնության Կամչատկայի մարզում՝ որպես բժիշկ եւ սպորտային բժշկության դիսպանսերի գլխավոր բժիշկ: ԽՍՀՄ սպորտի վարպետ՝ ծանրամարտից /1958թ./ եւ նավակներով հեռավոր ճանապարհորդությունից /1972թ./: 1965,1967 եւ 1970թթ. իր երկու ընկերների հետ «Վուլկան» եւ «Հեյզեր» ինքնաշեն նավակներով Խաղաղ եւ Ատլանտյան օվկիանոսների, Ասիա եւ Եվրոպա մայր ցամաքների ներքին ծովերով եւ գետերով անցել է 32000կմ.:

Այնուհետեւ 1972-73թթ. ձմռանը, շնասահնակով մեկնարկելով Կամչատկայի եւ Չուկոտկայի տունդրաներից, անցնելով 14000կմ,

հասել է Հյուսիսային սառուցյալ օվկիանոս:

Հայոց միջնադարյան «Կիլիկիա» պետության /1080-1375թթ./ նավագնացության պատմությունը եւ նավարկության ջրուղիները ճշգրտելու, նավագնացության իրականությունը ապացուցելու նպատակով «Կիլիկիա» առագաստանավով՝ որպես էքսպեդիցիայի ղեկավար, 2005-2006թթ. մասնակցել է Եվրոպայի շուրջ նավարկությանը:

1964-1973թթ. միաժամանակ եղել է Կամչատկայի «Էստաֆետ» մարզական թերթի գլխավոր խմբագիրը: 1973-74թթ. աշխատել է Երեւանի սպորտային բժշկության դիսպանսերում որպես բժիշկ, իսկ 1975թ.-ից մինչեւ օրս Ռուսաստանի Դաշնության «Լիտերատուրնայա գազետա» թերթի Հայաստանի սեփական թղթակիցն է: Մարզական թեմաներով շուրջ 200 գիտական եւ հանրամատչելի հոդվածների հեղինակ է, ուր բարձրացվում են սպորտի, օլիմպիական շարժման, ֆիզիկական դաստիարակության տեսության հիմնահարցեր:

Բազմաթիվ գեղարվեստական եւ վավերագրական գրքերի հեղինակ, որոնց հերոսները ամուր կամքի տեր ուժեղ անհատներ են:

Զորի Բալայանի սցենարով նկարահանվել է երկսերիանոց «Գոտեմարտ» ֆիլմը:

Զորի Բալայանն իրավամբ համարվում է Ղարաբաղյան շարժման առաջամարտիկներից մեկը:

Տեղին է հիշել Ամենայն հայոց կաթողիկոս, երջանկահիշատակ Վազգեն Ա-ի խոսքերը Զորի Բալայանի մասին. «...Ուզում եմ համբուրել Զորիի ճակատը այն բանի համար, որ սովորեցնում է մեզ, թե ինչպես պետք է սիրել հայրենիքը», իսկ հայ ժողովրդի մեծագույն բարեկամ, աշխարհահռչակ գիտնական, ակադեմիկոս Անդրեյ Սախարովը նշում է. «Զորի Բալայանը Ղարաբաղյան շարժման նախաձեռնողներից մեկն է, նրանից ուղղակի Ղարաբաղի շունչ է փչում եւ հայրենիքի սեր»:

Նրա ծառայությունները բարձր են գնահատվել պետության եւ ժողովրդի կողմից: Զորի Բալայանը ընտրվել է ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր /1989-91թթ./, Ղարաբաղի ժողովրդական պատգամավոր /1991-1994թթ./: Նա ծանրամարտի գծով համամիութենական կարգի մրցավար է, ընտրվել է Կամչատկայի մարզի ծանրամարտի ֆեդերացիայի նախագահ /1964-73թթ./, Հայաստանի սամբո ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ /1981թ./, այնուհետեւ՝ պատվավոր նախագահ:

Զորի Բալայանը ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ է:

Գրական գործունեության համար արժանացել է ԽՍՀՄ ժուռնալիստների միության դափնեկրի կոչման, ԽՍՀՄ Օստրովսկու անվան եւ Հայաստանի Մ. Նալբանդյանի անվան մրցանակների, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի:

Զորի Բալայանը պարգեւատրվել է Հայաստանի «Մովսես Խորենացի» մեդալով /1998թ./ ԼՂՀ «Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով եւ «Արիության համար» մեդալով /1998թ./: Նաեւ արժանացել է ԼՂՀ պետական բարձրագույն պարգեւի՝ Ազգային հերոսի կոչման՝ պարգեւատրվելով «Ոսկե արծիվ» շքանշանով:

ՅՈՒՐԻ ՍԱՐԳՍԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Ծնվել է 1937թ. Ստեփանակերտ քաղաքում: 1952թ. Կիրովաբադ քաղաքում Ադրբեջանի առաջնությունում թեթեւքաշային կարգում գրավել է 3-րդ պատվավոր տեղը:

1957թ. Ադրբեջանի «Սպարտակ» մարզական ընկերության առաջնությունում գրավել է 1-ին տեղը: ԼՂԻՄ բազմակի չեմպիոն է: Ադրբեջանի հավաքականի կազմում Ռիգայում մասնակցել է ԽՍՀՄ առաջնությանը, որտեղ լրացրել է սպորտի վարպետի թեկնածուի նորման:

1959-75թթ. աշխատել է որպես մարզիչ: Պատրաստել է սպորտի վարպետի թեկնածուներ Գուրգեն Աղաբեկյանին եւ Աբել Շահրամանյանին:

ՄԻՔԱՅԵԼ ԱՎԱՆԵՍԻ ԹԱՌԱՆՅԱՆ

Ծնվել է 1939թ. Ստեփանակերտ քաղաքում:

Սպորտի վարպետի թեկնածու: 1959թ. սկսել է պարապել ծանրամարտով /մարզիչ Յու. Մեսրոպյան/, ԼՂԻՄ չեմպիոն, մասնակցել է Ադր. ԽՍՀ առաջնություններին եւ գրավել տարբեր մրցանակային տեղեր:

1971թ. Բաքվում՝ Ադրբեջանի առաջնությունում, գրավել է 3-րդ, 1973թ. Սումգայիթում՝ 2-րդ, 1979թ. «Սպարտակ» ԿՍԸ մրցումներում՝ 1-ին մրցանակային տեղերը:

1978թ. Բաքվում տեղի ունեցած մրցումներում լրացրել է սպորտի վարպետի թեկնածուի նորման՝ կիսաթեթեւ քաշում:

1974թ. աշխատել է նաեւ որպես մարզիչ:

ՍՈՒՐԵՆ ԻԼՅԻՉԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ծնվել է 1966թ. Ստեփանակերտում:

1973-83թթ. սովորել է Ստեփանակերտի № 2 միջն. դպրոցում:

1980թ. մարզիչ Արթուր Առաքելյանի մոտ պարապել է ծանրամարտով:

1982թ. դարձել է ԽՍՀՄ սպորտի վարպետ: Մասնակցել է ծանրամարտի մրցումներին եւ գրավել հետեւյալ մրցանակային տեղերը.

- ԽՍՀՄ պատանիների չեմպիոնատ /1-ին տեղ՝ 1981թ., 2-րդ տեղ՝ 1982թ., 3-րդ տեղ՝ 1983թ./:
- Միջին Ասիայի եւ Ղազախստանի չեմպիոնատ-2-րդ տեղ,
- Դպրոցականների համամիութենական 16-րդ սպարտակիադա - 6-րդ տեղ

- Ադրբեջանի սպարտակիադա - 1-ին տեղ.
- ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադա - 6-րդ տեղ,

3 տարվա ընթացքում 7 անգամ արժանացել է Ադրբեջանի չեմպիոնի կոչման (պատանիների, երիտասարդների եւ մեծահասակների միջեւ):

- «Սպարտակ» ԿՍԸ Ադրբեջանի բազմակի չեմպիոն:

1995թ. ավարտել է Երեւանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը:

1985-87թթ. աշխատել է Ստեփանակերտի մանկապատանեկան սպորտդպրոցում՝ որպես ավագ մարզիչ, 1987-92թթ.՝ որպես տնօրեն: Արցախյան ազատամարտի մասնակից է, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր, ծառայում է ԿՊԾ-ում:

ՌՈՄԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Երկար տարիներ աշխատել է Մարտակերտի շրջանի գյուղական ընկերության ղեկավար, բազմաթիվ անգամ մասնակցել է ԼՂԻՄ եւ Ադրբեջանի առաջնություններին ու գրավել մրցանակային տեղեր:

1998թ. ստեղծվել է ԼՂՀ-ի ծանրամարտի ֆեդերացիա, որի նախագահ է ընտրվել Մարատ Հակոբջանյանը: Նույն ժամանակ Երեւանից հրավիրվել է շնորհալի մարզիչ Էդուարդ Դարբինյանը, որի սաները դարձան Հայաստանի մրցանակակիրներ:

ՆԻԿՈԼԱՅ ԹԵՎՈՍԻ ՆԱՎԹԱԼՅԱՆ

Ծնվել է 1918թ. ԼՂ Մարտակերտի շրջանի Կարմիրավան գյուղում: Երեք եղբայրներ են եղել՝ Ներսես, Նիկոլայ, Միքայել: Թե մյուս եղբայրները որքանով էին Նիկոլային նման, մեզ հայտնի չէ: Իսկ Նիկոլայը, Սերգո Համբարձումյանի պես, զբաղվել է գյուղի ամենատարբեր աշխատանքներով:

Պատերազմից առաջ տրակտորիստ է եղել: Մի անգամ, երբ շերեփը փչանում է, մեր հսկան ստիպված է լինում մետաղյա ծանր շերեփը քարշ տալով

հասցնել մեքենատրակտորային կայան՝ վերանորոգման:

Մի «մանրուք» եւս: Մեկի հետ վիճաբանում, բայց ծեծել չի ուզում, խնայում է հակառակորդին եւ ստիպված շպրտում է մի քանի մետր այն կողմ ու հարցը լուծում «գեղական կարգով»:

Ափսոս, մեզ հայտնի չէ, թե Կոլյան Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ինչ ուղի է անցել, ինչ սխրանքներ է կատարել, ինչպիսի միջադեպեր են եղել: Միայն գիտենք, որ հսկա հայորդին 1945-ին հաղթանակով վերադառնում է հայրենի գյուղ: Միառժամանակ զբաղվում է գյուղատնտեսական աշխատանքներով, բայց զգում է, որ իր գերբնական ուժով, իր մարմնի կառուցվածքով ու առողջ ատամնաշարով կարող է այլ աշխատանքով զբաղվել՝ արմանք ու զարմանք պատճառելով բազմահազար հանդիսականների:

Փաստորեն Նիկոլայ Նավթալյանը ուղիղ 40 տարի ելույթներ է ունեցել հայրենի Արցախում, Ադրբեջանում, Հայաստանում, Վրաստանում, Ռուսաստանում, միջինասիական հանրապետություններում:

Մահացել է 1985թ. Երեւանում:

Պահպանվել է Նիկոլայ Նավթալյանի՝ տարբեր ժամանակների (1954-1976թթ.) ծրագրերից 10 օրինակ:

Ահա դրանցից մեկը.

1. Մեջքին պառկած վիճակում կրծքի վրա կոտրում են մեկ տոննանոց քար:
2. Ատամներով բարձրացնում է 400կգ ծանրություն:
3. 70կգ ծանրություն գլխի վրայով ետ նետել ատամներով:
4. Նեղ ռելսի ծռում ուսերի վրա՝ 30 հոգու մասնակցությամբ:
5. Նույնը՝ ատամների օգնությամբ:
6. 15սմ մեխը ձեռքի հարվածով տախտակին խփել:
7. Նույն մեխը հանել ատամներով:
8. Ատամներով ծռում է 3սմ հաստությամբ անիվի երկաթե ծողը:
9. Չիլ ավտոմեքենան 20 մարդով անցնում է նրա մարմնի վրայով:
10. 3սմ հաստությամբ երկաթե ծողը փաթաթել թեւին:
11. 15սմ երկարությամբ 3 մեխեր փաթաթել միմյանց:

12. 15սմ երկարությամբ 8 մեխերից ատամներով շղթա է պատրաստում:
13. Ատամներով կտրում է 15սմ-անոց մեխը:
14. Ատամներով բարձրացնում է 400կգ-անոց ձի:
15. Ատամներով բարձրացնում եւ պտտեցնում է իր շուրջը տարբեր մարդկանց:
16. 40 հոգու մասնակցությամբ ուսերի վրա կոտրում է հեռախոսասյունը:
17. Ճկույթով բարձրացնում է 2 փութ ծանրույթը:
18. Մեկ ձեռքով 2 հատ 2 փթանոց կշռաքարերով սեղմում կատարում:
19. Հորիզոնական դիրքում թեւի վրա ճկույթով պահում է 2 փթանոց կշռաքարը:
20. «Կամուրջ» դիրքում ծնոտի վրա պահում է 2 հոգու, կրծքի վրա՝ 3:
21. Երկու ձեռքերի մատները հագցրած միմյանց՝ աջ ու ձախ կողմերից 30 հոգի ձգում են, որ անջատեն:
22. Խնձորակի միջոցով մեկ հոգու՝ ատամներով, 3 հոգու ուսերի վրա պտտեցնում է իր առանցքի շուրջ:

Այսքանից հետո վերլուծություններն ավելորդ են: Միայն հավելենք, որ բազկամարտ մարզաձեւը լիներ, մեր հայրենակիցն, անշուշտ, աշխարհի չեմպիոն կդառնար...

Վալտեր Ասծատուրի Այդինյան 11.01.2007թ. Երեւան

ՀՀ ԿԿ Կենտկոմի I քարտուղար
Ա. Քոչինյանը (ձախից առաջինը) եւ
Ն. Նավթալյանը (աջից առաջինը)
ծառատունկի պահին

ՁՅՈՒԴՈ

Ստեփանակերտում ձյուդոյի առաջին խմբակը ստեղծվել է 1970-ական թվականներին՝ Հենրիխ Աբրահամի Արսենյանի ջանքերով:

1980թ. օգոստոսի 20-ի թիվ 30 հրամանով Գեորգի Ստավրովիչ Պոլտաչովը՝ բարձրագույն մասնագիտական կրթությամբ, նշանակվել է «Դինամո» մարզական ընկերության «Ձյուդո» ըմբշամարտի մարզիչ:

1989թ. Սումգայիթից Արցախ բռնագաղթած Իվան Արտյուշայի Ազիզբեկյանը իր աշխատանքը սկսեց մարզում՝ ձյուդոյի մասսայականացման բնագավառում՝ որպես մարզիչ:

Ադրբեջանի դպրոցական սպարտակիադաների բազմակի չեմպիոն է, 80-ական թվականներին հանրապետական առաջնությունների չեմպիոն եւ մրցանակակիր:

1990թ. Ղարաբաղում բացվեց Երեւանի օլիմպիական հերթափոխի հանրապետական մանկապատանեկան մարզադպրոցի մասնաճյուղը:

1996թ. ԼՂՀ-ում ստեղծվեց ձյուդոյի ֆեդերացիա, որի նախագահը եղել է ԼՂՀ ՊԲ նախկին հրամանատար, նախարար, այժմ՝ ՀՀ ՊՆ Սեյրան Մուշեղի Օհանյանը:



Այսօր ԼՂՀ ձյուդոյի ֆեդերացիան գլխավորում է Իվան Ազիզբեկյանը:

Լավագույն ձյուդոիստներից են՝ Բ. Զաքարյանը, Ա. Հայրապետյանը, եղբայրներ Հրայր, Սամվել եւ Նաիրի Եսայանները, Մ. Ավանեսյանը, Գ. Բախտամյանը, Ա. Վանյանը, Ա. Թառանյանը, Ա. Տուռնովը եւ ուրիշներ, որոնցից շատերն այսօր, որպես մարզիչ, ձյուդոիստների նոր հերթափոխ են պատրաստում:

Աղջիկների խմբում աչքի են ընկնում խմբի ավագ Սուսաննա Պողոսյանը, քույ-

Աշոտ
Հայրապետյան

Սուսաննա
Պողոսյան

րեր Ինգա եւ Իննա Առստամյանները, Ա. Ավետիսյանը, Է. Ավանեսյանը եւ այլք:

Շագանակագույն գոտու արժանացած լավագույն մարզիչներ են Սուսաննա Պողոսյանը, Աշոտ Հայրապետյանը /1991թ. ՀՀ չեմպիոն կվալիֆիկացիոն մրցումներում/ եւ Սամվել Եսայանը:

Ավագներից էստաֆետն ընդունել եւ պատվով շարունակում են ՀՀ չեմպիոններ /պատանիների միջեւ/ Գոռ Ազիզբեկյանը, Գրիշա Սարգսյանը, իսկ Սոսե Բալասանյանը եւ Մասիս Հարությունյանը դարձել են միջազգային մրցաշարի մասնակիցներ: Նրանք ակտիվ մասնակցություն են ունեցել Արցախի ազգային ազատագրական պայքարում, իսկ Բորիս Զաքարյանը 1993թ. հունվարին 5-ին հերոսաբար զոհվել է Լաչինի (Քաշաթաղ) շրջանի Խինգա գյուղի ազատագրման ժամանակ:

ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Գոռ Ազիզբեկյան

Գրիշա Սարգսյան

Սոսե Բալասանյան

ԼՂՀ առաջնության չեմպիոններ եւ մրցանակակիրներ (2008թ.) Վերեւից կենտրոնում մարզիչ Իվան Ազիզբեկյանը-աջից, ձախից՝ ԼՂՀ սպորտի կոմիտեի նախկին նախագահ Լեռնիկ Ղալայանը

Մրցանակակիրներին պարգեւատրում է ֆեդերացիայի նախագահ Իվան Ազիբեկյանը



Աղջիկների մրցամարտ

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ

1920-ական թթ. երկրորդ կեսին նորաստեղծ ԼՂԻՄ-ում մարմնամարզությունից տարածված են եղել մարմնամարզական համալիր վարժություններ՝ ձգումներ եւ մագլցումներ:

Կարճ ժամանակ անց նկատվում է զգալի աշխուժություն մարմնամարզություն մարզաձեւում:

1934թ. մայիսի 14-20-ը անցկացվեց առաջին մարզային սպարտակիադան եւ ֆիզկուլտուրնիկների շքերթը, որի բացման ժամանակ ցուցադրվեց մասսայական մարմնամարզական ելույթ /գործիքների վրա եւ ազատ վարժություններ/:

1934թ. փետրվարի 27-ից մինչեւ մարտի 1-ը անցկացվեց Ադրբեջանի սպորտային մարմնամարզության անդրանիկ առաջնությունը: ԼՂԻՄ թիմը գրավեց՝ կանայք՝ 7-րդ, տղամարդիկ՝ 8-րդ տեղը:

1935թ. մայիսի 8-11-ը Բաքվում Ադրբեջանի երկրորդ մարմնամարզական մրցումներին մասնակցեց նաեւ ԼՂԻՄ-ի 16 հոգանոց /8 աղջիկ, 8 տղա/ հավաքականը: Կանանց թիմը շրջանների թիմերի միջեւ 3-րդ կարգի վարժություններով գրավեց 1-ին տեղը:

1935-36թթ. մարմնամարզական սեկցիաներ էին գործում Ստեփանակերտում, Շուշիում եւ Հադրութում:

1936թ. Ստեփանակերտում տեղի ունեցավ 2-րդ մարզային սպարտակիադան՝ 370 մարզիկների մասնակցությամբ: Նույն թվականի ապրիլին մարզի հավաքականը, 3-րդ կարգայինի իրավունքով մասնակցելով Բաքվում անցկացված մարմնամարզական 3-րդ տոնին, հասակակիցների մեջ գրավեց 1-ին տեղը:

Ժամանակի աչքի ընկնող մարզիչներից էր Սերգեյ Այվազովը:

1938թ. ԼՂԻՄ-ի ֆիզկուլտուրայի կոմիտեի նախագահ Ջալալ Գալստյանի միջնորդությամբ Ադրբեջանի ֆիզկուլտուրայի եւ սպորտի կոմիտեն թույլատրում է մարզում ստեղծել ակրոբատիկայի խմբակ, որտեղ ձեւավորվեցին ապագա ակրոբատներ Մինասյա-

նը, Խեչոյանը եւ այլք:

1939թ. նոյեմբերի 7-ից 26-ը տեղի ունեցան դպրոցականների հանրապետական մրցումներ, որտեղ մարզի թիմերը /տղաներ եւ աղջիկներ/ ընդհանուր թիմային հաշվարկում գրավեցին 2-րդ տեղը:

1940թ. հունիսի 30-ին ԼՂԻՄ-ի պատվիրակությունը մասնակցեց Ադրբեջանի ֆիզկուլտուրնիկների առաջին փառատոնին եւ սպորտային մարմնամարզական ելույթին հետեւյալ նշանաբանով՝ «ԼՂԻՄ-ը որպես Լեռնային Ղարաբաղի ամրոց՝ Ադրբեջանի հարավում»:

Հայրենական մեծ պատերազմը չընդհատեց ֆիզկուլտուրային շարժումը Ղարաբաղում:

1941-45թթ. արխիվային օրացուցային պլանները վկայում են, որ այդ տարիներին Ղարաբաղի մարզիկները ակտիվ մասնակցություն են ունեցել հանրապետությունում անցկացված բոլոր մարմնամարզական միջոցառումներին:

1947թ. փետրվարին անց է կացվել Ադրբեջանի մարմնամարզության մարզիչների հավաք, որին ԼՂԻՄ-ից մասնակցել է Սերգեյ Զավադի Հարությունյանը:

1949-ին ԼՂԻՄ-ի թիմը, մասնակցելով հանրապետական առաջնությանը, գրավել է 2-րդ պատվավոր տեղը:

1950թ. մարզում կային երկու 2-րդ /Ավետիսյան Յակով եւ Մելքումյան Ռոբերտ/, տասնհինգ 3-րդ եւ տասնհինգ պատանեկան կարգայիններ:

Բորիս Շահենի
Հայրապետյան

1950թ. նոյեմբերին մարզի հավաքական թիմը, մասնակցելով հանրապետական առաջնության 3-րդ խմբի մրցումներին (սպորտային եւ գեղարվեստական մարմնամարզություն եւ ակրոբատիկա), գրավել է 2-րդ տեղը: Անհատական մրցումներում սպորտի վարպետի նորմայով 1-ին տեղ են գրավել Սերգեյ Այվազովը եւ Թամարա Մելքումովան:

Հետագայում Սերգեյ Այվազովը դարձել է մարզի հավաքականի մարզիչ եւ առաջին կարգի մրցավար:



Ռազմիկ Զաքիյան

Անահիտ
Աղաջանյան
ԼՂԻՄ չեմպիոն

1951թ. ԼՂԻՄ-ն ունեցել է երկու հիանալի ակրոբատ՝ Բորիս Շահենի Հայրապետյան եւ Ռազմիկ Զաքիյան, ովքեր հանրապետության բազմակի մրցանակակիրներ էին:

1956թ. կայացավ ԼՂԻՄ-ի հերթական սպարտակիադան, որտեղ անհատական ծրագրով ելույթ ունեցան 9 մարզիկ:

Նշված մարզաձեւում աչքի ընկած մարզիկներ էին Արմիկը, Սոնյա Հայրիյանը, Ռոմելան, Ռիման, Վարյան, Նելլի Մարգարյանը, Վալերի Թավադյանը, Վլադիմիր Փիրումյանը, Ալիկ Աղասարյանը, Ալիկ Հարությունյանը, Ստանիսլավ Սարգսյանը /սպորտի վարպետի թեկնածու/, Լեոնիդ Զաքարյանը, Անահիտ Աղաջանյանը: Այդ տարիներին որպես մարզիչ իր ներդրումը ունեցավ սպորտի վարպետ Վլադիմիր Ավանեսովը: Նրա պատրաստած մարմնամարզիկները հետագայում դարձան հանրապետության մրցանակակիրներ:

Ժամանակի լավագույն մարմնամարզուհիներն էին նաեւ Ռոմելա Սարգսյանը, Լիդա Բաբայանը, Աբսարա Նուրիջանյանը, Արմիկ Գրիգորյանը, Անտելա Անտոնյանը, Իրինա եւ Գալինա Շահրամանյանները եւ մարմնամարզիկ Յուրի Ղարախանյանը:



ՇԱԽՄԱՏ ԵՎ ՇԱՇԿԻ



Արցախում շախմատի մասին տեղյակ էին 9-րդ դարում: Քանի որ Արցախը Հայաստանի 15 նահանգներից մեկն էր, հետեւապես սնունդ էր առնում նրա բազմադարյա ավանդներից եւ իր նպաստն էր բերում համազգային մշակույթի գանձարանին:

ԼՂԻՄ-ում շախմատը տարածված էր տարբեր տեղերում՝ դպրոցներում, հիմնարկ-ձեռնարկություններում, գործարաններում, շրջկենտրոններում, գյուղերում, գրեթե ամեն տեղ խաղում էին շախմատ:

1935թ. Անդրկովկասում ընտանիքների միջեւ անցկացվեց շախմատի առաջնություն: Ստեփանակերտից Կարաբեկյան եղբայրները, Պյոտրը, Պավելը, Կոլյան եւ Գրիգորին մասնակցել են այդ առաջնությանը եւ գրավել է 1-ին տեղը:

1936թ. մասնակցել են ընտանեկան շախմատի համամիութենական առաջնությանը եւ գրավել 2-րդ պատվավոր տեղը: Հինգ եղբայրները մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին, նրանցից երեքը /Պավելը, Կոլյան եւ Գրիգորին/ զոհվել են ռազմաճակատում:



Ռաֆայել Մարգարյան

Պյոտրն ապրել է Ռուսաստանում, իսկ Միքայել Կարաբեկյանը պատերազմից հետո վերադարձել է Ղարաբաղ եւ 1951-56թթ. աշխատել մարզգործկոմին կից ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի կոմիտեի նախագահ:

Շախմատը մասսայականացում է ձեռք բերել պիոներների տանը գործող խմբակներում: Անցած դարի 30-ական թթ. այդպիսի խմբակներ էին գործում Ստեփանակերտ քաղաքում: Պիոներների տան շախմատի խմբակը վարում էր քաղաքի առող-


Էդուարդ Սարգսյան

Շահեն Մուսայելյան

ջապահության բաժնի վարիչ, բժիշկ Գրիգորի Իշխանի Գրիգորյանը:

Նրա սաներից շատերը հետագայում դարձան առաջինկարգային շախմատիստներ եւ մարզի չեմպիոններ: Նրանցից էին՝ Ռաֆայել Մարգարյանը, Էդուարդ Հայրապետյանը, Ալեքսանդր Գրիգորյանը, Ալբերտ Սեյրանյանը, Սերգեյ Գրիգորյանը եւ ուրիշներ:

1950-ական թվականներից հետո պիոներների տան մարզիչներ աշխատեցին Էդուարդ Հայրապետյանը, Ռաֆայել Մարգարյանը, Էդուարդ Սարգսյանը եւ ուրիշներ:

Ռաֆայել Մարգարյանը մարզի բազմակի չեմպիոն է եղել: Այդ թվականներին կային նշանավոր շախմատիստներ Էդգար եւ Էդմոնդ Շիրինյանները, Գրիգոր Սարգսյանը /Ստեփանակերտի մարզային հիվանդանոցի բժիշկ/, Արտաշես Ֆարամազյանը /Մարտունու ժողկրթության բաժնի վարիչ/, Էմիլ Բալայանը, Արտեմ Մուսայելյանը, Սուրեն Գրիգորյանը եւ Նիկոլայ Երեմյանը /Մարտունու շրջանից/, Գուրգեն Արզումանյանը, Տիգրան Ամիրյանը եւ Արկադյա Ամիզյանը /Հադրութի շրջանից/:

Հետագայում ԼՂԻՄ-ի բազմակի չեմպիոններ են դարձել Գրիգոր Գրիգորյանը, Ռաֆայել Մարգարյանը եւ Էդուարդ Սարգսյանը: Չեմպիոններ են եղել Յուրի Խաչատրյանը, Մարատ Սահակյանը, Շահեն Մուսայելյանը, Տիգրան Շադեյանը, Միքայել Բաղդասարյանը, Գագիկ Պետրոսյանը, Արթուր Պետրոսյանը:

1987թ. մարտ ամսին Ստեփանակերտ քաղաքի շախմատի հավաքական թիմը հանդես է եկել Սեւան քաղաքում՝ «Սպիտակ նավակի»-ի Հայաստանի առաջնությունում եւ գրավել 1-ին տեղը: Թիմի կազմում խաղացել են Ֆելիքս Խաչատրյանը, Սամվել Գասպարյանը, Սլավիկ Պողոսյանը եւ Անահիտ Դանիելյանը: Թիմը իրավունք է ստացել մասնակցելու շախմատի համամիութենական «Սպիտակ նավակ»-ի առաջնությանը: Հայաստանի Հանրապետությունը հայտ է ներկայացրել Մոսկվա, որ Ղարաբաղի թիմը պատրաստվի մեկնելու այնտեղ: Սակայն ադրբեջանական իշխանությունների բողոքից հետո Մոսկվան չընդունեց ղարաբաղցիներին, իսկ մրցումներին մասնակցած Հայաստանի թիմը գրավեց 1-ին տեղը:

Միքայել Բաղդասարյան

Արժե ներկայացնել մի փոքրիկ դրվագ այն օրերից:

1993թ. օրվա տարբեր ժամերին Շուշիից, Ջանհասանից, Աղդամի կողմերից ռմբակոծում էին Ստեփանակերտ քաղաքը: Բաքվից հաղորդում էին, թե իբր Ստեփանակերտում մարդ չկա, բոլորը փախել են՝ այսպես ոգեւորելով իրենց զինվորներին: Այդ մասին շախմատի դպրոցի տնօրեն Երվանդ Մկրտչյանն իրազեկեց ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Գ. Շահրամանյանին: Այդ նույն օրն էլ որոշեցին երկու օրից հետո անցկացնել շախմատի ԼՂՀ առաջնություն, որպեսզի ապացուցեն Բաքվին, որ Ստեփանակերտի բնակչությունը ոչ միայն չի փախել, այլեւ անց է կացնում սպորտային միջոցառումներ:

Առաջնության 3-րդ փուլից հետո մրցության դահլիճ են ներխուժում ավտոմատներով զինված երկու երիտասարդ: Նրանք քիչ էր մնում կրակ բացեին խաղացողների վրա՝ գոռալով. «Ձեր ընկերները զոհվում են կռվի դաշտում, իսկ դուք այստեղ շախմատ եք խաղում»: Մի կերպ հանգստացնելով նրանց՝ գլխավոր մրցավար Ե. Մկրտչյանը բացատրեց, որ այս միջոցառումը քաղաքական մեծ նշանակություն ունի: Վաղն ամեն տեղ կիմանան, որ Ստեփանակերտ քաղաքում կյանքն ընթանում է սովորական հունով. նույնիսկ պատերազմի դաժան պայմաններում հանրապետությունում շախմատի առաջնություն է անցկացվում: Տղաները, զգալով միջոցառման նշանակությունը, ներողություն են խնդրում ու ճանապարհ-

վում ուղիղ ռազմաճակատ:

2004 թվականը շախմատային աշխարհում հռչակվել է «Տիգրան Պետրոսյանի տարի»: Այդ առթիվ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի նախաձեռնությամբ առաջին անգամ շախմատի միջազգային մրցաշար անցկացրին Ստեփանակերտում, որտեղ հրավիրված էին ուժեղագույն 8 գրոսմայստեր եւ 2 միջազգային վարպետ՝ տարբեր երկրներից եւ աշխարհի 10-րդ չեմպիոն Բորիս Սպասսկին /որպես պատվավոր հյուր/:

Ադրբեջանը ցանկացել է տապալել այդ միջոցառումը, բայց չի հաջողվել: Ստեփանակերտի Սպայի տունը լեփ-լեցուն էր ամեն օր:

Կարեն Սարգսյանը գրավել է 1-ին տեղը, իսկ Գաբրիել Սարգսյանը՝ 3-րդ տեղը /երկուսն էլ՝ ծննդով ղարաբաղցի/: Այդ մրցաշարից հետո շախմատ խաղալու ցանկությունը դպրոցականների մոտ աշխուժացել է: Դա զգացվել է շախմատի մանկապատանեկան դպրոցի խմբակները կոմպլեկտավորելիս: Իրենց ստեղծագործական էտյուդներով աչքի էին ընկնում մարզի լավագույն շախմատիստներ Սվետլանա Միխայլիդիսը, Սվետլանա Վերդյանը եւ ուրիշներ:

ՍՎԵՏԼԱՆԱ ՍԵՐԳԵՅԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ /ՎԵՐԴՅԱՆ/

1959-63թթ. դպրոցականների միջեւ եղել է Ադրբեջանի չեմպիոն: Ադրբեջանի հավաքական թիմի կազմում առաջին խաղատախտակի վրա խաղացել է ԽՍՀՄ դպրոցականների սպարտակիադայում: 1961թ. առաջին խաղատախտակի վրա Ադրբեջանի կանանց սպարտակիադայում գրավել է 3-րդ մրցանակային պատվավոր տեղը, 1962թ. Ադրբեջանի կանանց առաջնությունում՝ 2-րդ տեղը, իսկ 1966թ.՝ 1-ին տեղը:

Ստեփանակերտ քաղաքի մանկապատանեկան մարզադպրոցի շախմատի բաժանմունքում էր աշխատում մարզի նշանավոր շախմատիստ էռնեստ Պետրոսյանը:

1960-70-ական թթ. նրա սաներից շատերը դարձան շնորհալի շախմատիստներ, իսկ Նաիրա Աղաբաբյանը միշտ փայլուն հաղթանակներ էր տանում՝ հանրապետական մրցումներում գրավելով մրցանակային տեղեր:

ՆԱԻՐԱ ԱՂԱԲԱԲՅԱՆ

Ապրում է Մոլդովայում, միջազգային գրոսմայստեր է, 8 անգամ Մոլդովայի կանանց չեմպիոնուհին է եղել: Հանրապետության վաստակավոր մարզիչ է: 6 անգամ մասնակցել է շախմատի համամիութենական օլիմպիադաների /1992-2002թթ./:

Նաիրա Աղաբաբյանի դուստրը՝ Էլմիրա Սկրիպչենկոն /ծնված 1976թ./ միջազգային գրոսմայստեր է, մինչեւ 16 տարեկանների միջեւ աշխարհի չեմպիոնուհի, 2001թ.՝ Եվրոպայի կանանց չեմպիոնուհի:

ԱՎԱԳԻՄՅԱՆ ԳԵՆՅԱ ԳՐԻԳՈՐԻԻ

Ծնվել է Ասկերանի շրջանի Դահրավ գյուղում: Շախմատ խաղում է մանկուց: 16 տարեկանից մասնակցել է մարզի եւ Ադրբեջանի շաշկու- շախմատի առաջնություններին: Մինգեչաուրում, Նախիջեւանում, Բաքվում անցկացված հանրապետական առաջնությունների մասնակից է, գրավել է մրցանակային տեղեր:

Թաղավարդ գյուղից Աշոտ Գրիգորյանի

/Աշոտ Գրաշի/ տղաներից Լեւոն Գրիգորյանը 6 անգամ Հայաստանի շախմատի չեմպիոն է եղել /1964,66,68,69,71,72թթ./, 4 անգամ՝ Ուզբեկստանի, իսկ Կարեն Գրիգորյանը՝ 3 անգամ Հայաստանի չեմպիոն /1969,70,72թթ./, 1986թ.՝ Մոսկվայի:

Հացի գյուղից սպորտի վարպետ Հրաչիկ Թավադյանը 1982թ. Հայաստանի չեմպիոն է եղել: ՀՀ վաստակավոր մարզիչ է, այժմ աշխատում է Երեւանի Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի տան տնօրեն:

Բերդաշեն /Կարաքենդ/ գյուղից Սլավա Մովսիսյանը 1979թ. Հայաստանի շախմատի չեմպիոն է եղել:

Գրոսմայստեր Կարեն Ասրյանը 1999թ. Հայաստանի չեմպիոն է եղել, պատանիների աշխարհի առաջնությունում՝ արծաթե մեդալակիր, 1994թ. Ստեփանակերտում անցկացված միջազգային մրցաշարում գրավել է 1-ին տեղը:

Չափար գյուղից գրոսմայստեր Գաբրիել Սարգսյանը 1996թ. 14 տարեկանների միջեւ Եվրոպայի չեմպիոն է դարձել, 1998թ. 16 տարեկանների միջեւ՝ աշխարհի չեմպիոն:

2004թ. Ստեփանակերտում Տ. Պետրոսյանի 75-ամյակին նվիրված միջազգային հուշամրցաշարում գրավել է 3-րդ պատվավոր տեղը:

ՀՈՎԻԿ ՍԼԱՎԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել է 1990թ. փետրվարի 15-ին Ստեփանակերտ քաղաքում:

ԼՂՀ պատանիների բազմակի չեմպիոն, 2002-2007թթ. Սամվել Սաֆարյանի հուշամրցաշարերի հաղթող, 2003-2006թթ. ԼՂՀ շախմատի ֆեդերացիայի գավաթի հաղթող: 1999թ. մինչեւ 10 տարեկան պատանիների ՀՀ կիսաեզրափակիչում գրավել է 1-ին տեղը, 2004-2005թթ. Վրաստանում կայացած միջազգային մրցաշարում՝ 1-ին-2-րդ տեղերը:

2006թ. մինչեւ 16 տարեկանների աշխարհի առաջնությունում

Գրոսմայստեր
Վիտալի Գաբրիելյան

ԽՍՀՄ սպորտի վարպետ
Անդրեյ Ղարամյան

գրավել է 5-րդ պատվավոր տեղը:

2004-2006թթ. ճանաչվել է ԼՂՀ տարվա լավագույն շախմատիստ: 2006թ. շնորհալի շախմատիստն արժանացել է ՀՀ շախմատի ազգային վարպետի կոչման:

Ռուսական շաշկի խաղի զարգացմանը եւ մասսայականացմանը որոշակի չափով նպաստել է նաեւ Սարուխանյանների ընտանիքը /Սերգեյ՝ հայրը, Մաքսիմ, Էռնեստ Սարուխանյանները՝ որդիներ, գյուղ Այգեստան/:

Պատահական չէ, որ այդ գյուղից գրոսմայստեր Վիտալի Գաբրիելյանը ռուսական շաշկու գծով 4 անգամ Խորհրդային Միության չեմպիոն է եղել, 7 անգամ՝ Ադրբեջանի չեմպիոն: ԼՂԻՄ-ի բազմակի չեմպիոն են եղել Սերոբ Կարապետյանը, Ռոբերտ Հայրումյանը, Սամվել Ներսիսյանը եւ Կարեն Ահարոնյանը:

Ակնաղբյուր /Ղարաբուլախ/ գյուղից Անդրեյ Ղարամյանը ռուսական շաշկու գծով հեռակա խաղում Խորհրդային Միության չեմպիոն է եղել: ԽՍՀՄ սպորտի վարպետ է: 1989թ. մասնակցել է համամիութենական փառատոնին:

ՍԵՐԺ ԱԶԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1954թ. հունիսի 30-ին Ստեփանակերտ քաղաքում:

1979թ. ավարտել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Այդ ընթացքում երկու տարի /1972-74թթ./ ծառայել է խորհրդային բանակում: 1975-79թթ. աշխատել է Երեւանի էլեկտրատեխնիկական գործարանում՝ որպես խառատ: 1979-88թթ. աշխատել է Լեռնային Ղարաբաղի կոմերիտական եւ կուսակցական մարմիններում, եղել է ԼԿԵՄ Ստեփանակերտի քաղկոմի բաժնի վարիչ, ապա՝ երկրորդ քարտուղար, առաջին քարտուղար, կոմկուսի Ստեփանակերտի քաղկոմի պրոպագանդայի եւ ագիտացիայի բաժնի վարիչ, Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղարի օգնական:

1989-1993թթ. եղել է ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի կոմիտեի նախագահ: 1990թ. ընտրվել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր: 1993-95թթ. եղել է ՀՀ պաշտպանության նախարար: 1995-96թթ. ղեկավարել է ՀՀ ազգային անվտանգության պետական վարչությունը, ապա՝ ՀՀ ազգային անվտանգության նախարարությունը: 1996թ. նշանակվել է ՀՀ ներքին գործերի եւ ազգային անվտանգության նախարար: 1999թ. նախարարության վերակազմավորումից հետո՝ ՀՀ ազգային անվտանգության նախարար: 1999-2000թթ. ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար եւ ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար: 2000թ. ՀՀ պաշտպանության նախարարն էր, ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղարը եւ Հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի համանախագահը:

2004 թվականից Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահն է: 2006թ. հունվար ամսից Երեւանի պետական համալսարանի խորհրդի նախագահն է: 2007թ. ընտրվել է ՀՀ վարչապետ: 2008-ից՝ ՀՀ նախագահ: ՀՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր է, Արցախի Ազգային հերոս, «Ոսկե արծիվ» շքանշանի ասպետ:

ԼՂՀ ՇԱԽՄԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԴՊՐՈՑ

Երվանդ Մկրտչյան

1977թ. սկսած՝ բացի ԼՂՀ-ից, Ադրբեջանի համարյա բոլոր քաղաքներում եւ շրջաններում գործում էին շախմատի մանկապատանեկան դպրոցներ: Դա գիտեին մարզի ղեկավարները եւ լուռ էին մնում: Ամեն անգամ մարզի պատանիները, մասնակցելով «Սպիտակ նավակ» շախմատի առաջնությանը, ցավ էին ապրում մարզում շախմատի դպրոցի բացակայությունից: Վերջապես, մարզժողկրթբաժնի վարիչ Սարգիս Նիկոլայի Արամյանի ջանքերով 1983թ. Ստեփանակերտում բացվեց շախմատի մանկապատանեկան դպրոց, որի հիմնադիր տնօրեն նշանակվեց առաջին կարգի շախմատիստ, մարզիչ, հանրապետական կարգի մրցավար *Երվանդ Մակիչի Մկրտչյանը:* Նա աշխատեց ուղիղ 21 տարի, որից 5 տարի՝ Շախմատի կենտրոնական տան տնօրեն: 2004 թվականից առայսօր աշխատում է ՇՄՊԴ-ում՝ որպես ավագ մարզիչ-մանկավարժ: Արցախի անկախության պայքարի տարիներին դպրոցի ամբողջ գույքն անվնաս է մնացել շնորհիվ տնօրենի անձնվիրության: Դպրոցի բացման օրից, որպես մարզիչ, աշխատել են վարպետության թեկնածու Էդուարդ Սարգսյանը, Տիգրան Շադոյանը, առաջինկարգայիններ Սամվել Սաֆարյանը (ուսմասվար), Վիլեն Ավագյանը (մեթոդիստ), Վարդգես Բաղրյանը, Ալեքսեյ Խաչատրյանը, Միքայել Բաղդասարյանը, Արսեն Միրզոյանը, Սամվել Ներսիսյանը, Վալերի Աբրահամյանը, Անահիտ Ղազարյանը, դպրոցի նախկին սան Հակոբ Ավագյանը, Արթուր Բաբայանը, Սասուն Միրզոյանը: Շրջաններում մարզիչներ են աշխատել Մարատ Սահակյանը, Վրեժ Բաբայանը (Մարտունու շրջան), Ժորա Սվանեսյանը (Հադրութի շրջան), Էդուարդ Գաբրիելյանը (Ասկերանի շրջան), Արթուր Պետրոսյանը (Շուշիի շրջան):

ՇՄՊԴ-ն իր գործունեության ընթացքում պատրաստել է միջազգային վարպետ Դավիթ Մարկոսյանին (մարզիչ՝ Ե. Մկրտչյան), ազգային վարպետ Հովիկ Հայրապետյանին (մարզիչներ՝ Վ. Ավագյան

եւ Արթուր Չիբուխչյան), երեք վարպետության թեկնածուներ, տասնյակ առաջինկարգայիններ: Դավիթ Մարկոսյանը 2000թ. Պոդոլսկ քաղաքում շախմատի միջազգային մրցաշարում գրավել է առաջին տեղը:

ՀՀ առաջնություն
15.03.2006թ.

ՄԱՆՈՒԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ծնվել է մայիսի 6-ին 1998թ. ք. Ստեփանակերտում: 2001թ. հոկտեմբերից հաճախում է ԼՂՀ շախմատի մանկապատանեկան դպրոց (մարզիչ՝ Արսեն Միրզոյան):

2005 եւ 2006թթ.- ԼՂՀ շախմատի պատանիների անհատական առաջնությունում գրավել է առաջին տեղը՝ մինչեւ 10 տարեկանների մեջ (մարզիչ՝ միջազգային վարպետ (մ/վ) Արթուր Չիբուխչյան):

Աշխարհի առաջնության
92 մասնակիցների միջեւ
գրավել է 12-րդ տեղը
(Վիետնամ 15.10-
30.11.2008թ.)

2006թ. մասնակցել է Վրաստանի Բաթումի քաղաքում տեղի ունեցած շախմատի պատանիների աշխարհի առաջնությանը՝ գրավելով 5-րդ տեղը մինչեւ 8 տարեկանների մեջ, պարգեւատրվել է գավաթով (մարզիչ՝ մ/վ Արթուր Չիբուխչյան):

2007 եւ 2008թթ. ԼՂՀ շախմատի պատանիների անհատական առաջնությունում գրավել է առաջին տեղը՝ մինչեւ 18 տարեկանների մեջ (մարզիչ՝ Դավիթ Պետրոսյան):

2007 եւ 2008թթ. ՀՀ շախմատի պատանիների առաջնությունում գրավել է առաջին տեղը՝ մինչեւ 10 տարեկանների մեջ (մարզիչ՝ մ/վ Դավիթ Պետրոսյան):

Մասնակցել է Խորվաթիայում, Չեռնոգորիայում շախմատի պատանիների առաջ-

նություններին՝ մինչեւ 10 տարեկանների միջեւ եւ գրավել է համապատասխանաբար 15-րդ (84 մասնակից), 35-րդ (135 մասնակից) տեղերը:

Մասնակցել է Թուրքիայում, Վիետնամում կայացած շախմատի պատանիների առաջնությանը մինչեւ 10 տարեկանների միջեւ եւ գրավել համապատասխանաբար 25-րդ (114 մասնակից), 12-րդ (92 մասնակից) տեղերը:

Շախմատային առաջնության բացման
արարողություն
2000թ. ք. Ստեփանակերտ

Համաշխարհային շախմատի օլիմպիադայի 2008թ. ոսկե մեդալակիրներ, միջազգային գրոսմայստերներ, ձախից աջ՝ մարզիչ Արշակ Պետրոսյան, Գաբրիել Սարգսյան (ԼՂՀ, Չափար գյուղ), Վլադիմիր Հակոբյան (ԼՂՀ, Կարմիր Շուկա), Լեւոն Արոնյան, Տիգրան Պետրոսյան Լ. Կենտրոնում ՀՀ-ի շախմատային ֆեդերացիայի նախագահ Սերժ Սարգսյան (Դրեզդեն, Գերմանիա)

Միաժամանակյա շախմատային սեանս անց է կացնում միջազգային գրոսմայստեր Վիկտոր Բոլոգանը ք. Ստեփանակերտի շախմատի կենտրոնական տանը (2005թ.)

ՍԱՄԲՈ-ԸՄԲՇԱՄԱՐՏ

1927-30-ական թվականներին ԼՂԻՄ միլիցիայի շրջանային եւ քաղաքային բաժիններում ստեղծվել են ֆիզիկական կուլտուրայի կոլեկտիվներ, նրանց կից՝ հասարակական կարգով, բացվել տարբեր մարզական խմբակներ, որոնց թվում եւ՝ ծառայողական սամբո ըմբշամարտի: 1966թ. «Դինամո» մարզական ընկերությունում գործել է սամբոյի մարզական խմբակը՝ նախ՝ մարզիչ Եղիշե Քոչարյանի, ապա՝ նրա սան Էռնեստ Միրզոյանի /այժմ ՀՀ վաստակավոր մարզիչ/ գլխավորությամբ:

1960թ. Ստեփանակերտում անցկացվեց Ադրբեջանի առաջնություն, որտեղ Սերյոժա Գրիգորյանը /մարզիչ՝ Յու. Բաբայան/ նվաճեց 1-ին տեղը՝ լրացնելով սպորտի վարպետի նորման:

Ե. Քոչարյանի սաներից աչքի են ընկել հատկապես սամբիստներ Ռոման Դանիելյանը եւ Յակով Բաղդասարյանը, որոնք հետագայում դարձել են ԽՍՀՄ սպորտի վարպետներ:

Լեոնիդ Հայրապետյան

Սամբոյի զարգացման պատմության մեջ նշանակալի ավանդ ունի ծագումով արցախցի մարզիկ եւ մարզիչ, մրցավար, կազմակերպիչ եւ հասարակական գործիչ, անդրկովկասյան հանրապետությունների, ԽՍՀՄ ՆԳ եւ ԶՈՒ գերատեսչական առաջնությունների եւ միջազգային մրցաշարերի բազմակի չեմպիոն, ՀՀ-ում սամբոյի եւ ձյուդոյի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն Լեոնիդ Հայրապետյանը: Ստացել է ԽՍՀՄ վաստակավոր մարզչի, Հայաստանի վաստակավոր մարզչի, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատողի, ԽՍՀՄ սպորտի վարպետի եւ պատվա-

վոր վարպետի, համամիութենական եւ միջազգային կարգի էքստրա-դասի մրցավարի կոչումներ:

80-ական թթ. Ստեփանակերտում հիմնադրել է իր ղեկավարած մարզադպրոցի մասնաճյուղը, որը մարզի սամբիստների պատրաստման գործում մեծ դեր է խաղացել: ՀՀ սամբո ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահն է:

Սամբո ըմբշամարտի հետագա զարգացման եւ միջազգային ասպարեզ դուրս գալու ուղղությամբ մեծ ներդրում ունի դինամոյական, ՀՀ վաստակավոր մարզիչ *Էռնեստ Ռաֆայելի Միրզոյանը*: Նրա պատրաստած սաները՝ Սամվել Շահրամանյան, Ազատ Անդրյան, Էրիկ Ավանեսյան, Վագիֆ Մինասյան /սպորտի վարպետ/, Նարեկ Գրիգորյան, Արեն Շահրամանյան /սպորտի վարպետ/, Արթուր Միրզոյան եւ Աշոտ Դանիելյան, դարձել են ՀՀ, Եվրոպայի, աշխարհի պատանիների, երիտասարդների, մեծահասակների առաջնությունների մրցանակակիրներ եւ չեմպիոններ:

ՍԱՄՎԵԼ ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ

1997թ. Ղազախստանի Օկտյուբինսկ քաղաք, աշխարհի պատանիների առաջնություն, 5-րդ տեղ, ՀՀ բազմակի չեմպիոն:

ԱԶԱՏ ԱՆԴՐՅԱՆ

Սպորտի վարպետ, 1997թ. աշխարհի առաջնության մասնակից, ՀՀ բազմակի մրցանակակիր, չեմպիոն, ԼՂՀ սամբոյի հավաքականի մարզիչ:

ՎԱԳԻՖ ՄԻՆԱՍՅԱՆ

1999թ. Բուլղարիայի Սոֆիա քաղաք, Եվրոպայի երիտասարդների առաջնություն, 3-րդ տեղ, սպորտի վարպետ:

ՆԱՐԵԿ ՌՈԲԵՐՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2000թ. Հարավսլավիայում, 2003թ. Շաուլյայ քաղաքում աշխարհի երիտասարդների առաջնությունների մասնակից, ՀՀ բազմակի չեմպիոն, սպորտի վարպետ, Եվրոպայի եւ աշխարհի սամբոյի չեմպիոնատների մասնակից:

ԱՐԵՆ ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Սպորտի վարպետ, 2000թ. Լենինգրադում աշխարհի պատանիների առաջնության մասնակից, 2001թ. Բուլղարիայի Ալբենա քաղաքում Եվրոպայի պատանիների առաջնության 3-րդ տեղ, երիտասարդների առաջնության 3-րդ տեղ, նույն թվականին Մոլդովայի Քիշնեւ քաղաքում աշխարհի երիտասարդների առաջնություն 3-րդ տեղ:

ԱՐԹՈՒՐ ԷՌՆԵՍՏԻ ՄԻՐԶՈՅԱՆ

ՍՎԹ 2000թ. ՀՀ հավաքականի կազմում մասնակցել է Մոսկվայում կայացած ԱՊՀ երկրների պատանեկան խաղերին, ՀՀ բազմակի մրցանակակիր եւ չեմպիոն:

ԱՐՄԵՆ ՄԻՔԱՅԵԼԻ ԱԴԱՄՅԱՆ

2008-2009թթ. ՀՀ չեմպիոն, 2008թ. միջազգային մրցաշարի հաղթող:



ՄԱՐՏԻՆ ԷՌՆԵՍՏԻ ՄԻՐԶՈՅԱՆ

Սպորտի վարպետ: 2009թ. երիտասարդների միջեւ ՀՀ չեմպիոն, 2009թ. Եվրոպայի առաջնությունում գրավել է 2-րդ պատվավոր տեղը: Մարզիչ՝ Ազատ Անդրյան:

ԷՐԻԿ ԱՎԱՆԵՍՅԱՆ

1997թ. աշխարհի առաջնության մասնակից, ՀՀ բազմակի մրցանակակիր, չեմպիոն,

ԱՇՈՏ ՅԱԿՈՎԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀՀ սպորտի վարպետ, ՀՀ պատանիների, երիտասարդների, մեծահասակների բազմակի չեմպիոն:

2000թ. Հարավսլավիայում Եվրոպայի պատանիների առաջնության 3-րդ մրցանակակիր, 2001թ. Ալբենա քաղաքում Եվրոպայի երիտասարդների առաջնության 2-րդ մրցանակակիր, նույն թվականին Քիշնեւ քաղաքում աշխարհի երիտասարդ-

ների առաջնության 2-րդ մրցանակակիր, 2002թ. Իտալիայի Թուրին քաղաքում Եվրոպայի երիտասարդների առաջնությունում՝ 1-ին մրցանակակիր, 2003թ. Ալբենա քաղաքում Եվրոպայի երիտասարդների առաջնության 3-րդ մրցանակակիր:

2004թ. փետրվարին Օդեսա քաղաքում «Օկտագոն» էքստրեմալ մարտերի աշխարհի առաջնության 1-ին մրցանակակիր, նույն թվականի մայիսին Լիտվայի Շաուլյայ քաղաքում Եվրոպայի երիտասարդների առաջնության 3-րդ մրցանակակիր: 2005թ. նոյեմբերին Ղազախստանի Աստանա մայրաքաղաքում մեծահասակների աշխարհի առաջնությունում գրավել է 2-րդ պատվավոր տեղը:

2006թ. մայիսին Հարավսլավիայում Եվրոպայի առաջնությունում գրավել է 2-րդ պատվավոր տեղը: Նույն թվականին նրան շնորհել են սպորտի միջազգային վարպետի կոչում:

ՀՀ վաստակավոր մարզիչ է. Միրզոյանը սաների հետ

ՀՀ վաստակավոր մարզիչ է. Միրզոյանը իր սան, Եվրոպայի չեմպիոն Ա. Դանիելյանի հետ

Պարապմունքի պահին

ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը ՀՀ վաստակավոր մարզիչ Էռնեստ Միրզոյանի եւ նրա սաների հետ

2-րդ շարք աջից ձախ՝ սպորտի վարպետներ՝ Սամվել Շահրամանյան, Ազատ Անդրյան, Նարեկ Գրիգորյան, միջազգային սպորտի վարպետ, Եվրոպայի չեմպիոն Աշոտ Դանիելյան, (կենտրոնում) ՀՀ վաստակավոր մարզիչ Էռնեստ Միրզոյան, Արեն Շահրամանյան, ՍՎԹ Էրիկ Գասպարյան, ձախից առաջինը, սպորտի վարպետ Վագիֆ Մինասյան

Պարապմունքի պահ, ձախից գլխավոր մարզիչ Էռնեստ Միրզոյան

ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ



Լեռնային Ղարաբաղում սեղանի թենիսի պատմությունը անմիջականորեն կապված է Ստեփանակերտ քաղաքի նախկին տեխնիկների կայանի տնօրեն Հրանտ Միրզոյանի հետ, որն անցյալ հարյուրամյակի 50-ական թվականների կեսին առաջին անգամ իր սաներին ծանոթացրեց սեղանի թենիսին: Կայանի բակում դրված էր թենիսի սեղանը, որտեղ վաղ առավոտից մինչեւ ուշ երեկո խաղում էին մարդիկ՝ առանց տարիքային խտրության:

Սերգեյ Ավանեսյան

Շուտով Լեռնային Ղարաբաղում ճանաչում գտան անվանի թենիսիստներ Սերգեյ Ավանեսյանը, Վլադիմիր Խուրշուդյանը, Գարի Բալայանը, Բելլա Սարգսյանը, Լյուդմիլա Օվչարենկոն, Զինա Նազարյանը, Ռիտա Խաչյանը եւ ուրիշներ:

1963թ. հանրապետության դպրոցական սպարտակիադայում Գ. Բալայանը գրավել է մրցանակային տեղ, դարձել է Ադրբեջանի «Ուրոժայ» ընկերության չեմպիոն: Այդ ժամանակվա մարզիկների կյանքում մեծ դեր են խաղացել մարզիչներ Յուրի Հարությունյանը, Կիմ Խաչատրյանը, Յուրի Խաչիյանը:

Աննա Ադամյան

Անկախություն ձեռք բերելուց հետո մեր հանրապետությունում սեղանի թենիսը նոր թափ ստացավ: Պատահական չէ, որ անվանի մարզիչ, ԼՂՀ-ի ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործիչ՝ Սերգեյ Ավանեսյանի սաները դարձան ՀՀ չեմպիոններ, մրցանակակիրներ եւ, ընդգրկվե-


Մրցումների պահին

լով Հայաստանի հավաքականում, մասնակցեցին միջազգային մրցումների:

2004թ. տարիքային խմբում *Աննա Ադամյանը* դարձավ Հայաստանի սեղանի թենիսի չեմպիոն:

2005թ. հուլիսին Աննան, Հայաստանի հավաքականի կազմում Լոնդոնում մասնակցել է միջազգային խաղերին: Մրցասպարեզ էին ելել աշխարհի 49 երկրների ուժեղագույն թիմեր: Համառ ու անզիջում պայքարում Աննան գրավել է 5-րդ պատվավոր տեղը:

Նույն թվականի հոկտեմբերին Բաքուում /Վրաստան/ մասնակցելով մեծ թենիսիստ, ԽՍՀՄ բազմակի չեմպիոն Սարգիս Սարխոյանի գավաթի խաղարկման միջազգային մրցաշարին՝ Աննա Ադամյանը թիմային, անհատական եւ զուգամրցումներում գրավեց 1-ին տեղը ու դարձավ այդ առաջնության բացարձակ չեմպիոնուհի:

2009թ. Աննան ՀՀ-ի հավաքականի կազմում մասնակցել է աշխարհի չեմպիոնատին, որը տեղի է ունեցել Ճապոնիայի Յակոգամա քաղաքում:

Մեր մյուս մասնակիցը՝ Ռաֆիկ Հովհաննիսյանը, թիմային մրցաշարում նույնպես գրավեց 1-ին տեղը, անհատականում՝ 3-րդ:

Նույն ամսին Երեւանում անվանի թենիսիստ Հարություն Հակոբյանի հիշատակին նվիրված մրցաշարում՝ նա գրավեց 1-ին տեղը:

Հայաստանի 2-րդ մրցանակակիր *Վարուժան Բաղդասարյանը* Արցախից առաջինն էր, որ 2002թ. Հայաստանի հավաքականի կազմում մասնակցեց Մոսկվայում կայացած պատանիների միջեւ Եվրոպայի առաջնությանը:

2009թ. Վարուժանը ՀՀ-ի հավաքականի կազմում մասնակցել է աշխարհի չեմպիոնատին, որը տեղի է ունեցել Ճապոնիայի Յակոգամա քաղաքում:

Ղուլյան Անժելիկա - ԼՂՀ բազմակի չեմպիոն, 2001-2003 թթ. Համահայկական խաղերի բրոնզե մեդալակիր, Թեհրանում Համայկական խաղերում գրավել է 1-ին տեղը:

Ֆիրյան Արայիկ - 2002թ. Հայաստանի առաջնությունում համապատասխան տարիքային խմբում գրավել է 2-րդ տեղը:

Իրենց ուրույն տեղն ունեն Մարտունու շրջանում սեղանի թենիսի հիմնադիր Նինա Աֆանասեւնա Գրիգորյանը եւ մարզիչ Սերգեյ Սարգսյանը, որոնց սաները համալրում են հանրապետության հավաքականը:

2001-2003թթ. Համահայկական խաղերում մարզիչ Սերգեյ Ավանեսյանի սաները թիմային առաջնությունում շահեցին բրոնզե մեդալներ:

Սեղանի թենիսի զարգացման հզոր խթան է ամեն տարի ավանդաբար անցկացվող ԼՂՀ նախագահի գավաթի միջազգային խաղարկությունը, որին մասնակցում են տարբեր պետությունների մարզիկ-մարզուհիներ:

Ստեփանակերտի մարզիկները վերջին խաղարկությունում /2005թ./ գրավեցին՝ աղջիկները՝ 2-րդ, 3-րդ, տղաները՝ 3-րդ տեղերը:

Պատանի թենիսիստները պարգեւատրման պահին

Մրցումների ավարտից հետո

ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏ

1950թ. կեսերից Խրիստափոր Բալասանովի, Յաշա (Յակով) Ղազարյանի եւ խորհրդային բանակի սպա Լիխավիդովի նախաձեռնությամբ Ստեփանակերտում ստեղծվել են պատանիների սուսերամարտի տարբեր խմբակներ:

Սուսերամարտի մասսայականացումը եւ զարգացումն սկսվել է 1958 թվականից:

Ավարտելով Երեւանի ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը՝ սպորտի վարպետի թեկնածու *Բորիս Սարգսի Ղարայանը* կազմակերպել եւ սիստեմատիկորեն անցկացրել է մարզական պարապմունքներ մարզի պատանիների եւ երիտասարդների շրջանում մինչեւ 1980թ.: Նշված տարիներին, ԼՂԻՄ «Դինամո» մարզական ընկերության փոխնախագահ, մարզիչ Բ. Ղարայանի ղեկավարությամբ բազմաթիվ պատանիներ, երիտասարդներ եւ աղջիկներ իրենց մարզական վարպետությունը բարձրացրել եւ դարձել են առաջինկարգայիններ, բթասուսեր, խոցասուսեր, ճկասուսեր ձեւերում: Նրանցից են Վլադիմիր եւ Արտյոմ Սարգսյանները, Ռաֆիկ Ավանեսյանը, Գեորգի Շահնազարյանը, Լիլյա Զաքարյանը, Վիլենա Մարգարյանը, Իվան Մայիլյանը եւ շատ ուրիշներ: ԼՂԻՄ հավաքականը, Ադրբեջանի տարբեր քաղաքներում մասնակցելով «Դինամո» մարզական ընկերության եւ հանրապետական առաջնություններին, գրավել է մրցանակային տեղեր:

Բորիս Ղարայան

Այդ տարիներին Բ. Ղարայանը հանրապետական առաջնություններում գրավել է մի շարք մրցանակային տեղեր, ընդգրկվել հանրապետության «Դինամո» մարզական ընկերության հավաքականի

կազմում եւ 1960թ. Վիլնյուսում մասնակցել ԽՍՀՄ առաջնությանը: Ցավոք, 1980թ. Ղարաբաղում դադարել են գործելուց սուսերամարտ մարզաձեւի մարզական խմբակները:

1963-66թթ. Բ. Ղարայանի ակտիվ մասնակցությամբ կառուցվել է «Դինամո» հոյակապ դահլիճը, որը դարձել է ֆիզկուլտուրայի եւ սպորտի մասսայականացման ու զարգացման, պատանիների ու երիտասարդների մարզական վարպետության բարձրացման դարբնոց: Նա բազմիցս պարգեւատրվել է ԽՍՀՄ եւ հանրապետական սպորտկոմիտեների պատվոգրերով ու գովասանագրերով, 1970-80թթ. անձնվեր եւ անբասիր աշխատանքի համար՝ մեդալներով:

Երկարատեւ եւ բեղմնավոր աշխատանքի համար 2002թ. ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության կողմից արժանացել է ՀՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատողի կոչման:

ՎՈԼԵՅԲՈԼ



Ղարաբաղցիների համար վոլեյբոլը միշտ եղել է սիրված մարզաձեւերից, որով զբաղվել են հազարավոր պատանիներ եւ աղջիկներ, կանայք ու տղամարդիկ: Չի եղել մի այնպիսի կոլեկտիվ՝ դպրոցական կամ աշխատանքային, որտեղ չզբաղվեին վոլեյբոլով:

1940-50-ական թթ. անց են կացվել ինչպես շրջանային, քաղաքային, այնպես էլ հանրապետական առաջնություններ՝ տղամարդկանց եւ կանանց թիմերի միջեւ, որտեղ աչքի են ընկել Բորիս Հարությունյանը, Ժենյա Սահակյանը /Ստեփանակերտ/, Ռոմա Առստամյանը /Մարտունի/, Բորիկ Անդրյանը /Մարտակերտ/:

Մարտակերտի վոլեյբոլի զարգացման պատմությունը շատ բանով է պարտական Բորիս Անդրյանին: Նա եղել է այդ սպորտաձեւի հիմնադիրը շրջանում:

Մարտակերտի միջն. դպրոցի հավաքականը՝ մարզի 1956թ. գավաթակիր: Մարզիչ՝ Բ. Անդրյան (աջից առաջինը)

ԲՈՐԻՍ ԲԱԽՇԻԻ ԱՆԴՐՅԱՆ

Ծնվել է 1925թ. օգոստոսի 8-ին, Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է գյուղի յոթնամյա դպրոցում: Այնուհետեւ ուսումը շարունակել է եւ ավարտել Կուսապատի միջն. դպրոցը: 1943թ. ԼՂ մարզային կոմիտեն ուղարկում է Բաքու՝ սովորելու ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտում:

Հայրենական մեծ պատերազմի ծանր տարիներին, ուսմանը զուգընթաց /քանի որ ինստիտուտը ռազմականացված էր/ պարեկություն էր անում քաղաքում, ակտիվորեն մասնակցում հակաօդային պաշտպանության աշխատանքներին:

Սովորելու տարիներին բազմիցս մասնակցել է հանրապետության սպորտային մրցումներին եւ գրավել պատվավոր տեղեր:

1945-1946թթ. Ադրբեջանի առաջնակարգ մարզիկների կազմում մասնակցել է Մոսկվայի Կարմիր հրապարակում անցկացված ֆիզկուլտուրնիկների համամիութենական շքերթին:

1947թ. ինստիտուտն ավարտում է եւ Ադրբեջանի լուսավորության նախարարության գործուղումով աշխատանքի անցնում Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում: Ելնելով ընտանեկան պայմաններից՝ Ստեփանակերտում երկար չի մնում, տեղափոխվում է Մարտակերտ, աշխատանքի անցնում միջնակարգ դպրոցում՝ որպես ադրբեջաներենի (ինստիտուտում ավարտել է ադրբեջանական բաժինը) եւ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ:

Սկզբնական տարիներին շատ դժվար էին ֆիզկուլտուրայի դասավանդման եւ սպորտի զարգացմանն ուղղված աշխատանքային քայլերը: Չկար նյութատեխնիկական բազա, մարզադաշտ, դահլիճ, իսպառ բացակայում էր մարզագույքը: Չնայած դժվարություններին՝ ստեղծեց վոլեյբոլի երիտասարդական թիմ: Մեկ տարի պարապելուց հետո ինքն էլ՝ որպես խաղացող-մարզիչ, թիմի հետ մասնակցեց մարզային առաջնությանը եւ նվաճեց Ղարաբաղի չեմպիոնի կոչումը:

Բորիս Անդրյանը Ղարաբաղի հավաքականի կազմում բազմիցս մասնակցել է հանրապետական առաջնություններին, իսկ երկու անգամ հանրապետական վոլեյբոլի հավաքականի կազմում՝ ԽՍՀՄ համամիութենական սպարտակիադաներին:

Հաղթահարելով շատ դժվարություններ՝ նա դիմել է մարզային, հանրապետական, համամիութենական, բարձրագույն ատյաններ՝ մարզագույքի ձեռքբերման, մարզադաշտի եւ մարզադահլիճի կառուցման նպատակով համապատասխան միջոցներ եւ ֆինանսներ հատկացնելու համար՝ միաժամանակ նշելով դպրոցի աշակերտ-մարզիկների հաջողությունները եւ ձեռքբերումները մարզային եւ

հանրապետական մրցումներում: Երկարատեւ պայքարից հետո ստացան ֆինանսական միջոցներ եւ ձեռնամուխ եղան շինարարության եւ մարզագույքի ձեռքբերման աշխատանքներին: Մարզադաշտի հողային եւ հարթեցման, ինչպես նաեւ հետագա շինարարական աշխատանքներին իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան նաեւ դպրոցի աշակերտները՝ նրա անմիջական ղեկավարությամբ: Արդյունքում դպրոցն ունեցավ ստանդարտներին համապատասխան սպորտային համալիր՝ լավագույններից մեկը հանրապետությունում:

Դպրոցի աղջիկների վոլեյբոլի թիմը եղել է Ադրբեջանի չեմպիոն եւ պարգեւատրվել ժամացույցներով:

Շրջանի եւ մարզի պարծանքն են եղել Օնիկ Առաքելյանը, Սերգեյ Գրիգորյանը, Ջոյա Գասպարյանը, Վալենտինա Մինասյանը, Ռազմիկ Ղուկասյանը, Լյուդմիլա եւ Վովա Գալստյանները, Էմմա Օհանջանյանը, Ռոմա Ղուկասյանը, Էդիկ Բաղունցը, Սեւիլ Էդիգարյանը, Սլավա Ավանեսյանը եւ շատ ուրիշներ: Նրանք համարյա բոլորն էլ ստացել են բարձրագույն կրթություն եւ աշխատել ու աշխատում են պատասխանատու եւ կարեւոր բնագավառներում:

Աշխատանքային հաջողությունների համար բազմիցս արժանացել է խրախուսման եւ պարգեւատրումների:

1964թ. ԽՍՀՄ սպորտպետկոմի կողմից արժանացել է «Ֆիզիկական կուլտուրայի գերազանցիկ» կոչման եւ պարգեւատրվել կրծքանշանով: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից 1970թ.՝ Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյա հոբելյանին, պարգեւատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով:

Վոլեյբոլ մարզաձեւը արագ թափով զարգացել է 1960-70-ական թթ. հմուտ, բանիմաց մարզիչներ՝ Յուրի Հարությունյանի եւ Գեորգի Արզումանյանի գլխավորությամբ:

ՅՈՒՐԻ ՄԻՔԱՅԵԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է 1931թ. Ստեփանակերտում:

Ավարտելով №3 միջն. դպրոցը՝ 1952թ. ընդունվել է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ: Ավարտելով այն՝ վերադարձել է հայրենի Ստեփանակերտ եւ սկսել աշխատանքային գործունեությունը, հիմնականում որպես աղջիկների եւ կանանց վոլեյբոլի մարզիչ:

Նրա սաները ունեցել են լավ արդյունքներ՝ ինչպես մարզային, այնպես էլ հանրապետական առաջնություններում, որոնցից են՝ Ամալյա Մարտիրոսյանը, Զոյա Նազարյանը, Ռոզա Արզումանյանը եւ ուրիշներ:

Վոլեյբոլ մարզաձեւի զարգացմանը իրենց աշխատանքով օժանդակել են ավելի երիտասարդ մարզիչներ Ռազմիկ Ստեփանյանը եւ Ամալյա Մարտիրոսյանը: Վաստակաշատ մարզիչ Ռազմիկ Արսենի Ստեփանյանի ներդրումը ԼՂՀ վոլեյբոլի զարգացման բնագավառում բավականին մեծ է:

ՌԱԶՄԻԿ ԱՐՍԵՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ծնվել է 1944թ. նոյեմբերի 1-ին Մարտակերտում: 1970թ. ավարտել է Երեւանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը եւ նույն թվականին աշխատանքի անցել Ստեփանակերտի քաղաքաղաքաբաժնին կից մանկապատանեկան մարզական դպրոցում՝ որպես տնօրեն:

1976-78թթ. աշխատել է քաղաքային սպորտկոմիտեի նախագահի պաշտոնում: Այդ տարիներին քաղաքում զանգվածային սպորտը զգալի աշխուժություն էր ապրում: Նրա անմիջական աջակցությամբ Ստեփանակերտի հավաքական թիմը մասնակցել է «Պրավդա» կենտրոնական

թերթի մրցանակին նվիրված համամիութենական կրոսին, որը տեղի է ունեցել Ղազախստանի մայրաքաղաք Ալմա-Աթայում:

Ռ. Ստեփանյանն այժմ աշխատում է ԼՂՀ ԿՄՍ նախարարության սպորտվարչության ՀՄՊՄԴ-ում՝ տնօրենի պաշտոնում:

Հանձնել է համամիութենական կարգի մրցավարի բոլոր նորմաները: Դատել է մի շարք միջազգային եւ համամիութենական առաջնության մրցումներ Մինսկում, Ռիգայում, Լենինգրադում, Կիեւում, Գոմելում, Սվերդլովսկում /Եկատերինբուրգ/ եւ կենտրոնական այլ քաղաքներում:

Նա՝ որպես առաջին կարգի մարզիկ, մարզի հավաքականի կազմում մասնակցել է հանրապետական բազմաթիվ առաջնությունների ու չեմպիոնատների եւ գրավել մրցանակային տեղեր: Վաստակաշատ մարզիչ Ռազմիկ Արսենի Ստեփանյանի ներդրումը ԼՂՀ վոլեյբոլի զարգացման բնագավառում բավականին մեծ է:

Որպես համամիութենական կարգի մրցավար՝ բազմիցս հանդես է եկել համամիութենական առաջնություններում եւ չեմպիոնատներում, որպես գլխավոր մրցավարի տեղակալ եւ գլխավոր մրցավար՝ ԽՍՀՄ առաջնություն-1977թ. Գոմել քաղաքում, 1978թ.-Մարիոպոլ, ԽՍՀՄ գավաթ-Մոսկվա 1979թ., Վորոշիլովգրադ 1986թ. եւ այլուր:

ԱՄԱԼՅԱ ԵՆՈՔԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1942 նոյեմբերի 27-ին, Ստեփանակերտում: 1950թ. ընդունվել է քաղաքի տասնմեկամյա № 3 դպրոցը: Ուսումնառության տարիներին պարապել է վոլեյբոլի, բասկետբոլի, սեղանի թենիսի եւ աթլետիկայի սեկցիաներում, մասնակցել է մարզային եւ հանրապետական առաջնությունների, գրավել մրցանակային տեղեր: Վերոնշյալ մարզաձեւերից, բացի աթլետիկայից, ունի առաջին սպորտային կարգ:

Դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Երեւանի ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի

սպորտֆակում, որտեղ ընդգրկվել է ինստիտուտի վոլեյբոլի հավաքականի կազմում, մասնակցել հանրապետական եւ համամիութենական մասշտաբի մրցումների: Ունի բազմաթիվ պատվոգրեր եւ դիպլոմներ:

Ավարտելով ինստիտուտը՝ 1966թ. վերադառնում է հայրենի Ստեփանակերտ, աշխատանքի անցնում քաղժողկրթբաժնում՝որպես մեթոդիստ եւ միաժամանակ ՄՊՄԴ-ում՝ վոլեյբոլի մարզիչ: Նրա պատրաստած թիմը, մասնակցելով հանրապետական առաջնությունների, գրավել է առաջնային տեղեր՝ ստանալով մի շարք պատվոգրեր եւ դիպլոմներ համապատասխան մարզական ընկերություններից:

1979 թվականից աշխատում է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում /այժմ՝ ԱրՊՀ/: 1985 թվականից ֆիզիկական դաստիարակության ամբիոնի ավագ դասախոս է:

Մարզում վոլեյբոլի մասսայականացման եւ բարձր ցուցանիշների համար նա պարգեւատրվել է մարզգործկոմին կից ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մարզային կոմիտեի պատվոգրերով:

Արցախի ազգային-ազատագրական պայքարից հետո Ա. Մարտիրոսյանը վերսկսել է մարզչական աշխատանքը աղջիկների (կանանց) շրջանում: Նրա պատրաստած հավաքականը, մասնակցելով բազմաթիվ մրցումների (ԼՂՀ, ՀՀ), գրավել է մի շարք մրցանակային տեղեր. օրինակ՝ 1996թ. Նավասարդյան խաղերում՝ 3-րդ տեղ, 1997, 2004, 2006թթ. ՀՀ գավաթ՝ 3րդ տեղ, ք. Երեւանում ուսանողական խաղեր՝ 1998թ.՝ 2-րդ տեղ, 2003թ.՝ առաջին տեղ, Համահայկական խաղեր (Երեւան) 1999թ.՝ 4-րդ, 2001թ.՝ 3-րդ, 2003թ.՝ 6-րդ տեղեր, Համահայկական խաղեր Իրանի Իսլամական Հանրապետությունում՝ 4-րդ տեղ 1999թ.՝ առաջին տեղ (ոսկե մեդալներ) 2002թ.՝ 2-րդ տեղ: ՀՀ առաջնություններում, ըստ տարիների, թիմը գրավել է IV, III, II մրցանակային տեղեր:

2005թ. Մոսկվայում ավարտել է կոսմետիկայի եւ բուժական ֆիզկուլտուրայի կուրսեր: 2002թ. արժանացել է ՀՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատողի կոչման:

Նրա սաներից աչքի են ընկել Կարինե Հարությունյանը, Կարինե եւ Էլմիրա Վերդյանները, Ռիտա Միքայելյանը, Կարինե եւ Վիոլետա Նիգիյանները, Լենա Խոմենկոն, Անահիտ Մարտիրոսյանը, Ժաննա

Կարապետյանը, Կարինե Բաղրյանը, Մելորա Մնացականյանը, Գայանե Մելքումյանը եւ շատ ուրիշներ:

Վերոհիշյալ մարզիչների ղեկավարած թիմերը մեծ հաջողություններ են ունեցել հանրապետական առաջնություններում՝ գրավելով I, II, III մրցանակային տեղեր: Առանձնապես պետք է նշել *Կարինե Գեորգիի Հարությունյանին*՝ սպորտի վարպետի թեկնածու՝ ծնված 1957թ. Ստեփանակերտ քաղաքում: Ավարտել է №7 միջն. դպրոցը: Հանրապետության հավաքականի կազմում Ժիտոմիր քաղաքում մասնակցելով ԽՍՀՄ-ի գյուղական մարզիկների առաջնությանը՝ գրավել է մրցանակային 3-րդ տեղը եւ արժանացել բրոնզե մեդալի:

Կարինե Հարությունյան

Միեւնույն ժամանակ եղել է հանրապետության երիտասարդական հավաքականի անդամ, ԼՂԻՄ բազմակի չեմպիոն, «Սպարտակ» կամավոր մարզական ընկերության չեմպիոն:

Սկսել է պարապել մարզիչ Ամալյա Մարտիրոսյանի խմբում, այնուհետեւ մարզվել է Յու. Հարությունյանի, ԽՍՀՄ սպորտի պատվավոր վարպետ է. Միխայելովայի մոտ:

ՄԵԼՈՐԱ ՀՐԱՉԻԿԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծնվել է 1971թ. Ստեփանակերտում: №2 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է ԱրՊՀ Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բաժինը եւ այն ավարտել 2005թ.: Բազմիցս դարձել է ԼՂՀ չեմպիոն: 1986թ., մարզի հավաքականի կազմում մասնակցելով Ադրբեջանի դպրոցականների 9-րդ սպարտակիադային, գրավել է մրցանակային 2-րդ տեղը, իսկ 1987թ. Ադրբեջանի կանանց առաջնությունում՝ 3-րդ տեղը: 1999,

2001, 2003թթ. մասնակցել է ՀՀ Համահայկական խաղերին:

2003թ. Իրանի Իսլամական Հանրապետությունում անցկացված Համահայկական խաղերում արժանացել է չեմպիոնի կոչման:

ԳԱՅԱՆԵ ՌՈՒԲԻԿԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Ծնվել է 1975թ. Մարտակերտում: 1992թ. ընդունվել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի դպրոցական բաժինը, 2-րդ կուրսից տեղափոխվել է ԱրՊՀ եւ այն ավարտել 1997թ.: 2002թ. հեռակա կարգով կարմիր դիպլոմով ավարտում է նշյալ ինստիտուտի ՆՁ եւ ՖՊ բաժինը:

1995-1999թթ. եղել է ԼՂՀ հավաքական թիմի ավագ, նաեւ՝ թիմի ռմբարկուն:

1999, 2001թթ. մասնակցել է ՀՀ Համահայկական խաղերին, իսկ 2003թ. Իրանի Իսլամական Հանրապետությունում անցկացված Համահայկական խաղերում դարձել է չեմպիոն:



ԳԵՈՐԳԻ ԱՇՈՏԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Ծնվել է 1935թ. Շուշի քաղաքում: 1958թ. ավարտելով Բաքվի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը, վերադարձել է Ստեփանակերտ, իրեն նվիրել տղամարդկանց վոլեյբոլի զարգացման գործին:

Նա վոլեյբոլի նվիրյալն էր ու ջատագովը: Պատրաստել է բազմաթիվ մարզիկներ, որոնցից են՝ Էդուարդ Միրզոյանը, Վիլեն Կարապետյանը, Ռաֆայել Համբարձումյանը, Վյաչեսլավ Հակոբյանը, Ռազմիկ Ստեփանյանը, Ռազմիկ Հովսեփյանը, Նաիրի Նարիմանյանը, Վլադիմիր

Հարությունյանը, Լյովա Բաղդասարյանը եւ շատ ուրիշներ:

Նրա ղեկավարած թիմում խաղացել են հանրահայտ վոլեյբոլիստներ Ռուդիկ Հակոբջանյանը, Ռոբերտ Խաչատրյանը, Ռոմա Առստամյանը: Տարբեր ժամանակահատվածներում Արզումանյանի գլխավորած թիմում ընդգրկվել են Ռոմա Առստամյանը, Էդիկ Իսրայելյանը /Մարտունի/, եղբայրներ Ռոբերտ եւ Ալբերտ Խաչատրյանները /Շուշի/, Գավրոշ Առստամյանը /Մարտակերտ/, Ալյոշա Արզումանյանը, Վիգեն Սարգսյանը /Ասկերան/:

Գ. Արզումանյանը 20 տարի շարունակ մարզել է ԼՂԻՄ պատանիների տղամարդկանց հավաքական թիմը, որը հանրապետությունում գրավել է առաջնակարգ տեղեր:

Ռուդիկ Երվանդի Հակոբջանյան: Ծնվել 1936թ. Ստեփանակերտ քաղաքում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Վրաստանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտ, խաղացել Վրաստանի հավաքականի կազմում, որտեղ էլ ստացել է ԽՍՀՄ սպորտի վարպետի կոչում:

Նա Լեռնային Ղարաբաղի հանրահայտ մարզիկներից մեկն է: Ընդգրկվելով վոլեյբոլի եւ աթլետիկայի հավաքականների կազմում՝ ունեցել է լավագույն արդյունքներ: Ընտանիքով տեղափոխվելով ք. Երեւան՝ տարիներ շարունակ եղել է Հայաստանի հավաքական թիմի ավագ, արժանացել բազմաթիվ պարգեւների:

Լեռնային Ղարաբաղի վոլեյբոլիստներից է նաեւ

Ռոբերտ Արսենի Խաչատրյանը: -Ծնվել է 1938թ. Շուշիում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի անասնաբուժական ինստիտուտը, խաղացել Հայաստանի «Բուրեվեստնիկ» մարզական ընկերության հավաքական թիմի կազմում:

1958-59թթ. խաղացել է Հայաստանի հավաքականի կազմում: Ինստիտուտն ավարտելուց հետո վերադարձել է Լեռնային Ղարաբաղ, մասնակցել է ԼՂԻՄ եւ հանրապետական առաջնությունների, գրավել մրցանակային տեղեր: Առաջին կարգի վոլեյբոլիստ է: Շուշիի շրջանի վոլեյբոլի հավաքականը բազմիցս արժանացել է

Ռոբերտ Խաչատրյան

մարզի չեմպիոնի կոչման, որի առաջատարներից մեկը եղել է Ռ. Խաչատրյանը:

Ինստիտուտն ավարտելուց հետո վերադարձել է Լեռնային Ղարաբաղ, մասնակցել ԼՂԻՄ եւ հանրապետական առաջնություններին, գրավել մրցանակային տեղեր:

«Սպարտակ» սպորտ-ընկերության հավաքական թիմը. ձախից աջ Կառլեն Աղաջանյան, Ալյոշա Թառայան, Կելսեն Բալայան, Բորիկ Գասպարյան, Յուրի Ասատրյան, Միքայել Բաղդասարյան

ՏՈՒՐԻԶՄ

(ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ)

Արցախում տուրիզմի ձեւավորման եւ զարգացման գործում առաջնակարգ դեր է հատկացվում Սերժ Արմենակի Ազատյանին:

ՍԵՐԺ ԱԶԱՏՅԱՆ

Ծնվել է Ստեփանակերտում 1947թ.: Ավարտել է Ստեփանակերտի № 3 դպրոցը, իսկ 1972թ.՝ Երեւանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը: Եղել է Լեռնային Ղարաբաղի պատանի տուրիստների կայանի տնօրենը հիմնադրման օրից:

Նրա ղեկավարությամբ եւ ակտիվ մասնակցությամբ ծավալվել է մեծ աշխատանք պատանիներին հայրենի բնությանը, պատմաճարտարապետական հուշարձաններին, տուրիզմի հմտություններին ծանոթացնելու ուղղությամբ: Այդ աշխատանքը հայրենասիրական դաստիարակության, հայրենի բնաշխարհի ճանաչման, ֆիզիկական կոփվածություն ստանալու լավագույն միջոցներից մեկն է:

Ս. Ազատյանի ղեկավարությամբ ԼՂԻՄ-ի պատանի տուրիստների թիմերը, մասնակցելով հանրապետական մրցումներին /1977, 1981, 1984թթ./, գրավել են 1-ին տեղը եւ իրավունք ստացել մասնակցելու համամիութենական մրցումներին:

1976թ. ԼՂԻՄ-ի պատանի տուրիստների թիմը մասնակցել է դպրոցականների համամիութենական 2-րդ մրցումներին եւ զբաղեցրել 3-րդ մրցութային տեղը:

1985թ. նրա ղեկավարած թիմը եղել է համամիութենական 5-րդ

մրցումների եզրափակիչ փուլի մասնակից:

Սկսած 1976 թվականից՝ Սերժ Ազատյանի անմիջական ղեկավարությամբ կազմակերպվել է հանրապետությունում միակ վրանային տուրիստական ճամբարը, որտեղ երեխաները ոչ միայն հանգստանում էին, այլեւ սովորում դպրոցական տուրիզմի հրահանգիչների ծրագրով, մասնակցում հայրենի բնաշխարհի ուսումնասիրությանն ուղղված բազմաթիվ արշավների:

Մեծ են նրա ծառայությունները Լեռնային Ղարաբաղում տուրիստական եւ էքսկուրսիոն գործի զարգացման մեջ: Նրա անմիջական նախաձեռնությամբ Ստեփանակերտում հիմնադրվել է տուրիստների քաղաքային ակումբ:

Ս. Ազատյանի ծառայությունները արժանի գնահատական են ստացել կոմերիտմիության կենտկոմի եւ այլ կազմակերպությունների կողմից: Նա եղել է հմայիչ անձնավորություն եւ միշտ սիրված՝ դպրոցականների եւ ընկերների կողմից:

Ավաղ, վաղաժամ մահը /1985թ./ թույլ չտվեց նրան իրականացնել իր բոլոր մտահղացումները:

Արշավի ժամանակ

ՖՈՒՏԲՈԼ

Հուշեր

1924թ. ծնված Առստամ Առստամյանի հիշողություններից ելնելով՝ 1930-ական թվականներին Բաքվից Ղարաբաղ տեղափոխված Արշավիրը (Շաբո) իր երկու եղբայրների հետ, որոնք ունիվերսալ մարզիկներ էին, Ստեփանակերտում թեթեւ աթլետիկայի եւ մարզախաղերի, ֆուտբոլի, վոլեյբոլի տարածողներն են եղել: ԼՂԻՄ այն ժամանակվա ֆուտբոլի հավաքական թիմի կազմում հանդես էին գալիս դարպասապահներ Շուրան (Ալեքսանդրը) եւ Աշոտ Բալասանյանը, աջ պաշտպան՝ Պետկան, կենտրոնական պաշտպան՝ Արմո Ավանեսյանը (ստեփանակերտցիներին հայտնի կիթառահարը), ձախ պաշտպան՝ Ահարոն Թեւանի Բալայանը, կիսապաշտպաններ՝ Սուրեն Խաչատուրովը եւ Ալիկո Հարությունյանը, հարձակվողներ՝ Սարգիս, Հակոբ եղբայրները, Շախունց Սաշա եւ Միշա եղբայրները, կենտրոնական հարձակվող, բանակի սպա՝ Ենգիբարովը:

Հետպատերազմյան տարիներին ֆուտբոլը ԼՂԻՄ-ում դարձավ մասսայական սպորտաձեւ: Բավական է նշել, որ 1952թ. միայն Ստեփանակերտում կային 11 ֆուտբոլային թիմեր՝ «Կրասնոյե զնամյա», «Դինամո», «Սպարտակ», «Տրուդ», «Իսկրա», «Մոլնյա», «Զվեզդա», «Քիմիկ», «Ուրոժայ», «ՄՊՍԴ», «Բուրեվեստնիկ»:

50-ական թվականներից Ղարաբաղի մարզական կյանքում աչքի ընկան այնպիսի տաղանդավոր ֆուտբոլիստներ, որոնք կարող էին այն ժամանակվա մակարդակով Ադրբեջանի հանրապետությունում ճանաչվել որպես լավագույններ, նրանցից էին Հակոբ Պետրոսյանը, Լյովա Հարությունյանը, Սուրիկ Ջաբյանը, Վազիկ Խանանովը, Վաչագան Հովսեփյանը, Բենիկ Աբգարյանը, Ալյոշա Գրիգորյանը, Ալբիկ /Ալբերտ/ Բաղդասարյանը, Սուրեն Բաղալյանը, Գուրգեն /Գոգա/ Հարությունյանը, Սերյոժա /Ջավադոլի/ Հարությունյանը, Գրիշա /Գրիշկա, Արջ ախպեր/ Հակոբյանը, Գրիշա Թովմասյանը, Աշոտ Նաջարյանը, Ալեքսանդր Գրիգորյանը, Միքայել Բաղդասարյանը, Կառլեն Ադամյանը եւ ուրիշներ:



ԿԱՌԼԵՆ ՆԻԿՈԼԱՅԻ ԱԴԱՄՅԱՆ

Ծնվել է 1934թ., ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Հոռաթաղ գյուղում: 1952թ. ավարտել է Ստեփանակերտի № 3 միջն. դպրոցը եւ նույն թվականին ընդունվել Մոսկվայի տեքստիլ ինստիտուտի էներգամեխանիկական ֆակուլտետը: 1957թ. ավարտել է վերոնշյալ ֆակուլտետը եւ նույն թվականին աշխատանքի անցել Երեւանի մահուդի եւ նուրբ բրդյա գործվածքների կոմբինատում՝ որպես վարպետ, այնուհետեւ՝ պետ, կոմբինատի գլխավոր էներգետիկ, գլխավոր մեխանիկ, գլխավոր ինժեներ եւ տնօրեն:

1969թ. նշանակվել է ՀՀ թեթեւ արդյունաբերության հատուկ նախագծային ինստիտուտի բյուրոյի գլխավոր ինժեներ, 1974-ին՝ տնօրեն:

1977թ. նշանակվել է ՀՀ թեթեւ արդյունաբերության փոխնախարար, 1979-ին՝ «Հայպետստանդարտի» վարչության պետի տեղակալ, 1998թ. ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն:

1965-69թթ. ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ասպիրանտուրան, 1973թ. պաշտպանել թեկնածուական թեզ եւ ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 1977-ից դոցենտ է, 1998-ից՝ պրոֆեսոր:

2000թ. նշանակվել է ԱրՊՀ ռեկտոր: 2002թ. շնորհվել է տեխնիկական գիտությունների դոկտորի աստիճան, նույն թվականին նաեւ՝ ակադեմիկոսի կոչում:

Դեռ աշակերտական նստարանից հակում ուներ, սեր ուներ դեպի սպորտը:

1951 թվականից մասնակցելով հանրահայտ մարդկանց անվան մարզային կրոսավազքին՝ գրավել է մրցանակային տեղեր: ԼՂԻՄ լավագույն ֆուտբոլիստներից էր: Սկզբում խաղում էր «Սպարտակ», այնուհետեւ՝ «Կրասնոյե զնամյա» թիմի կազմում՝ որպես ձախ եզրային հարձակվող (11 համարի տակ):

Մասնակցել է Ադրբեջանի «Նեֆտյանիկ» թիմի ուսումնամարզական հավաքին: Բաքվի «Տեմպ»-ի կազմում մասնակցել է ԽՍՀՄ գավաթի մրցումներին:

Մոսկվայում ուսանողական տարիներին խաղացել է «Դինամո»-ի փոխարինողների կազմում:

1974թ. հասարակական հիմունքներով եղել է Երեւանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ:

Իսկ Թեմիկ Արզումանյանը /Արզումանով/, այդ ժամանակ Ադրբեջանի «Նեֆտյանիկ» թիմի կազմում որպես անփոխարինելի դարպասապահ, մասնակցում էր Խորհրդային Միության բարձր լիգայի առաջնություններին:

Ղարաբաղի ֆուտբոլիստները՝ որպես Ադրբեջանի գավաթակիր, մասնակցել են միութենական կոլեկտիվ թիմերի գավաթների խաղարկությանը: Թիմի մարզիչն էր Արտյոմ Մարգարովը /ապագա տաղանդավոր ֆուտբոլիստ Էդուարդ Մարգարովի հայրը/, իսկ կազմում ընդգրկված էր հետագայում հանրաճանաչ մարզիչ Արտյոմ Ֆալյանը:

60-ական թվականներին Ստեփանակերտ են հրավիրվում մարզիչներ Բաքվից, որոնք ծննդով Ղարաբաղից էին՝ Թեմիկ Արզումանյան, Ապրես Խաչատուրով, Նորիկ Գրիգորյան:

Մեծ ներդրում ունեցավ Ն. Գրիգորյանը, որը կարողացավ կազմակերպել լավ թիմ եւ 1961թ. հանրապետությունում գրավել 3-րդ մրցանակային պատվավոր տեղը:

Նույն թվականներից տաղանդավոր ֆուտբոլիստների քանակն ավելանում էր՝ Յաշա Ափիյան, Սուրիկ Հարությունյան, Էռնեստ Բաբախանով, Ռոբերտ Հայրումյան, Արեգ Նաջարյան, Բենիկ Արզումանյան, Բորիկ Թավադյան, Ռոբերտ Ավանեսյան /Ճառա/, Ռուդիկ Ստեփանյան, Ալբերտ Սարգսյան, Ռոբերտ Պետրոսյան, Արմեն Ծատրյան, Էռնեստ Հովսեփյան /հետագայում խաղում էր Կիսլովոդսկ քաղաքի «Նարզան» թիմում/, Ալբերտ Ղուլյան, մի շարք զինծառայողներ՝ մոսկվացիներ Պանչենկոն, Բացալովը, Չեչոտկինը եւ ուրիշներ:

Հետագայում, երբ Ղարաբաղի հավաքական թիմը մտավ վարպետների «Բ», այնուհետեւ՝ «Ա» խումբ, հայտնվեցին շնորհալի ֆուտբոլիստներ Գարի Բալայանը, Վիտալի Շաֆերյանը, Յուրի Կարապետյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Ռոբերտ Արզումանյանը եւ ուրիշներ:

ՌԱԶՄԻԿ ԱՐՇԱԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1939թ. Կիրովաբադում: 1957թ. ավարտել է տեղի № 10մ/դ, նույն տարում ընդունվել Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկում, որն ավարտել է 1960թ.: 1969թ. հեռակա կարգով ավարտել է Երեւանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը: Դեռեւս ուսանողական տարիներին ընդգրկվել էր ԼՂԻՄ հավաքականում, որի կազմում խաղացել է մինչեւ 1961թ.: Նույն թվականին զորակոչվել է խորհրդային բանակի շարքերը եւ մինչեւ 1964թ. խաղացել է Անդրկովկասյան օկրուգի հավաքականի կազմում: Զորացրվելուց հետո, 1965-66թթ. խաղացել է ԽՍՀՄ ֆուտբոլի առաջնության «Բ» խմբում հանդես եկող Նովոռոսիյսկի «Ցեմենտ» թիմում, որի մարզիչն էր Արտյոմ Ֆալյանը:

1966թ. Ա. Ֆալյանի երաշխավորությամբ հրավիրվում է Երեւանի «Արարատ» վետերանների թիմ: 1967թ. ԼՂԻՄ մարզգործկոմի հրավերով վերադառնում է Ստեփանակերտ եւ աշխատում որպես մարզիչ:

Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի զարգացման գործում ունեցած բեղմնավոր աշխատանքի համար պարգեւատրվել է Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:

1996-99թթ. հասարակական կարգով մարզել է ԼՂՀ ֆուտբոլի վետերանների հավաքականը, որը 1997-98թթ. նվաճել է ՀՀ վետերանների չեմպիոնի կոչումը:

ՀՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատող է:

Արցախի ազգային-ազատագրական պայքարի ակտիվ մասնակիցներից էր: Հայրենիքի պաշտպանության մարտերում ցուցաբերած արիության համար պարգեւատրվել է «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով եւ «Արիության համար» մեդալով: Պահեստի գնդապետ է:

1990-95թթ. եղել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Ռազմիկ Պետրոսյանի մարզչական աշխատանքի տարիներին /1967-87թթ./ Ղարաբաղում ձեւավորվեց լավագույն ֆուտբոլիստների մի խումբ, որը մասնակցում էր Խորհրդային Միության առաջնություններին, իսկ նրանցից՝ սպորտի վարպետներ Էդուարդ Բաղդասարյանը /այժմ ՀՀ վաստակավոր մարզիչ/ եւ Գագիկ Ծատրյանը խաղում էին Խորհրդային Միության պատանիների հավաքականի կազմում: Այնուհետեւ Ռ. Պետրոսյանի գլխավորած թիմը 1967թ., ապա 1970թ. Ադրբեջանում գրավել է 3-րդ տեղը, 1970-71թթ. պատանիների առաջնություններում՝ 2-րդ տեղը: Իսկ 1977թ. թիմը դարձել է Ադրբեջանի չեմպիոն: 1970-83թթ. մասնակցել է Խորհրդային Միության առաջնություններին:

ԷԴՈՒԱՐԴ ԱԼԲԵՐՏԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ծնվել է 1951թ. հուլիսի 6-ին: Մանուկ հասակից նա 1.5-2 տարի պարապել է աթլետիկայով, այնուհետեւ որոշել գնաց հոր հետքերով՝ զբաղվել ֆուտբոլով: Մարզիչն էր սկսնակ, բայց արդեն հեղինակություն վայելող Ռազմիկ Պետրոսյանը:

Մի երազանք ուներ՝ դառնալ այնպիսի դարպասապահ, ինչպիսին հայրն էր:

Դեռեւս Ստեփանակերտի № 8 դպրոցի 9-րդ դասարանում սովորելիս, նա դարձավ ԽՍՀՄ առաջնությանը մասնակցող «Ղարաբաղ» թիմի անդամ: Նրան նկատեցին համամիութենական մասշտաբի մասնագետները եւ 18 տարին չբոլորած էդիկն ընդգրկվեց ԽՍՀՄ պատանեկան հավաքականի կազմում, հանրաճանաչ ֆուտբոլիստներ Օ. Բլոխինի, Վ. Գացաեւի եւ ուրիշների հետ մասնակցեց մի շարք միջազգային հանդիպումների:

Այնուհետեւ պատանուն խաղալու հրավիրեցին Բաքվի «Նեւթչիի» կազմում, որտեղ նշանավոր դարպասապահ Սերգեյ Կրամարենկոյի փոխարինողն էր:

Սակայն Էդուարդ Մարգարովի՝ Երեւանի «Արարատ» տեղա-

փոխվելուց հետո, ադրբեջանական իշխանությունների կողմից, ներքին կարգով, կարգադրվեց թիմում հայ չպահել: Այնուհետեւ է. Բաղդասարյանը խաղում էր Տյումենի «Նեֆտյանիկ» եւ Ցելինոգրադի «Դինամո» բանակային թիմերում՝ ավարտելով ծառայությունը ԽՍՀՄ զինված ուժերի կազմում:

1976թ. իրեն նվիրեց հայկական ֆուտբոլին՝ խաղալով Լենինականի «Շիրակ»-ի կազմում: 1977թ. «Արարատ»-ի գլխավոր մարզիչ է. Մարգարովը նրան հրավիրում է իր գլխավորած թիմը: Որպես փառաբանված Ալյոշա Աբրահամյանին փոխարինող՝ «Արարատ»-ի հիմնական կազմում մասնակցել է մի շարք միջազգային մրցումների եւ ԽՍՀՄ ֆուտբոլի գավաթի խաղարկությանը:

1978թ. Լեռնային Ղարաբաղը նվաճեց ԽՍՀՄ առաջնության 2-րդ լիգայում խաղալու իրավունք: Մարզի ղեկավարությունը թիմի կազմն ամրապնդելու նպատակով հրավիրել է «Արարատ»-ի երեք ֆուտբոլիստի՝ Հովհաննես Ջանազանյանին, Սուրեն Մարտիրոսյանին եւ Էդուարդ Բաղդասարյանին:

1978-80թթ. է. Բաղդասարյանը խաղացել է հարազատ թիմի կազմում:

1982թ. մարզչական աշխատանքի է անցել «Երազանք» ֆուտբոլային ակումբում:

Հավաքագրելով 8-9 տարեկան տղաների՝ նրանց հետ 13 տարվա ճանապարհ է անցել՝ մանկական թիմը դարձնելով Հայաստանի առաջնության բարձրագույն խմբի մասնակից: Այդ թիմը հետագայում դառնում է ԼՂՀ ՊԲ թիմը:

Սլավա Գաբրիելյան
սպորտի վարպետ

1995թ. է. Բաղդասարյանն ազատվեց թիմի ղեկավարի աշխատանքից: Շատ դառն ապրումներ ունեցավ, սակայն այդ նույն թվականին մարզիչը նորից հավաքագրեց 7-8 տարեկան տղաների եւ ձեռնամուխ եղավ նոր սերնդի «Երազանքի» ստեղծմանը: Փաստորեն ամեն ինչ սկսեց զրոյից: Վեց տարվա բեղմնավոր աշխատանքից հետո թիմը մասնակցեց ՀՀ պատանեկան առաջնությանը եւ իր ենթախմբում գլխավորեց մրցաշարային աղյուսակը:



Վալերի Հայրիյան
սպորտի վարպետ

2003թ. «Երազանք» թիմը մասնակցել է ՀՀ առաջին լիգայի առաջնությանը:

Երկարամյա ու բեղմնավոր աշխատանքի, ՀՀ եւ ԼՂՀ մարզչական պատիվը բարձր պահելու, ֆուտբոլի զարգացման գործում ունեցած ծառայությունների համար Էդուարդ Ալբերտի Բաղդասարյանին շնորհվել է ՀՀ վաստակավոր մարզիչի կոչում:

Արժանի են հիշվելու ֆուտբոլիստներ Վլադիկ Պետրոսյանը, Վաչագան Հայրապետյանը, Կառլեն Սիմոնյանը, Բենիամին Բաբայանը, Սլավիկ Գաբրիելյանը /երկար տարիներ ԼՂՀ հավաքականի գլխավոր մարզիչ/, Վալերի Հայրիյանը, Իվան Գրիգորյանը, Դավիթ Սողոմոնյանը, Արսեն Ադամյանը, Լյոնիկ Հովհաննիսյանը, Արտյոմ Ժամհարյանը, Միքայել Հայրիյանը, Գագո Գալստյանը, Սաքո Աղաջանյանը /այժմ մարզիչ/, Վլադիկ Ափյանը, Գարուն Աքայանը, Արթուր եւ Ժանիկ Ապրեսյանները, Վաչագան Սարգսյանը եւ ուրիշներ:

ԿԱՌԼԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆ

1982-1987թթ. աշխատել է «Սպարտակ» ԿՄԸ ֆուտբոլի թիմի մարզիչ, 1992-1995թթ. ԼՂՀ ՊԲ «Երազանք» մարզական ակումբի ավագ մարզիչ, «Ղարաբաղ» թիմի ավագ մարզիչ, որը հանդես է գալիս ՀՀ ֆուտբոլի բարձրագույն խմբի առաջնությունում:

Նրա սաներից Արմենակ Ադամյանը խաղացել է Աբովյանի «Կոտայք» թիմում, այնուհետեւ ՀՀ ազգային հավաքականի

կազմում, Միեր Ավանեսյանը՝ Գյումրիի «Շիրակ», այնուհետեւ՝ Երեւանի «Զվարթնոց» թիմերում, Արսեն Սարգսյանը եւ Արթուր Գաբրիելյանը ընդգրկված են «Արարատ»-ի կազմում: Նա ՀՀ վաստակավոր մարզիչ է:

1994թ. առաջին անգամ «Ղարաբաղի» պատանի ֆուտբոլիստները /14,15 տարեկաններ/ ԼՂՀ նախկին նախագահ Արկադի Ղուկասյանի միջնորդությամբ մեկնեցին Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Մեկ շաբաթ լինելով օվկիանոսից այն կողմ՝ ունեցան 3 հանդիպում տեղի պատանի ֆուտբոլիստների հետ: Ամեն խաղի ժամանակ ԱՄՆ-ի դրոշի կողքին ծածանվում էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական դրոշը:

Այդ հանդիպումը կազմակերպել էր «Ինտերսպորտ» կազմակերպության ղեկավար Պաստեր Պեշիտոն /ազգությամբ իտալացի/:

Լավագույն եւ վաստակաշատ մրցավարների շարքին են դասվում Ահարոն Բալայանը, Արմո Ավանեսյանը, Ալյոշա Գրիգորյանը, Ատվերիկ Մուսայելյանը, Ալյոշա Բալայանը /համամիութենական կարգի մրցավար/, Կոստանդին Բաղալյանը եւ ուրիշներ:

ԱՐՄԵՆ ԱՐՄՈՅԻ ԱԴԱՄՅԱՆ

Ծնվել է 1967թ. Ստեփանակերտում: Մինչեւ 8-րդ դասարանը սովորել է №5 միջն. դպրոցում, այնուհետեւ ուսումը շարունակել է Երեւանի ֆուտբոլի թեքումով գիշերօթիկ դպրոցում: 1984թ. ՀՀ պատանիների հավաքականի կազմում դարձել է ԽՍՀՄ չեմպիոն, 1985-88թթ. խաղացել է Ստեփանակերտի «Ղարաբաղ» թիմի կազմում, 1988-92թթ. - Աբովյանի «Կոտայք» /1-ին լիգա/ կազմում, 1994թ.-«Նովոռոսիյսկ» /Ռուսաստան/ կազմում, 1995-2000թթ. «Կրիստալ Սմոլենսկի» կազմում /1-ին լիգա/: 1998թ. խաղացել է ՀՀ հավաքականի կազմում, 2000-2001թթ - «Սալամ» Զխարտա /Լիբանան/ թիմում՝ 2001-2003թթ. «Սալյուտ» Բելգորոդ /Ռուսաստան/ թիմում: 2004թ. սովորել է Մոսկվայի բարձրագույն մարզչական դպրոցում: 2004թ.

աշխատել է Ուկրաինայի «Դարիդա» ֆուտբոլային ակումբում՝ որպես գլխավոր մարզիչ, 2005թ.՝ Աշտարակի «Միկա» ֆուտբոլային ակումբում՝ որպես գլխավոր մարզիչ:

2005-2006թթ. «Միկա» ֆուտբոլային ակումբը նրա գլխավորությամբ դարձել է ՀՀ գավաթակիր:

2006թ. թիմը դարձել է ՀՀ սուպեր գավաթակիր: Այդ թիմը խաղացել է ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկություններում:

Ներկայումս ղեկավարում է «Միկա» ակումբի ֆուտբոլի դպրոցը եւ «Միկա-2» թիմի գլխավոր մարզիչը:

ԱՐՏԱՇԵՍ ԱՐՄՈՅԻ ԱԴԱՄՅԱՆ

Ծնվել է 1970թ. Ստեփանակերտում: Մինչեւ 8-րդ դասարանը սովորել է № 8 միջն. դպրոցում, այնուհետեւ ուսումը շարունակել է Երեւանի ֆուտբոլի թեքումով գիշերօթիկ դպրոցում:

Խաղացել է ներքոհիշյալ ֆուտբոլային ակումբների թիմերում.

1. 1987-89թթ. «Ղարաբաղ», Ստեփանակերտ, ԽՍՀՄ առաջնություն /2-րդ լիգա/
2. 1989-90թթ. «Կոտայք», Աբովյան, ԽՍՀՄ առաջնություն /1-ին լիգա/
3. 1990-92թթ. «Արարատ», Երեւան, ԽՍՀՄ առաջնություն /բարձրագույն լիգա/
4. 1993-96թթ. «Սպարտակ», Պլովդիվ /Բուլղարիա/
5. 1997-99թթ. «Կրիստալ», Սմոլենսկ /Ռուսաստան/
6. 1999-2001թթ. «Սալամ» Զխարտա /Լիբանան/
7. 2002-2003թթ. «Ախա» Ալե /Լիբանան/
8. 2003-2006թթ. խաղացել է Աշտարակի «Միկա» թիմում, խաղացել է նաեւ ՀՀ հավաքականի կազմում:

ՀՀ կրկնակի գավաթակիր է եւ սուպերգավաթակիր:

Ներկայումս աշխատում է Աշտարակի «Միկա» ֆուտբոլային

ակումբում՝ որպես մարզիչ:

Երկու եղբայրներն էլ մարզիչ Յուրի Անդրեյի Ավագյանի սաներն են:



ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԱՎԱԳԻ

Ծնվել է 1940թ. հունվարի 12-ին Ստեփանակերտում: 1969թ. ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետի՝ ավտոմատների եւ հեռուստամեխանիկայի բաժինը:

1971-2000թթ. աշխատել է Հայաստանի հեռուստառադիոպետկոմում՝ որպես մեկնաբան: Հայաստանի եւ ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ է /1974թ./:

1994 թվականից «Ֆրանս-ֆուտբոլ» հանդեսի թղթակիցն է Հայաստանում, «Ոսկե գնդակ» եւ «Աստղ» մրցույթների հանձնաժողովների անդամ: Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատող /1997թ./, «Ֆուտբոլ +» թերթի հիմնադիր, գլխավոր խմբագիր /1996-2002թթ./, 2002-ից՝ նույն թերթի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նախագահ: Եղել է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի քարտուղար /1998-2003թթ./, գործկոմի անդամ /1998-2006թթ./, գործադիր տնօրենի տեղակալ /2002-2004թթ./, 2000-ից՝ «Արմենիա» հեռուստաընկերության ֆուտբոլային մեկնաբան:

Պարգեւատրվել է Միջազգային օլիմպիական կոմիտեի պատվոգրով /2001թ./:

1953թ. ԼՂԻՄ-ի չեմպիոն եւ գավաթակիր Ղարմետաքսկոմբինատի «Կրասնոյե զնամյա» թիմը: Աջից ձախ՝ թիմի ղեկավար՝ Սիմոնյան, թիմի պետ՝ Սուրեն Բաղալյան, դարպասապահ՝ Գրիգորի (Գրիշկա), Սերյոժա Հարությունյան (Զավադոզլի), Բենիկ Աբգարյան, Վազգեն Աթայան, Նիկոլայ Պետրոսյան, Միքայել Բաղդասարյան, Մամիկոն Հարությունյան, Վանիկ Հարությունյան

ԼՂԻՄ-ի հավաքականը (1960-70-ական թթ.) Աջից ձախ՝ խաղացող մարզիչ՝ Նորիկ Գրիգորյան, դարպասապահ՝ Արեգ Նաջարյան, Ռոբերտ Ավանեսյան, Միքայել Բաղդասարյան, Աշրավ Ալլախվերդով, Բենիկ Գրիգորյան, Վահիկ Նարիմանով, դարպասապահ Ալբերտ Ղուլյան, Ռոբերտ Հայրումյան, Բորիս Թավադյան, Յուրի Ավանեսյան, Վ. Հարությունյան

ԼՂԻՄ-ի հավաքականի եւ վետերանների հավաքականի հանդիպման սկիզբը: Կենտրոնում՝ գլխավոր մրցավար Արմո Ավանեսյան, մրցավարներ՝ աջից՝ Վազիկ Խանանով, ձախից՝ Էդուարդ Միրզոյան

1977թ. Ադրբեջանի չեմպիոն
Երկրորդ շարքում՝ աջից 4-րդը՝ գլխավոր մարզիչ Ռազմիկ Պետրոսյան

2-րդ շարքում ձախից 2-րդը՝ Արտաշես Ադամյան («Սպարտակ» Պլովդիվ, Բուլղարիա)

Վերեւի շարքում. ձախից՝ թիմի պետ՝ Արտաշես Ադամյան, աջից՝ գլխավոր մարզիչ՝ Արմեն Ադամյան (ՀՀ գավաթակիր թիմը)

40-ական թթ. լավագույն ֆուտբոլիստներից՝
Բաբկեն Նարիմանի Գյուլիքյոխյանը

Ստեփանակերտի մարզադաշտը
(ստադիոն 1952թ.):
Աջից գնդակին հարվածում է Միքայել
Բաղդասարյանը, ձախից մրցավար՝ Ալբերտ
Գրիգորյան

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ (ՍՊՈՐՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ) ՆԱԽԱԳԱՀՆԵՐ (ՊԵՏԵՐ)

ԲԱԼԱՅԱՆ ԳԱՐԻ ԱՀԱՐՈՆԻ
(1997-1999թթ.)
ԼՂՀ ֆ/ս վաստակավոր գործիչ, ՀՀ ֆ/ս վաստ. աշխատող

ԳԱԼՍՏՅԱՆ ՋԱԼԱԼ ԽԱՉԱՏՈՒՐԻ
(1940-1949թթ.)



ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ ԱՐՏԱՇԵՍԻ
(1967-1971թթ.)

ԴԱՎԹՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՍԵՐԳԵՅԻ
(1996-1997թթ.)

ԿԱՐԱԲԵԿՈՎ ՄԻՔԱՅԵԼ
ՀԱՅՐԱՊԵՏԻ
(1951-1956թթ.)



ՀՈՎՍԵՓՅԱՆ ՌԱԶՄԻԿ
ԳԵՐԱՍԻՄԻ
1999-ից առ այսօր
(ՀՀ ֆ/ս վաստ. աշխատող)

ՀԱՅՐԻՅԱՆ ՀՐԱՆՏ
ՄԻՔԱՅԵԼԻ
(1971-1972թթ.)

ՄԻՐԶՈՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ
ԱՍՇԱՏՈՒՐԻ
(1993-1996թթ.)
(ՀՀ ֆ/ս վաստ. աշխատող)

ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՇՄԱՎՈՆ
ԱՎԱՆԵՍԻ
(1950-1951թթ.)

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՊԻԿՈՆ
ԹԵՎԱՆԻ
(1956-1965թթ.,
1972-1986թթ.)

ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ
ՎԱՀԱՆԻ
(1986-1993թթ.)

ՕՍԻՊՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
ՍԵԴՐԱԿԻ
(1965-1967թթ.)

ԼՂՀ (ՀՀ) ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐ



ԱՎԱՆԵՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ
ԱՇՈՏԻ
(ԼՂՀ)

ԲԱԲԱՅԱՆ ՅՈՒՐԻ
ԱՐՄԵՆԱԿԻ
(ՀՀ)

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
ՎԱՉԱԳԱՆԻ
ԼՂՀ ֆ/ս վաստ. գործիչ,
ՀՀ ֆ/ս. վաստ. աշխ.

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱԼԻԽԱՆ
ՆԵՐՍԵՍԻ
(ԼՂՀ)

ՀՀ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՄԱՐԶԻՉՆԵՐ

ԱՌՍՏԱՄՅԱՆ ԱՐՏՈ
ՌՈՒԲԵՆԻ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ
ԱԼԲԵՐՏԻ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԼԵՈՆԻԴ
ՄԻՔԱՅԵԼԻ
(ԽՍՀՄ վաստ. մարզիչ)

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ
ԻՍԱՀԱԿԻ

ՄԻՐԶՈՅԱՆ ԷՌՆԵՍՏ
ՌԱՖԱՅԵԼԻ

ՋԱՆՅԱՆ ՇԱՀԵՆ
ՆԻԿՈԼԱՅԻ

ՍԻՄՈՆՅԱՆ ԿԱՌԼԵՆ
ԱՆԴՐԱՆԻԿԻ



ՔՈՉԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ
ԼԵՎՈՆԻ
(ՌԴ Ֆ/Ս վաստ. մարզիչ)

ՀՀ Ֆ/Ս ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՕՆԻԿ
ԻՇԽԱՆԻ

ԲԱԲԱՅԱՆ ԿՈԼՅԱ
ԱԲՐԱՀԱՄԻ

ԲԵԳԼԱՐՅԱՆ ԿԱՄՈ
ԽՈՐԵՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՐԳԵՅ
ԽՈՐԵՆԻ

ՂԱՐԱՅԱՆ ԲՈՐԻՍ ՍԱՐԳՍԻ
(սպորտի վարպետի
թեկնածու)

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՄԱԼՅԱ
ԵՆՈՔԻ



ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌԱՉՄԻԿ
ԱՐՇԱԿԻ

ՍԱՂՅԱՆ ԲՈՐԻՍ
ՁԻՆԱՎՈՐԻ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐՈՍՄԱՅՍՏԵՐՆԵՐ

ԱՂԱԲԱԲՅԱՆ ՆԱԻՐԱ
ԴԻԼԱՆԻ
(սպորտի վաստ. մարզիչ)

ԷԼՄԻՐԱ ՍԿՐԻՊՉԵՆԿՈ

ՎԻՏԱԼԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
գրոսմայստեր

ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏՆԵՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԻԼՅԻՉԻ

ԱՆԴՐՅԱՆ ԱԶԱՏ
ԱՐՏՅՈՒՇԱՅԻ

ԱՎԱՆԵՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԲԱԼԱՅԱՆ ՋՈՐԻ ՀԱՅԿԻ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
ԳԱԲՐԻԵԼԻ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՍԼԱՎԱ
ՄՈՒՇԵՂԻ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍԱՄՍՈՆԻ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԵԿ
ՌՈԲԵՐՏԻ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՇՈՏ
ՅԱԿՈՎԻ

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿ
ԵՐՎԱՆԴԻ

ՀԱՅՐԻՅԱՆ ՎԱԼԵՐԻ
ԳՈՒՐԳԵՆԻ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՈՎԻԿ
ՍԼԱՎԻԿԻ
(սպ. միջ. վարպետ)

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԲԵՆԻԿ ՇՄԱՎՈՆԻ

ՂԱՐԱՄՅԱՆ ԱՆԴՐԵՅ
ՍՈՒՐԵՆԻ

ՄԻՆԱՍՅԱՆ ՎԱԳԻՖ
ՌՈՄԱՅԻ



ՄԻՐԶՈՅԱՆ ՄԱՐՏԻՆ
ԷՌՆԵՍՏԻ



ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ ԱՐԵՆ
ՍԵՐԳԵՅԻ

ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ՎՅԱՉԵՍԼԱՎ ՍԵՐԳԵՅԻ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՎԱԼԵՐԻ
ՄԱՐՏԻՐՈՍԻ



ԴԱՆԻԵԼՅԱՆ ՅՈՒՐԻ
ԵՐՎԱՆԴԻ

ԹԱՌԱՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
ԱՎԱՆԵՍԻ

ԹԱՎԱԴՅԱՆ ՅՈՒՐԻ
ԳԱՐԵԳԻՆԻ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ՌԱԴԻԿ
ՋԻՆԱՎՈՐԻ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՇՈՏ
ԱՍԾԱՏՈՒՐԻ
սպորտի վարպետ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԻՆԵ
ԳԵՈՐԳԻԻ

ՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԱԼԵՐԻ
ԵՐՎԱՆԴԻ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՅՈՒՐԻ
ՍԱՐԳՍԻ

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ՌԱՖԱՅԵԼԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ
ԳՐԻԳՈՐԻԻ

«ԴԻՆԱՄՈ» ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Դինամո» մարզական ընկերությունը ԼՂԻՄ-ի ներքին գործերի վարչության (այժմ ԼՂՀ ոստիկանության) հասակակիցն է: Սկզբնական շրջանում հիմնական նպատակը եղել է անձնակազմի ֆիզիկական եւ մարտական պատրաստությունը պահել բարձր հիմքերի վրա: 1927-30թթ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի միլիցիայի անձնակազմը շրջանային եւ քաղաքային բաժիններում ստեղծել է ֆիզկուլտուրային կոլեկտիվներ՝ հասարակական հիմունքներով, բացել հրաձգության, ծառայողական սամբո ըմբշամարտի, վոլեյբոլի, ֆուտբոլի, թեթեւ ատլետիկայի, ծառայողական բազմամարտի մարզական խմբակներ: 1950-ական թվականներին ֆուտբոլի հավաքական թիմը բազմիցս դարձել է ԼՂԻՄ եւ Հանրապետության չեմպիոն: 1960-ական թվականների վերջին ընկերության նախագահ Իվան Մամիկոնի Խոջաեւի, հրահանգիչ Միքայել Ալեքսանդրի Սաչատուրովի առաջարկությամբ հարց է բարձրացվել կառուցել մարզական բազա: Այս առաջարկությունը շարունակել եւ իրագործել են ընկերության նախագահ Արտեմ Խաչատուրի Պողոսյանը եւ փոխնախագահ Բորիս Սարգսի Ղարայանը: 1963թ. սկսվել է մարզադահլիճի կառուցումը, 1966թ. մայիսին՝ կայացել դահլիճի հանդիսավոր բացումը:

Պետք է նշել, որ մարզադահլիճի կառուցման, ինչպես նաեւ աշխատակիցների աշխատավարձի, մարզական միջոցառումների անցկացման բոլոր ծախսերը կատարվել է համամիութենական «Դինամո» մարզական ընկերության նյութական միջոցներով (մինչեւ ԽՍՀՄ-ի փլուզումը):

«Դինամո» մարզադահլիճը դարձել է սպորտի դարբնոց Ստեփանակերտ քաղաքում ֆիզկուլտուրայի եւ սպորտի մասսայականացման, պատանիների եւ երիտասարդների մարզական վարպետության բարձրացման համար:

1966 թվականից «Դինամո» մարզական ընկերությունում գործել են մարզական խմբակներ՝

- վոլեյբոլ (մարզիչներ՝ Յուրի Հարությունյան, Գեորգի Արզումանյան),
- բասկետբոլ (մարզիչ՝ Ռոբերտ Համբարձումյան),
- ֆուտբոլ (մարզիչ՝ Ռազմիկ Պետրոսյան),
- թեթեւ ատլետիկա (մարզիչներ՝ Նոբել Ավագյան, Միքայել Բաղդասարյան),
- մարմնամարզություն (մարզիչներ՝ սպորտի վարպետ Վլադիմիր Ավանեսով, Լեոնիդ Զաքարյան),
- բռնցքամարտ (մարզիչներ՝ սպորտի վարպետներ Եգոր Օհանյան, Հենրիխ Ավանեսով, Յուրի Թավադյան),
- սուսերամարտ (մարզիչ՝ Բորիս Ղարայան),
- ազատ ոճի ըմբշամարտ (սպորտի վարպետ Յուրի Բաբայան, Ալիխան Մուրադյան, սպորտի վարպետ Սերգեյ Գրիգորյան, Էդուարդ Ավանեսյան),
- հունահռոմեական ըմբշամարտ (մարզիչներ՝ Բորիս Բարսեղյան, Վյաչեսլավ Բաղդասարյան),
- սամբո (մարզիչներ՝ Եղիշե Քոչարյան, Էռնեստ Միրզոյան),
- ձյուդո (մարզիչներ՝ Հենրիխ Արսենյան, Գեորգի Պուգաչով),
- ծանրամարտ (մարզիչներ՝ Յուրի Մեսրոպյան, Յուրի Մելքումյան),
- հրաձգություն (մարզիչներ՝ Արմավիր Ավագյան, Միքայել Գաբրիելյան):

Ի դեպ, 1966 թվականին «Դինամո» մարզական ընկերության հանրապետական առաջնությունում, հանրապետական աթլետիկայի առաջնությունում բարձրացատկում 1-ին տեղն է գրավում Գեորգի Շահրամանյանը (1մ 70սմ արդյունքով), 100մ վազքահեռավորությունում 11.0 արդյունքով 1-ին տեղն է գրավում Միքայել Բաղդասարյանը:

Նշված մարզաձեւերի մարզիկների զգալի մասը դարձել է սպորտի վարպետի թեկնածու, տարիներ շարունակ համալրել ԼՂԻՄ հավաքական թիմերը, գրավել թիմային եւ անվանական մրցանակային տեղեր հանրապետական եւ «Դինամո» ընկերության համամիութենական մրցումներում: Թեթեւ ատլետներ Վլադիմիր Տիխոնովը (Կուսամբեկով), Էդուարդ Հայրապետյանը բազմաթիվ անգամ դարձել են ԼՂԻՄ, Ադրբեջանի Հանրապետության չեմպիոններ, համամիութենական մրցաշարերի մրցանակակիրներ, լրացրել սպորտի վարպետի նորման:

ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ 2-ՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Պետք է նշել, որ մինչեւ պատերազմը շրջանում գոյություն են ունեցել առանձին մարզաձեւեր՝ բռնցքամարտ, մարմնամարզություն: Նրանցից նշանավոր մարզիկներ հանդես էին գալիս մարզային ու հանրապետական առաջնություններում: Պատերազմից հետո էլ ավելի շատացան մարզաձեւերը ու նրանցում պարապողների քանակը: 50-ական թվականներին շրջանի ֆիզկուլտուրայի եւ սպորտի զարգացման ու մասսայականացման գործում իր մեծ ներդրումն ունեցավ շրջկենտրոնում տեղակայված սահմանապահ զորամասը: Վերջինս շրջանի մարզիկներին օգնում էր մարզական գույքով, համալրում շրջանի հավաքականի կազմը տարբեր մարզաձեւերով, տրամադրում մարզական խաղահրապարակներ եւ այլն:

Այդ ժամանակահատվածում մարզական աշխատանքները կազմակերպում եւ ղեկավարում էր շրջանում գործող «Կոլտնտեսական» գյուղական կամավոր սպորտընկերությունը, որն էլ մինչեւ 60-ական թվականները ղեկավարել է Նիկոլայ Սադխյանը: Ընկերությունը ֆինանսավորվում էր շրջանի կոլտնտեսությունների կողմից տրված անդամավճարների հաշվին:

60-ական թվականներին ֆիզկուլտուրայի եւ սպորտի զարգացմանը նոր թափ հաղորդվեց: Շրջանային գործկոմին կից ստեղծվեց ֆիզկուլտուրայի եւ սպորտի կոմիտե, որի նախագահ նշանակվեց Մեխակ Օհանջանյանը, իսկ «Կոլտնտեսականը» վերանվանվեց «Մեհսուլ» գյուղական կամավոր սպորտընկերության, որի նախագահ նշանակվեց Համլետ Ղազարյանը: Սկսեցին գործել սպորտային խմբակներ՝ ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի, ս/թենիսի, թ/աթլետիկայի, շախմատի, ըմբշամարտի ձեւերով: Պատրաստվեցին վոլեյբոլի, բասկետբոլի, ֆուտբոլի խաղահրապարակներ: Այդ ժա-

մանակահատվածում չկային տիպային ֆուտբոլի խաղադաշտ եւ սպորտային դահլիճ: «Մեհսուլ» կամավոր սպորտընկերությունում Հ. Ղազարյանի՝ այլ աշխատանքի տեղափոխվելու կապակցությամբ, աշխատել են նաեւ Կիմա Մայիլյանը, Նելսոն Գասպարյանը: Ինչպես նախկին աշխատողներն էին պատմում, մարզական աշխատանքների կազմակերպման համար մեծ օգնություն էին ցուցաբերում շրջխորհրդի եւ շրջկոմի ղեկավարները: Ասում են, թե շրջկոմի քարտուղար Մ. Գաբրիելյանը մասնակցել է շրջկենտրոնում կազմակերպված ծանրամարտի մարզային առաջնությանը՝ ծանր քաշային կարգերում եւ գրավել մրցանակային տեղ:

Մարզային եւ հանրապետական առաջնություններում մեր թիմերի ունեցած հաջողություններին մեծապես նպաստում էր սահմանապահ զորամասի՝ սպորտի գծով տեսուչ Վադիմ Գուլյաեւը: Վերջինս օգնում էր ինչպես թիմերի կոմպլեկտավորմանն, այնպես էլ մարզական գույքով եւ հանդերձանքով ապահովելու հարցում:

70-80-ական թվականներին շրջանի ֆիզկուլտուրայի եւ սպորտի զարգացման համար կարեւոր նշանակություն ունեցավ նոր կադրերի ընդունումը աշխատանքի: «Մեհսուլ» գյուղական կամավոր սպորտընկերությունում աշխատել են մարզում եւ հանրապետությունում աչքի ընկած մարզիկներ Արտո Բաբայանը, Մարտիկ Ղուկասյանը, Ասիֆ Սարգսյանը: Այս ժամանակահատվածում Հադրութ ավանում պատրաստվեցին ֆուտբոլի խաղադաշտ, սպորտային դահլիճ, վոլեյբոլի, ձեռքի գնդակի խաղահրապարակներ: Նոր մարզական խաղահրապարակներ պատրաստվեցին նաեւ շրջանի Տող, Մեծ Թաղեր, Առաքել, Բանաձոր, Ազոխ, Ղրախտիկ, Տումի գյուղերում:

Շրջանի մեծահասակների եւ դպրոցականների թիմերը մրցանակային տեղեր էին գրավում ձեռքի գնդակ, ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, ս/թենիս մարզաձեւերից: 1980թ. Մեխակ Օհանջանյանի՝ այլ աշխատանքի տեղափոխելու կապակցությամբ Հադրութի շրջկոմին կից ֆիզկուլտուրայի եւ սպորտի կոմիտեի նախագահ նշանակվեց Սերժիկ Ղուկասյանը:

Օլիմպիադան, որը առաջին անգամ էր անցկացվում ԽՍՀՄ-ի մայրաքաղաք Մոսկվայում, խթանեց ֆիզկուլտուրայի եւ սպորտի զարգացումը հանրապետություններում, այդ թվում նաեւ՝ ինքնավար մարզերում ու շրջաններում:

Պատրաստվեցին նոր մարզադահլիճներ, ֆուտբոլի խաղադաշտեր, մարզական խաղահրապարակներ, ս/թենիսի խաղասենյակներ, շրջանային պիոներական տանը կից սկսեցին գործել շախմատի, շաշկու, բասկետբոլի, վոլեյբոլի, ֆուտբոլի խմբակներ: Բնակչության շրջանում Հադրութ ավանում 1986 թվականից սկսեցին գործել կանանց եւ տղամարդկանց «Զարկերակ» առողջարարական խմբերը: Մեծ ուշադրություն էր դարձվում ֆիզկուլտուրայի ղեկավար աշխատողների որակավորման բարձրացմանը: 1986թ. սպորտի կոմիտեի նախագահ Ս. Ղուկասյանը գործուղվեց Մոսկվա՝ մեկամսյա որակավորման դասընթացների:

60-70-ական թվականներին համեմատաբար կային հնարավորություններ գույքի ձեռքբերման, շրջանային առաջնությունների անցկացման ուղղությամբ: Այդ ժամանակահատվածում «Մեհսուլ» գյուղական կամավոր սպորտընկերությունում աշխատել են Էդիկ Պետրոսյանը, Ալեքսանդր Զաբյանը, Կարեն Միրզոյանը, Սերգեյ Սարգսյանը:

Մարզում մրցանակային տեղեր էին գրավում բասկետբոլ, ս/թենիս, վոլեյբոլ, ձեռքի գնդակ, ըմբշամարտ, թ/աթլետիկա, ֆուտբոլ, շախմատ մարզաձեւերից: Շախմատի մարզաձեւի զարգացման գործում իր մեծ ներդրումը ունի Գեորգի Ավանեսյանը, որը շրջանային պիոներական տանը աշխատում էր որպես շախմատի խմբակավար:

Շրջանի ֆիզկուլտուրայի եւ սպորտի աշխատողները, բոլոր մարզիկները մեծ ակտիվությամբ են մասնակցել Արցախյան գոյամարտին: Նրանցից շատերը զոհվել, իսկ մի մասն էլ վիրավորվել եւ հաշմանդամ են դարձել: Պատերազմի ընթացքում ոչնչացվել է

մարզական գույքը, հրետակոծությունից քարուքանդ են արվել Ուխտաձորի, Տողի մարզադահլիճները: Հայտնի պատճառով այդ տարիներին շրջանային առաջնություններ չեն կազմակերպվել, սակայն պետք է ասել, որ հաճախ եղել են դեպքեր, երբ հրետակոծության ժամանակ անց են կացվել ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի ընկերական հանդիպումներ:

Արցախյան գոյամարտից հետո, չնայած ֆիզկուլտուրայի եւ սպորտի մասնագետների խիստ կարիք էր զգացվում, այնուամենայնիվ կարողացան կարճ ժամանակահատվածում վերակազմավորել թիմերը եւ մասնակցել ԼՂՀ առաջնություններին ու գրավել մրցանակային տեղեր՝ բասկետբոլ, վոլեյբոլ մարզաձեւերով:

Շրջանի ֆիզկուլտուրայի եւ սպորտի աշխատողների ղեկավարումն ու կազմակերպումը դրվեց վերամիավորված կրթության, երիտասարդության հարցերի եւ սպորտի բաժնում գտնվող սպորտի գծով մասնագետի վրա:

2000 թվականից հետո շրջանային առաջնություններն սկսեցին ֆինանսավորվել: Սպորտը մասսայականացվեց շրջանի գյուղական համայնքներում: Առաջնությունների մեծ մասը անցկացվում է շրջանի գյուղերում: Գյուղական թիմերը հանրապետությունում մրցանակային տեղեր էին գրավում բազկամարտ, թ/աթլետիկա, ս/թենիս, վոլեյբոլ /աղջիկներ, տղաներ, տղամարդիկ, կանայք/ ՊԱՊ բազմամարտ, «Կաշվե գնդակ» մարզաձեւերով: Շրջանի ֆիզիկուլտուրայի եւ սպորտի զարգացման համար կարեւոր նշանակություն ունեցավ 2003թ. մանկապատանեկան մարզադպրոցի բացումը: Շրջանի վարչակազմի ղեկավարի հրամանի համաձայն՝ մարզադպրոցի տնօրեն նշանակվեց Ս. Ղուկասյանը: ԿՄՍ բաժնին պատկանող մարզական գույքի օգտագործմամբ հաճալրվեցին մարզական խմբակները եւ որպես մարզիչներ նշանակվեցին դպրոցների ֆիզկուլտուրայի ուսուցիչները: Նույն թվականին մանկապատանեկան մարզադպրոցի տնօրենի պաշտոնում նշանակվեց ԽՍՀՄ սպորտի վարպետ Գեղամ Բարեյանը: Վերջինս մեծ աշխատանք է կատարում

բռնցքամարտ սպորտաձեւի զարգացման համար: Հանրապետությունում գործող բռնցքամարտի միակ խմբի անդամները հաճախակի են ընկերական հանդիպումներ անցկացնում ՀՀ տարբեր մարզական ակումբների սաների հետ: Հանրապետական առաջնություններին հիմնականում մասնակցում են մարզադպրոցի սաները: Մարզադպրոցը ունի բռնցքամարտի, ըմբշամարտի դահլիճներ եւ ս/թենիսի խաղասենյակ:

Բացի դրանից, շրջանի ֆիզկուլտուրայի եւ սպորտի զարգացման գործում իրենց մեծ ներդրումն ունեն ֆիզկուլտուրայի ուսուցիչներ Արտավազդ Խաչյանը /Բանաձոր/, Սամվել Շադյանը /Հին Թաղեր/, Ռաֆիկ Ժամհարյանը /Դրախտիկ/, Լեւոն Ղուկասյանը /Թաղուտ/, Գրիգորի Ավետիսյանը /Տող/, Ռոբերտ Ավետիսյանը /Մեծ Թաղեր/, Արմեն Բաղդասարյանը /Հադրութ/:

Շրջանից մի շարք մարզիկներ մեծ ճանաչում են գտել մարզում, հանրապետությունում եւ մասնակցել են ԽՍՀՄ-ի որոշ առաջնությունների:



ԱՐՏՈ ԲԱԲԱՅԱՆ

Ծնվել է 1946թ.: Ֆուտբոլ, հանդբոլ - ԼՂԻՄ եւ հանրապետության չեմպիոն: Իր մեծ ներդրումն է ունեցել շրջանում ֆիզկուլտուրայի եւ սպորտի զարգացման գործում: Աշխատել է որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ Հադրութի միջնակարգ դպրոցում:



ԱՍԻՖ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1952թ.: Մարզում, հանրապետությունում բազմիցս գրավել է մրցանակային տեղեր: Երեւանի ֆիզկուլտուրայի տեխնիկումի հավաքականում հանդես է եկել ՀՀ առաջնություններում եւ գրավել մրցանակային տեղեր: 1977-1980թթ. աշխատել է «Մեհսուլ» գյուղական սպորտընկերության նախագահ: Այժմ աշխատում է Հադրութի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ: Նրա սաները հանրապետությունում բազմիցս գրավել են մրցանակային տեղեր տարբեր մարզաձեւերից:

ՄԵԽԱԿ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

Ծնվել է 1929թ. Խծաբերդ գյուղում: 1959-79թթ. աշխատել է որպես ֆիզկուլտուրայի եւ սպորտի կոմիտեի նախագահ: Մեծ ներդրում ունի շրջանում ֆիզկուլտուրայի եւ սպորտի զարգացման ու մասսայականացման գործում: Շրջանի ֆուտբոլի, հանդբոլի, բասկետբոլի, ս/թենիսի, վոլեյբոլի թիմերը մրցանակային տեղեր էին գրավում մարզային եւ հանրապետական առաջնություններում: Իսկ իր նախաձեռնությամբ Հադրութ ավանում կատարաստվեցին ֆուտբոլի խաղադաշտ, բասկետբոլի, վոլեյբոլի, հանդբոլի խաղահրապարակներ: Այսօր էլ շրջանի ֆիզկուլտուրայի եւ սպորտի վետերանները մեծ հանգանքով են խոսում Մեխակ Օհանջանյանի ու նրա կատարած աշխատանքի մասին:

ՍԵՐԺԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ծնվել է 1956թ. Թաղուտ գյուղում: Ավարտել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը եւ ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Սպորտով /ըմբշամարտով/ սկսել է զբաղվել տեխնիկումում՝ մարզիչ Ա. Մուրադյանի մոտ: ԼՂԻՄ բազմակի չեմպիոն է, հանրապետության գյուղական մարզական ընկերության չեմպիոն եւ մրցանակակիր: 1976-1978թթ. ծառայել է Բաքվի ՀՕՊ-ի օկրուգի սպորտային վաշտում: Ռուսաստանի Պերմի, Ուլյանովսկի, Վոլգոգրադի զոնային առաջնություններում գրավել է առաջին եւ երկրորդ մրցանակային տեղեր: ԽՍՀՄ զինված ուժերի առաջնությունում գրավել է երրորդ մրցանակային տեղը:

1980թ. փետրվարից ղեկավարում է Հադրութի շրջանի ֆիզկուլտուրայի եւ սպորտի աշխատանքները:

ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ



Սիարոն Դադայան
Շուշիի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության եւ սպորտի գլխավոր տեսուչ (սպորտի գծով)

Խորհրդային տարիներին սպորտը զարգացման բարձր աստիճանի էր հասել ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում:

Սպորտի զարգացումը Շուշիի շրջանում նկատելի առաջընթաց արձանագրեց XX դարի 50-ական թվականներին: Այդ տարիներին /մինչեւ 1988թ./ Շուշիի հայոց դպրոցում աշխատում էր Գրիգոր Լալայանը, որը եղել է հայտնի մարզիկ /մարմնամարզիկ/ եւ ֆիզկուլտուրայի ուսուցիչ: Նույն դպրոցում ավելի քան 30 տարի ֆիզկուլտուրա է դասավանդել նաեւ Շմավոն Սարգսյանը:

Շուշիի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի զարգացման բնագավառում մեծ ներդրում է ունեցել նաեւ Աբել Աբրահամյանը, ով ֆիզինստիտուտն ավարտելուց հետո՝ 1956-1983թթ., աշխատել է որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ Շուշիի մանկավարժական ուսումնարանում:

Աբել Աբրահամյանը շարունակում է մասնագիտական փորձն ու եռանդն այսօր էլ ներդնել մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակության եւ պատրաստության գործում:

60-ական թվականներին աչքի էր ընկնում Շուշի քաղաքի տղամարդկանց վոլեյբոլի թիմը, որը եղել է Լեռնային Ղարաբաղի չեմպիոն: Ի դեպ, թիմի կազմում էին Արսեն Խաչատրյանի 2 զավակները՝ Ռոբերտը եւ Ալբերտը: Նույն ընտանիքի երրորդ եղբայրը՝ Միքայել Խաչատրյանը 60-ական թվականներին եղել է ս/թենիսի գծով մրցանակակիր, Դաղստանի զինվորական կայազորի չեմպիոն:

Քաղաքի «Մեհսուլ» մարզական ընկերության տնօրենը շուրջ 2 տասնյակ տարիների ընթացքում եղել Լազո Մուսայելյանը:

Մ.Վ. Բաղդասարյանը ծնվել է 1935թ. մարտի 9-ին ԼՂԻՄ Ստեփանակերտ քաղաքում:

Սկզբնական կրթությունն ստացել է տեղի թիվ 2 դպրոցում, որն ավարտել է 1953թ.: Մեկ տարի Ղարմետաքսկոմբինատում աշխատելուց հետո 1954թ. ընդունվում եւ 1958թ. ավարտում է Երեւանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը՝ մասնագիտությամբ «Ֆիզիկական կուլտուրա»:

ԼՂԻՄ կառավարությանն աջակցելով սպորտի պետական կոմիտեի հրավերով վերադառնում է հայրենիք եւ աշխատանքի անցնում Ստեփանակերտի թիվ 1 միջն. դպրոցում, որպես ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ, միեւնույն ժամանակ նաեւ ՍՊՄ դպրոցում, որպես թեթեւ աթլետիկայի մարզիչ:

1967-1971թթ. աշխատել է մարզային ժողկրթության բաժնում դպրոցական տեսչի պաշտոնում, 1972թ.-ից մինչեւ 1996թ. աշխատել է թիվ 1 միջն. դպրոցում որպես ֆիզկուլտուրայի ավագ ուսուցիչ: 1996-2001թթ. աշխատել է սպորտի վարչությունում՝ որպես կազմակերպչական աշխատանքի եւ մարզական միջոցառումների բաժնի վարիչ:

2001-2007թթ. աշխատել է ԱրՊՀ ՆՁ եւ ՖՊ ամբիոնի վարիչի պաշտոնում, իսկ 2007թ.-ից՝ դասախոս (դոցենտ): Տարբեր թերթերում եւ ամսագրերում հանդես է եկել, Արցախում ֆիզկուլտուրայի ու սպորտի մասսայականացման ու զարգացման հարցերի շուրջ:

Երկարամյա մանկավարժական աշխատանքային տարիների ընթացքում արժանացել է ուսուցիչ - մեթոդիստի, տարվա լավագույն ուսուցչի, տարվա լավագույն մարզչի, XX դարի լավագույն մանկավարժի, հանրապետական կարգի մրցավարի, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատողի, ԼՂՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործիչի կոչումներին: